

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Երևան

2018

ՀՏԴ 614.2(042.3)

ԳՄԴ 51.1

Ա. 720

Ա. 720 Առողջապահության համակարգի գործունեության գնահատում, Հայաստան 2018/

Դ. Անդրեասյան, Ա. Բազարյան, Ս. Մանուկյան, Գ. Մուրադյան, Ա. Թորոսյան, Շ. Սարգսյան

ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ,
2018. էջ 227:

Առողջապահության համակարգի գործունեության գնահատման (ԱՀԳԳ) 2018 թվականի իններորդ

զեկույցը ներկայացնում է ՀՀ առողջապահության համակարգի գերակա հիմնախնդիրները՝ բնակչության առողջության վիճակը, մահացության և հիվանդացության առավել տարածված պատճառները, առողջապահության համակարգի կադրային ներուժի առկայությունը, բաշխվածությունը, հիվանդանոցային մասնագիտացված բաժանմունքների առկայությունը, գործունեությունը, ռեսուրսները, մասնավորապես՝ մահճակալային ֆոնդը:

Զեկույցն ամփոփում է Հայաստանի առողջապահության համակարգի գործունեության նվաճումներն և բացերը, որոնք ուղղված են համակարգի կարողությունների զարգացմանը և հզորացմանը:

ԱՀԳԳ զեկույցը նախատեսված է առողջապահական համակարգի կազմակերպիչների, առողջապահության ոլորտի փորձագետների, բժիշկների և առողջապահական համակարգի հարցերով զբաղվող և հետաքրքրվող այլ մասնագետների համար: ՀՏԴ

ՀՏԴ 614.2(042.3)
ԳՄԴ 51.1

ISBN 978-9939-879-33-8

© ՀՀ ԱՆ «Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ - 7 -

2 ՆԱԽԱԲԱՆ..... - 9 -

3 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ..... - 11 -

4 ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - 16 -

Բնակչության թվաքանակը և կազմը..... - 16 -

Բնակչության բնական վերարտադրություն..... - 18 -

7 ՄԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐ..... - 20 -

Մահվան առավել տարածված պատճառները մարզերում..... - 25 -

Մահվան առավել տարածված պատճառների միջազգային համեմատություն..... - 26 -

Երեխաների, մանկական, նորածնային և մայրական մահացություն..... - 26 -

Հիվանդությունների տարածվածության միտումները..... - 29 -

8 ԲՈՒԺՄԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ՄՊԱՌՈՒՄ..... - 33 -

Հոսպիտալացման մակարդակն ըստ մարզերի..... - 36 -

Ամբուլատոր հաճախումներն ըստ մարզերի - 38 -

9 ԲՈՒԺՄԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿ..... - 39 -

Քաղցկեղների վաղ հայտնաբերում..... - 39 -

Կրծքագեղձի քաղցկեղի հայտնաբերում..... - 41 -

Չարորակ նորագոյացությունների հիմնախնդիրներ - 43 -

Հիվանդանոցային մահաբերություն..... - 46 -

Կանանց և երեխաներին մատուցվող առողջապահական ծառայությունների որակ..... - 47 -

Ծննդյան և հետծննդյան շրջանի բարդություններ - 47 -

Կեսարյան հատումներ..... - 48 -

Մոր և մանկան առողջության պահպանում..... - 49 -

10 ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՊԵՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺ - 51 -

Առողջապահական համակարգի կադրային ներուժի պատրաստում..... - 52 -

Առողջապահական համակարգի կադրային ներուժի բաշխում..... - 56 -

Բժիշկների և բուժքույրերի կազմը և բժիշկ/բուժքույր հարաբերակցությունը - 56 -

Բժիշկների և բուժքույրերի բաշխման մարզային համամասնություն..... - 57 -

*Կադրային ներուժի բաշխումն առողջության առաջնային պահպանման և հիվանդանոցային բժշկական
 օգնություն իրականացնող հաստատություններում*..... - 58 -

Առողջապահական համակարգում բժիշկների թափուր աշխատատեղեր..... - 60 -

11 ԲԱԺԻՆ 2..... - 63 -

12 ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ..... - 63 -

Մահճակալների տարեկան միջին զբաղվածությունը՝ օրական կտրվածքով..... - 64 -

Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը - 66 -

Հայաստանի մարզերի ընդհանուր նկարագիրը - 68 -

Հիվանդանոցային ցուցանիշների դինամիկան Հայաստանում, 2010-2017.....	- 71 -
13 ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	- 74 -
14 ԲԱԺԱՆՍՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ, 2017.....	- 82 -
Անփոփ տվյալներ.....	- 82 -
Հիվանդանոցային բաժանմունքների գործունեության ցուցանիշների համեմատական նկարագիրն ըստ մարզերի.....	- 86 -
Ալերգոլոգիական մանկական և մեծահասակների բաժանմունք.....	- 86 -
Ակնաբուժական՝ մանկական և մեծահասակների.....	- 86 -
Աղեստամոքսային՝ մանկական և մեծահասակների.....	- 87 -
Արյունաբանական՝ մանկական և մեծահասակների.....	- 87 -
Գինեկոլոգիական՝ մանկական և մեծահասակների.....	- 87 -
Երիկամաբանական՝ մանկական և մեծահասակների.....	- 89 -
Թերապևտիկ.....	- 89 -
Թմբաբանական.....	- 90 -
Թոքաբանական՝ մանկական և մեծահասակների.....	- 91 -
Ինֆեկցիոն՝ մանկական.....	- 91 -
Ինֆեկցիոն մեծահասակներ.....	- 93 -
Կրծքային վիրաբուժության՝ մանկական և մեծահասակների.....	- 94 -
Հղիների և ծննդոգնության.....	- 95 -
Հղիության պարոլոգիաների.....	- 97 -
Հոգեբուժական՝ մանկական և մեծահասակների.....	- 99 -
Ճառագայթային ռենտգենոլոգիական.....	- 101 -
Մանկաբուժական.....	- 101 -
Մաշկավեներական, միկրոփիրաբուժական, ներզատաբանական մեծահասակների.....	- 103 -
Նյարդաբանական՝ մանկական և մեծահասակների.....	- 103 -
Նյարդավիրաբուժական՝ մանկական և մեծահասակների.....	- 105 -
Ոսկրածուծի փոխպատվաստում.....	- 106 -
Ուռուցիկական՝ մանկական և մեծահասակների.....	- 106 -
Ուռուցքաբանական՝ մանկական և մեծահասակների.....	- 107 -
Պլաստիկ վիրաբուժության.....	- 107 -
Պրոկտոլոգիական, ռևմատոլոգիական՝ մեծահասակների, Սուր թունավորման.....	- 107 -
Ստոմատոլոգիական՝ մանկական և մեծահասակների.....	- 108 -
Սրտաբանական.....	- 108 -
Սրտային վիրաբուժության.....	- 110 -
Վերականգնողական՝ մանկական և մեծահասակների.....	- 110 -
Վերակենդանացման՝ մանկական և մեծահասակների.....	- 111 -
Վիժումների կատարում.....	- 112 -

Վիրաբուժական՝ մանկական.....	- 113 -
Վիրաբուժական՝ մեծահասակների.....	- 113 -
Վնասվածքաբանական՝ մանկական և մեծահասակների.....	- 115 -
Տուբերկուլյոզ՝ մանկական և մեծահասակների.....	- 116 -
Ցերակային ստացիոնար.....	- 117 -
Փսիխոսոմատիկ.....	- 118 -
Քիթ-կոկորդ-ականջ՝ մանկական և մեծահասակների.....	- 119 -
Օրթոպեդիկ մանկական և մեծահասակների.....	- 120 -
Ֆիզիոթերապևտիկ.....	- 121 -
15 ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔՆԵՐՈՒՄ.....	- 122 -
16 ԲԱԺԱՆՍՈՒՆՔՆԵՐՈՒՄ ՄԱՀԱԿԱԼՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՔԱՆԱԿԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2010-2017.....	- 129 -
Մահճակալների տարեկան միջին քանակը մարզերում.....	- 129 -
Հիվանդանոցային բաժանմունքների մահճակալների ընդհանուր քանակի դինամիկան Հայաստանում.....	130 -
Մահճակալի տարեկան միջին զբաղվածության դինամիկան Հայաստանում (շտեմարան՝ 2-1000 ՄՖ).....	133 -
Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակի դինամիկան Հայաստանում.....	- 138 -
17 ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՄԱՀԵՐ.....	- 144 -
Հիվանդանոցային մահերի քանակը, 2010-2017.....	- 144 -
Հիվանդանոցային մահերն ըստ հիվանդությունների, 2010-2017.....	- 148 -
Հիվանդանոցային մահաբերությունը Հայաստանում և մարզերում.....	- 153 -
Հիվանդանոցային մահաբերությունը Հայաստանում ըստ հիվանդությունների.....	- 154 -
Հիվանդանոցային մահաբերությունը ըստ հիվանդությունների մարզերում.....	- 161 -
18 ՄԱՀԱԿԱԼԱՅԻՆ ՖՈՆԴԸ և ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ.....	- 171 -
Ընդհանուր նկարագիր.....	- 171 -
19 ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԱՐԶԵՐՈՒՄ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ, 2017.....	- 174 -
Արագածոտն.....	- 174 -
Արմավիր.....	- 174 -
Արարատ.....	- 175 -
Գեղարքունիք.....	- 175 -
Երևան.....	- 176 -
Լոռի.....	- 178 -
Կոտայք.....	- 178 -
Շիրակ.....	- 179 -
Սյունիք.....	- 179 -
Վայոց Ձոր.....	- 180 -
Տավուշ.....	- 180 -
20 ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԲԱԺԱՆՍՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՀԱԿԱԼՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ.....	- 181 -
Արագածոտն. Բաժանմունքներում մահճակալների քանակի դինամիկան.....	- 181 -
Արմավիր. Բաժանմունքներում մահճակալների քանակի դինամիկան.....	- 182 -
Արարատ. Բաժանմունքներում մահճակալների քանակի դինամիկան.....	- 183 -
Գեղարքունիք. Բաժանմունքներում մահճակալների քանակի դինամիկան.....	- 184 -

<i>Երևան. Բաժանմունքներում մահճակալների քանակի դինամիկան.....</i>	<i>- 185 -</i>
<i>Լոռի. Բաժանմունքներում մահճակալների քանակի դինամիկան</i>	<i>- 189 -</i>
<i>Կոտայք. Բաժանմունքներում մահճակալների քանակի դինամիկան.....</i>	<i>- 190 -</i>
<i>Շիրակ. Բաժանմունքներում մահճակալների քանակի դինամիկան.....</i>	<i>- 191 -</i>
<i>Սյունիք. Բաժանմունքներում մահճակալների քանակի դինամիկան.....</i>	<i>- 193 -</i>
<i>Վայոց Ձոր. Բաժանմունքներում մահճակալների քանակի դինամիկան.....</i>	<i>- 194 -</i>
<i>Տավուշ. Բաժանմունքներում մահճակալների քանակի դինամիկան</i>	<i>- 194 -</i>
<i>Բաժանմունքների մահճակալների միջին քանակն ըստ տարածաշրջանների</i>	<i>- 196 -</i>
21 ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՄԱՐԶԱՅԻՆ և ԵՐԵՎԱՆԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ.....	- 198 -
22 ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԾՆՆԴՕԳՆՈՒԹՅԱՆ և ՀՂԻՈՒԹՅԱՆ ՊԱԹՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ	- 199 -
23 ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՄԱՀԵՐԻ ԲԱՑԱՐՁԱԿ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԲԱՇՈՒՄԸ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ, 2010-2017.....	- 201 -
24 ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՄԱՀԵՐԸ ԵՎ ՄԱՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ .-	203 -
25 ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՄԱՀԵՐԻ ՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԵՎ ՏԱՐԻՆԵՐԻ-	216 -
26 ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ԸՍՏ ՀՄԴ-10.....	- 224 -

1 ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱԻ	Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության Ազգային Ինստիտուտ
ԱԱՀ	Առողջապահության ազգային հաշիվներ
ԱԲ-ԵՏՇ	«Առողջություն բոլորին» (Health for All) Եվրոպական տվյալների շտեմարան
ԱԾԻԳ	Առողջապահության ծրագրերի իրականացման գրասենյակ
ԱԿՆ	Առողջապահության կադրային ներուժ
ԱՀԳԳ	Առողջապահության համակարգի գործունեության գնահատում
ԱՀԶ	Առողջապահության համաշխարհային զեկույց
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՇՀՀ	Արյան շրջանառության համակարգի հիվանդություններ
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԱՊՔ	Արգանդի պարանոցի քաղցկեղ
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԱՏՎԱԿ	Առողջապահության տեղեկատվական վերլուծական ազգային կենտրոն
Բ.թ	Բացարձակ թիվ
ԴՊ	Դժվարանում է պատասխանել
ԵՄ-26	Արևելյան Եվրոպայի 26 երկրների համախմբություն
ԵՄ-27	Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի 27 երկրների համախմբություն
ԵՊԲՀ	Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան
ԶԳ	Զարկերակային գերճնշում
ԶԳՀ	Զարկերակային գերճնշմամբ բնութագրվող հիվանդություններ
ԶՃ	Զարկերակային ճնշում
ԿՔ	Կրծքագեղձի քաղցկեղ
ՀԶՆ	Հազարամյակի զարգացման նպատակներ
Հ.թ.	Հարաբերական թիվ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՄԴ-10	Հիվանդությունների միջազգային դասակարգիչ, 10-րդ վերանայում
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք

ՄԶԳ	Մարմնի զանգվածի գործակից
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսային ծրագիր
ՇԴ	Շաքարային դիաբետ
ՉՆ	Չարորակ նորագոյացություններ
ՊԱԳ	Պետական առողջապահական գործակալություն
ՊԱՊ	Արգանդի պարանոցի քսուքի բջջաբանական հետազոտություն՝ ըստ Պապանիկոլաուի (ՊԱՊ թեսթ)
ՌԳ	Ռիսկի գործոն
ՍԻՀ	Սրտի իշեմիկ հիվանդություն
ՍՍԻ	Սրտամկանի սուր ինֆարկտ
ՈԻԱՀ	Ուղեղանոթային հիվանդություններ
ՈԻԱԿ	Ուռուցքաբանության ազգային կենտրոն

ԱՀԳԳ հրատարակությունում ներկայացված տվյալների օգտագործման դեպքում խնդրում ենք փաստաթղթին կատարել հետևյալ հղումը. «Հայաստանի առողջապահության համակարգի գործունեության գնահատում, 2018», Երևան, 2018թ.:

2 ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ ԱՆ ԱՍԻ-ն ամեն տարի հրատարակում է «Առողջություն և առողջապահություն» տարեգիրքը, որտեղ, ի թիվս այլ առողջապահական տվյալների, առկա է Հայաստանում հիվանդանոցային բուժօգնության վերաբերյալ հարուստ վիճակագրություն: Տարեգրքում առկա վիճակագրությունը, որպես կանոն տրված է ըստ մարզերում և տարածաշրջաններում հիվանդանոցների քանակի և այդ կտրվածքներով ընդհանրացված հիվանդանոցային ռեսուրսների և գործունեության ցուցանիշների:

Հայաստանում հիվանդանոցային ռեսուրսների և բուժօգնության վիճակի ավելի խորը և բովանդակային ընկալման նպատակով, այս հատվածում, շեշտադրումը կատարվել է հիվանդանոցային մասնագիտացված բաժանմունքների առկայության, դրանց ռեսուրսների և բուժօգնության վրա:

Բնակչության առողջության պահպանման ու բարելավման նպատակով իրականացվող կանխարգելիչ միջոցառումներն աշխարհի ցանկացած երկրի առողջապահական համակարգի առաջնահերթ ու կարևորագույն խնդիրներից են: Առողջ և բարեկեցիկ կյանքով ապրող բնակչությունը լուրջ երաշխիք է տվյալ երկրի տնտեսության զարգացման գործընթացում:

ՀՀ կառավարությունը խիստ կարևորելով այս հանգամանքը, մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահում բնակչության առողջության պահպանմանն ուղղված, ինչպես գործող, այնպես էլ՝ նոր մշակվելիք ծրագրերի իրականացումը: Առողջ հասարակության առկայությամբ է պայմանավորված առողջապահական համակարգի ֆինանսական բեռի նվազումն ու երկրի տնտեսության զարգացումը:

Գաղտնիք չէ, որ ցանկացած երկրի առկա ֆինանսական միջոցներն անսահմանափակ չեն, և չի բացառվում բյուջեում հնարավոր ճեղքերի առաջացումը, որը սակայն, չպետք է խոչընդոտի բնակչության առողջության պահպանմանն ուղղված անհրաժեշտ ներդրումների հատկացմանը:

Առողջապահական համակարգի ամենամյա բյուջեից հատկացումների հայտերը պետք է ներկայացվեն հիմնավորված և խիստ անհրաժեշտությամբ պատճառաբանված: Դրա համար պետք է կարևորել համակարգում առկա բացերի հաղթահարմանն ուղղված հիմնական գործառույթները:

2017-2018թթ. ՀՀ առողջապահության ոլորտում իրականացվող բարեփոխումներն ուղղված են համակարգի արդիականացմանն ու բնակչության առողջության բարելավմանը, ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարում առաջացած բեռի նվազեցման նպատակով սիրտանոթային հիվանդությունների, չարորակ նորագոյացությունների, շաքարային դիաբետի վաղ հայտնաբերման ու վերահսկման միջոցառումների իրականացմանը, արյունաբանության և ուռուցքաբանության ասպարեզում բժշկական օգնության ու սպասարկման որակի բարելավմանն ու ենթակառուցվածքների ստեղծմանը, ինչպես նաև բնակչության առողջապահական կարիքների գնահատմանը: Առողջապահության համակարգի գերակա խնդիրներից է նաև միջգերատեսչական համագործակցությունը, որը հնարավորություն կընձեռնի կենտրոնական և մարզային մակարդակներում կյանքի կոչելու բնակչության առողջությանն առնչվող ռազմավարական ծրագրերի իրականացումը:

Առողջապահական համակարգի գործունեության բարելավման և արդյունավետ կառավարման համար խիստ անհրաժեշտ է էլեկտրոնային միասնական առողջապահական տեղեկատվական համակարգի ներդրումը՝ թափանցիկ և ճշգրիտ տվյալների հավաքագրման և գնահատման համար, որն առանցքային կարևորություն կունենա հետագա բարեփոխումների, հստակ միջոցառումների ռազմավարության և քաղաքականության մշակման համար:

ՀՀ Առողջապահության նախարարությունը, հավատարիմ մնալով Կառավարության ստանձնած պարտավորություններին, պատասխանատվություն է կրում բժշկական սպասարկման մատչելիության, ֆինանսական ռիսկերի նվազեցման, բնակչության գոհունակության բարձրացման և այլ ոլորտների հետ միջգերատեսչական համագործակցության արդյունքում բնակչության առողջության պահպանման և բարելավման համար՝ հենվելով ԱՀԿ-ի «Առողջություն 2020» համաեվրոպական նոր քաղաքականության վրա:

Առողջապահական համակարգի գործունեության գնահատումը (ԱՀԳԳ) գործիք է, որը հնարավորություն է ընձեռում դիտարկելու և գնահատելու առողջապահական համակարգի կառավարման արդյունավետությունը, բարեփոխումների առաջընթացն ու ազդեցությունը բնակչության առողջության վրա: Համակարգի ճիշտ գնահատումը բարեփոխման բանալի է և փաստարկ հետագա ներդրումների համար:

3 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԱՀԳԳ-ն համակարգի բարելավման, ինչպես նաև հետագա ներդրումները հիմնավորող փաստարկ է, բարեփոխումների իրականացման, բնակչության ակնկալիքներն արդարացնելու միջոցով սոցիալական բարեկեցության ապահովման գրավական:

ԱՀԳԳ-ն արտացոլում է առողջապահական համակարգում իրականացվող գործառույթները, բնակչության առողջության վիճակը, հիվանդությունների բեռը և դրանց զարգացմանը նպաստող ռիսկի գործոնների տարածվածությունը, բարեփոխումների իրականացման նպատակով՝ միջգերատեսչական համագործակցության արդյունավետությունը:

Շնորհիվ ԱՀԳԳ-ի, հնարավոր է դառնում իրատեսորեն գնահատել առողջապահական համակարգի դերն ու նշանակությունն , և պատասխանել հասարակությանն հետաքրքրող երեք հիմնական հարցերի.

- Ինչպե՞ս կարելի է բարելավել բնակչության առողջությունը, տնտեսական և սոցիալական բարեկեցությունն առողջապահական համակարգում կատարվող ներդրումների միջոցով:
- Ի՞նչը կարող է երաշխավորել առողջապահական համակարգերի արդյունավետ գործունեությունն ապագայում:
- Ինչպե՞ս կարելի է ճիշտ կառավարել և բարելավել առողջապահական համակարգի գործունեությունն առավելագույն արդյունավետությունն ապահովելու ակնկալիքով:

Առողջապահական համակարգի գործունեության տիրույթը բազմաշերտ է, ուստի խիստ կարևոր գործառույթ է կառավարման օղակների (կենտրոնական, տարածաշրջանային) և հանրային ու մասնավոր հատվածների ինտեգրումը: Համակարգում իրականացվող բարեփոխումներն ենթադրում են պարտականությունների հստակ սահմանում, կարգավորման արդյունավետ և ճկուն միջոցների կիրառում՝ գիտակցելով, որ առողջության առանցքային շատ գործոններ գտնվում են առողջապահության ոլորտից դուրս, հետևաբար անհրաժեշտ է ճիշտ համակարգված միջգերատեսչական համագործակցություն:

Վերջին տարիներին Եվրոպական տարածաշրջանի երկրներում, ինչպես և Հայաստանում, մեծացել է առողջապահական համակարգի գործունեության գնահատման անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Առողջապահական համակարգի գործունեությունը կախված է տեղեկատվության հավաստիությունից, որը հնարավորություն է ընձեռում գնահատելու համակարգի աշխատանքի արդյունքը: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը հեշտացնում է տվյալների հավաքագրումը և վերլուծությունը, թույլ է տալիս առավել ստույգ գնահատել ծախսերը, եկամուտներն ու առկա իրավիճակը թիրախային որոշումներ կայացնելու համար: Վերլուծության տվյալներն անհրաժեշտ է այնպես ներկայացնել, որ թե՛ հիվանդները, թե՛ մասնագետները և թե՛ առողջապահության կազմակերպիչները կարողանան ստանալ իրենց հետաքրքրող և օգտակար տեղեկատվությունը:

Ինչ խոսք, այս խնդրի լուծումը հեշտ չէ, քանի որ պահանջվում է դիտարկել մեծաթիվ գործառույթներ և դրանք կապակցել էլքային տվյալների արդյունքների հետ: Ճիշտ ընտրված հստակ ցուցանիշներ և իրենց առանձնահատկությամբ և մասնավոր ազդեցության առկայությամբ, կարող են հասկանալի դարձնել վերջնական նպատակի իրականացման ճանապարհին, թե ինչ առաջընթաց է արձանագրել գործառույթը, ինչպես նաև նշմարել քայլերը, որոնք հարկավոր է ձեռնարկել արդյունավետության բարձրացման համար:

Գործունեության գնահատման արդյունավետությունը կախված է առողջապահական համակարգի նպատակների իրագործման օգտակարությունից, ուստի այն չի կարող լինել մեկուսի՝ իրական բարելավում ապահովող քաղաքական լծակներից: Մեծ զգուշություն է պահանջվում գործունեության բարելավմանն ուղղված միջոցառումների մշակման և կիրառման գործընթացում, ինչպես նաև կարճաժամկետ նպատակների իրականացմամբ չսահմանափակվել և նորարարությունները չանտեսել:

Առողջապահության նախարարության կառավարման գործառույթի մաս են կազմում արժեքավոր և վստահելի տվյալների հավաքագրումը, դրանց վերլուծության թափանցիկությունը, ստացված արդյունքների համակարգված կիրառման խթանումը՝ պլանավորման և գնահատման ժամանակ, ինչպես նաև իրազեկված հանրային քննարկումների օժանդակումը: Այս բոլոր գործոնների միասնությունը լավագույնս կարող է նպաստել առողջապահական համակարգի նպատակների իրականացմանը և դրանց միջև բոլոր փոխզիջումների կառավարմանը:

Առողջապահական համակարգի կազմակերպիչները պատասխանատու են ոչ միայն համակարգի արդյունավետության գնահատման, այլև վերջինիս արդյունքում համակարգի գործունեության հետագա բարելավման համար:

Յուրաքանչյուր առողջապահության համակարգ ինքն է որոշում, թե ինչպես և ինչ միջոցառումներ իրականացնել բնակչության առողջության բարելավման ու սոցիալական բարեկեցության ապահովման համար:

2008թ. հունիսին ԱՀԳ Եվրոպական տարածաշրջանի 53 պետության ներկայացուցիչներ Էստոնիայում ընդունեցին «Առողջապահական համակարգերն առողջության և բարեկեցության համար» փաստաթուղթը (Տալլինի Խարտիա), որում որպես ամրագրված առաջին քայլ համարվում էր անդամ պետությունների կողմից պարբերաբար իրենց երկրների առողջապահական համակարգերի գործունեության գնահատման գործընթացի մշակումն ու կազմակերպումը:

Հայաստանում ԱՀԳԳ իրականացվել է հետևյալ նպատակներով.

- Գնահատել առողջապահական համակարգի հիմնական նպատակների իրագործման մակարդակը և կատարել համակարգում տեղի ունեցող փոփոխությունների մոնիթորինգ:
- Ապահովել առողջապահական համակարգի գործունեության ամփոփիչ գնահատում:
- Առողջապահության ոլորտի ազգային քաղաքականության ուշադրության կենտրոնում պահել առողջապահական համակարգի գործունեություն:
- Նպաստել առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության բարձրացմանը:
- Հնարավոր դարձնել առողջապահական համակարգի արդյունավետության գնահատումը:
- Կարևորել առողջապահական համակարգի գործունեության բարելավմանն ուղղված գործառույթների և աշխատանքների գերակա բնագավառները:
- Խթանել առողջապահական համակարգում տվյալների առավել լիարժեք որոնմանն ու հավաքագրմանը և դրանց ճիշտ վերլուծությանը:

Որևէ համակարգի գործունեությունը գնահատելու խիստ կարևոր պայման է ճիշտ ինդիկատորների ընտրությունը, որը կատարվում է ԱՀԳԳ ռազմավարության շրջանակում:

ԱՀԳԳ ինդիկատորների ընտրության և դրանց փաթեթի մշակման նախապայմաններն են.

- Ինդիկատորների կապն առողջապահական համակարգի բարեփոխման նպատակների և ռազմավարության հետ:
- Տվյալների առկայությունը և հավաստիությունը:

Համակարգի գործունեությունը գնահատելիս դիտարկվել են ինդիկատորների արդյունքներն ըստ տարիների և ուսումնասիրվել է վերջիններիս միտումները: Ստացված արդյունքները համեմատվել են նաև ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրերում կամ ՀԶՆ-ում սահմանված նպատակային ցուցանիշների հետ:

ԱՀԳԳ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔ

ԱՀԳԳ համար օգտագործվել են ՀՀ բուժհաստատությունների կողմից ներկայացվող վիճակագրական և ընտրանքային հետազոտության տվյալները:

Հայաստանում գրանցված բնակչության առողջության և առողջապահական համակարգի գործունեության արդյունքները համեմատվել են մի շարք երկրների ցուցանիշների և Եվրոպական երկրների երեք համախմբությունների բնակչության նկատմամբ կշռված միջինների հետ: Համեմատության համար օգտագործված երկրներն են Վրաստանը, Ադրբեջանը և Թուրքիան՝ որպես Հայաստանի տարածաշրջանային անմիջական հարևաններ: Երկրների օգտագործված խմբերն ընդգրկում են Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) 12 պետությունների համախմբությունը, ԵՄ անդամները մինչև 2004 թվականի մայիս (ԵՄ 15), այդ թվում, ԵՄ-13 (ԵՄ անդամները 2004 թվականի մայիսից հետո (ԵՄ 13), ԱՀԿ Եվրոպական տարածաշրջան: Միջազգային համեմատությունները, որպես կանոն, կատարվել են Եվրոպական «Առողջություն բոլորին» (Health for All) տվյալների շտեմարանի (HFA-ՏՇ) հիման վրա, որտեղ մատչելի ամենավերջին արդյունքները վերաբերում են 2015 կամ 2016թթ.-ին:

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿ

Հիվանդացության և մահացության ցուցանիշներն արտացոլում են բնակչության առողջության վիճակը, և ուղղակիորեն կախված են տարբեր գործոններից՝ ժառանգական նախատրամադրվածությունից, սեռից, տարիքից, ապրելակերպից՝ վարքագծային և կենսաբանական ռիսկի գործոններ (անառողջ սննդակարգ, ծխախոտի օգտագործում, ակոհոլի չարաշահում, ֆիզիկական թերակտիվություն, զարկերակային բարձր ճնշում /ԶԲՃ/, արյան մեջ գլուկոզի և քոլեսթերինի պարունակության բարձր մակարդակ), սոցիալ-տնտեսական, այսինքն՝ ցածր սոցիալ-տնտեսական կարգավիճակ, սոցիալական օգնության բացակայություն, լարվածությունն աշխատավայրում և ընտանեկան կյանքում, ընկճվածություն, անհանգստություն, թշնամություն, կրթություն, շրջակա միջավայր և առողջապահական համակարգի գործունեություն:

Բնակչության առողջության գնահատումը հնարավորություն է ընձեռում բնութագրել երկրի ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև բնակչության առողջության առկա հիմնախնդիրները:

4 Ժողովրդագրական բնութագիր

Բնակչության թվաքանակը և կազմը

2018թ.-ի հունվարի 1-ի դրությամբ 2017թ.-ի ՀՀ մշտական բնակչության թիվը կազմել է 2972 700 մարդ, և 2016թ. համեմատությամբ այն նվազել է 13400 մարդով, որը բացատրվում է հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված բնակչության բնական հավելաճի և միգրացիայի մնացորդի (գնահատված¹) ցուցանիշների ազդեցությամբ (ՀՀ ԱՎԾ, 2018):

2018թ.-ին քաղաքային մշտական բնակչության մասնաբաժինը կազմել է 63.7%, իսկ գյուղական բնակչությանը՝ 36.3%: Տղամարդիկ կազմել են բնակչության 47.4%-ը, իսկ կանայք՝ 52.6%-ը:

Ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակի, եթե երկրի բնակչության կառուցվածքում 65 և բարձր տարիքի բնակչությունը կազմում է 7%-ից ավել, ապա, սվյալ բնակչությունը համարվում է ծերացած: 1990-2015թթ. ժամանակահատվածում հանրապետության մշտական բնակչության կառուցվածքում կտրուկ նվազել է 0-15 տարեկան երեխաների տեսակարար կշիռը, որը 1990թ.-ին կազմում էր 32.2%:

- Հայաստանում 65 և բարձր տարիքի բնակչության քանակը կազմել է 11.6%: Այն հանդիսանում է Հայաստանում բնակչության ծերացման կարևորագույն գործոններից մեկը: Բնակչության ծերացումն երկարատև ժողովրդագրական փոփոխությունների, բնակչության վերարտադրության, ծնելիության, մահացության, դրանց հարաբերակցություններում տեղ գտած տեղաշարժերի և արտրագաղթի հետևանք է:
- Բնակչության բնական վերարտադրության ցածր մակարդակը մնում է Հայաստանի ժողովրդագրական կարևորագույն խնդիրների շարքում:

Բնակչության բնական շարժը


Հայաստանում արձանագրված անկայուն տնտեսական, սոցիալական և քաղաքական իրավիճակն իր ազդեցությունն է ունեցել նաև բնակչության վերարտադրողական վարքագծի վրա: Այսպես, ծնելիության ընդհանուր գործակիցը 2017թ.-ին 1000 բնակչի հաշվով կազմել է 12.7 պրոմիլ, 2016թ.-ին՝ 13.6 պրոմիլի և 1990թ.-ին՝ 22.5 պրոմիլ:

Ցուցանիշերը վերագնահատվել (ճշգրտվել) են հաշվետու ժամանակաշրջանին նախորդող տարվա՝ Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքներով ձևավորված, միգրացիոն գործընթացներն արտացոլող ամփոփ ցուցանիշերի հիման վրա, մանրամասն մեթոդաբանական պարզաբանումները տես՝ <http://www.armstat.am/am/?nid=82&id=1547>:

Կյանքի սպասվող տևողություն

2017թ.-ի դրությամբ Հայաստանում կյանքի սպասվող տևողությունը կազմում է 75 տարի, ընդ որում, կանայք 6.7 տարով ավելի երկար են ապրում, քան տղամարդիկ (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Կյանքի սպասվող տևողությունը ծնվելիս, 1990, 1995, 2000-2017




Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, 2017

1990թ.-ի համեմատությամբ կյանքի սպասվող տևողությունը աճել է 4.3 տարով:

Միջազգային տվյալների համեմատությունը փաստում է, որ Հայաստանում կյանքի սպասվող տևողությունը ծնվելիս ավելի բարձր է, քան ԱՊՀ երկրներում, մոտավորապես նույնն է, ինչ Ադրբեջանում և Վրաստանում, սակայն զիջում է զարգացած եվրոպական երկրների միջին մակարդակը (Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Կյանքի սպասվող տևողությունը ծնվելիս, ընտրանքային երկրներ և երկրների համախմբություն, 2007, 2013-2015



Աղբյուր՝ ԱԲ-ՏՇ, ԱՀԿ

Առողջապահության համաշխարհային կազմակերպության փորձագետների կարծիքով, Հայաստանում կյանքի սպասվող տևողության ցուցանիշի իրական արժեքը նշվածից մոտ 5-6.5 տարով ավելի ցածր է, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի պետական մարմինները հնարավորություն չունեն ճշգրիտ հաշվառելու Հայաստանից դուրս բնակվող, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մահերը:

Ներկա դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում չգրանցված ծնունդների և մահերի հնարավոր ցուցանիշը՝ սկսած 1991 թվականից, հայտնի չէ՝ լայնածավալ և ամբողջական մասնագիտական ուսումնասիրության բացակայության պատճառով, որի հետևանքով առկա չէ նաև ստույգ բնակչության բնական շարժի վիճակագրություն:

Բնակչության բնական վերարտադրություն

Մահացության գործակցի շարժընթացի ուսումնասիրությունը փաստում է, որ Հայաստանում մահացության ընդհանուր գործակիցը 1949-1989թթ. ընթացքում ունեցել է նվազման միտում, ինչը պայմանավորված է եղել սոցիալ-տնտեսական վիճակի և բարեկեցության ամենամյա բարելավմամբ, առողջապահական համակարգի զարգացմամբ (Գծապատկեր 3): Եթե 1949թ.-ին մահացության ընդհանուր գործակիցը 1000 բնակչի հաշվով կազմել էր 10.9 մարդ, ապա 1989թ.-ին այն նվազել էր մինչև 6.0: Ընդ որում, 1988թ.-ին մահացության գործակցի կտրուկ աճը մինչև 10.3 պայմանավորված է եղել բնական աղետով՝ Սպիտակի երկրաշարժով:

Հետխորհրդային տարիներին մահացության ընդհանուր գործակիցն աճել է 1991թ.-ին 6.5-ից՝ 2017թ.-ին հասնելով 9.1-ի.:


- **Հայաստանում մահացության ընդհանուր գործակցի աճի հիմնական բաղադրիչներից է բնակչության տարիքային կառուցվածքի փոփոխությունը՝ բնակչության ծերացումը:**

Ընդհանուր մահացության գործակիցը 55 և բարձր տարիքի բնակչության շրջանում նշանակալիորեն գերազանցում է ավելի ցածր տարիքի բնակչության մահացության ցուցանիշին: Այդ պատճառով բնակչության ծերացումը հանգեցնում է մահացության ընդհանուր գործակցի աճին:

1990թ.-ի բարեփոխումների հետևանքով Հայաստանի տնտեսական կոլլապսը հանգեցրեց վերարտադրողական տարիքում գտնվող անձանց լայնածավալ արտագաղթի և բնակչության զանգվածային աղքատացմանը, որի հետևանքով ծնելիության ընդհանուր

գործակիցը սկսեց նվազել՝ հասնելով նվազագույնին 2001թ.-ին, որից հետո այդ ցուցանիշի շատ դանդաղ և բնական վերարտադրության համար խիստ անբավար ավել գրանցվել:

Գծապատկեր 3. ՀՀ բնակչության մահացության և ծնելիության ընդհանուր գործակիցները, 1942-2017



Աղբյուր՝ ԱՎԾ, 2017

- Հայաստանում ծնելիության ցածր մակարդակի մեկ այլ կարևոր գործոն է այն, որ ինդիվիդուալիստական արժեքների և սպառողական մշակույթի տարածման պատճառով երիտասարդները գերադասում են ունենալ ընդամենը 1-2 երեխա, սակայն կարելի էնշել, որ վերջին տարիներին այդ միտումը նահանջում է:

5 Մահացության պատճառներ

2017թ.-ի դրությամբ Հայաստանում գրանցվել է 27 157 մահ (911.49՝ 100 000 բնակչի հաշվով): Առավել տարածված մահացության պատճառների դիտարկումը փաստում է, որ 2009-2017թթ. ժամանակահատվածում մահացության կառուցվածքում մահվան պատճառներն էական փոփոխություններ չեն կրել (Աղյուսակ 1):

Ներկայացված տվյալները փաստում են, որ բնակչության շրջանում առավել տարածված է ՌՎՀ-ից մահացությունը, որի բեռը կազմում է մոտ 81.4%, վարակիչ հիվանդություններից՝ 0.7%: Ընդ որում, ՌՎՀ-ից մահացության բուրգում արյան շրջանառության համակարգի հիվանդությունները (ԱՇՀՀ) զբաղեցնում են առաջին տեղը՝ 55.6%, որոնց հաջորդում են չարորակ նորագոյացությունները՝ 20.4%, շաքարային դիաբետը՝ 3.0%, վնասվածքները, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունները (ԹՔՕՀ՝ բրոնխիտ, ասթմա, քրոնիկական այլ թոքային և բրոնխոէկտատիկ հիվանդություններ)՝ 2.4%:


Աղյուսակ 1. ՀՀ բնակչության առավել տարածված մահվան պատճառները, 2009-2017, %-ն ընդհանուր մահացության կառուցվածքում

Մահվան պատճառ	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2017
Արյան շրջ. համակարգի հիվանդություններ	49.1%	48.9%	47.6%	48.3%	47.7%	47.9%	46%	55.6%
Չարորակ նորագոյացություններ	19.6%	19.8%	19.9%	20.4%	20.6%	20.6%	21.8%	20.4%
Շնչառական օրգանների հիվանդություններ	6.5%	5.9%	6.1%	5.8%	6%	6.7%	7.6%	6.1%
Մարսողական օրգանների հիվանդություններ	5.9%	5.8%	6.3%	5.8%	6%	5.9%	5.9%	5.7%
Վնասվածքներ, թունավորումներ և արտաքին պատճառների ներք որոշ այլ հետևանքներ	4.4%	4.5%	4.9%	4.9%	4.7%	4.5%	4.9%	3.8%
Ներզատական համակարգի հիվանդություններ, սնուցման և նյութափոխանակության խանգարումներ	5.2%	5.2%	5.0%	4.8%	4.9%	4.5%	4.7%	3.1%
Միզանեռական համակարգի հիվանդություններ	2.6%	2.9%	2.8%	2.9%	3.4%	3.2%	3.0%	1.1%
Ախտանիշեր, նշաններ և կլինիկական ու լաբորատոր հետազոտություններով հայտնաբերված ախտաբանական շեղումներ՝ այլ դասերում չդասակարգված	2.9%	2.9%	3.2%	2.8%	2.6%	2.6%	2.0%	0.8%
Բնածին զարգացման արատներ, դեֆորմացիաներ և քրոմոսոմային խանգարումներ	1.1%	1.5%	1.7%	1.6%	1.7%	1.6%	1.4%	0.7%
Վարակիչ և մակաբուծային որոշ հիվանդություններ	1.0%	1.1%	0.9%	1%	0.9%	1.01%	1.1%	0.7%
Պերինատալ շրջանում ի հայտ եկող վիճակներ	0.7%	0.7%	0.8%	0.7%	0.6%	0.62%	0.56%	0.70%
Նյարդային համակարգի հիվանդություններ	0.5%	0.6%	0.4%	0.5%	0.4%	0.41%	0.42%	0.62%
12-մատնյա աղու խոցային հիվանդություն	0.3%	0.3%	0.3%	0.3%	0.3%	0.39%	0.44%	0.46%
Մկանակմայխային համակարգի և շարակցական հյուսվածքի հիվանդություններ	0.2%	0.2%	0.2%	0.2%	0.4%	0.15%	0.23%	0.17%
Արյան և արունաստեղծ օրգանների հիվանդություններ, ինուն մեխանիզմները ներգրավող առանձին խանգարումներ	0.1%	0.1%	0.1%	0.08%	0.07%	0.07%	0.05%	0.10%
Մաշկի և ենթամաշկային բջջանքի հիվանդություններ	0.1%	0.1%	0.0%	0.1%	0.3%	0.09%	0.06%	0.10%
Հղիություն, ծննդաբերություն և հետծննդյան շրջան	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.3%	0.02%	0.03%	0.01%
Հոգեկան վարքի խանգարումներ	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.01%	0.05%	0.04%

Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018



Հայաստանում մահացության հիմնական պատճառներից առաջացած մահերի հարաբերական ցուցանիշը ներկայացված է Գծապատկեր 4-ում, իսկ դիմամիկան՝ Գծապատկեր 5-ի Ա և Բ-ում:

Գծապատկեր 4. Մահացությունն ըստ պատճառների, 2017, 100 000 բնակչի հաշվով



Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Գծապատկեր 5. Ա-Բ. Մահացությունն առավել տարածված հիվանդություններից, 100 000 բնակչի հաշվով, 2007-2017



Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Վաղաժամ մահացություն

Հարկ է նշել, որ վաղաժամ (մինչև 65 տարեկան) մահացությունն ըստ պատճառների կրկնօրինակում է ՈՎՀ մահացության կառուցվածքը (Աղյուսակ 2):

Ընդհանուր մահացության կառուցվածքում վաղաժամ մահացության կշիռը կազմում է 26.6%:

Այսինքն, բնակչության յուրաքանչյուր երրորդը մահանում է մինչև 65 տարեկան հասակը:

Աղյուսակ 2. ՀՀ բնակչության վաղաժամ մահացությունն ըստ պատճառների և սեռի, 2017

Հիվանդություններ ըստ ՀՄԴ 10	Սեռ	Վաղաժամ (մինչև 65 տարեկան)	100 000 բնակչի հաշվով
Զարոբակ նորագոյացություններ (C00-C99)	արական	1181	92,3
	իգական	890	65,4
	ընդամենը	2071	78,5
Շաքարային դիաբետ (E10-E14)	արական	124	9,7
	իգական	107	7,9
	ընդամենը	231	8,8
Արյան շրջանառության համակարգի հիվանդություններ (I00-I99)	արական	1962	153,4
	իգական	713	52,4
	ընդամենը	2675	101,4
Շնչառական օրգանների հիվանդություններ (J00-J99)	արական	203	15,9
	իգական	96	7,1
	ընդամենը	299	11,3
Տրանսպորտային դժբախտ պատահարներ (V01-V99)	արական	167	13,1
	իգական	41	3,0
	ընդամենը	208	7,9
Վնասվածքների այլ արտաքին պատճառներ՝ դժբախտ պատահարների ժամանակ (W00-W99)	արական	58	4,5
	իգական	8	0,6
	ընդամենը	66	2,5
Շփում թունավոր կեղանիների և բույսերի հետ (X20-X29)	արական	2	0,2
	իգական	0	0,0
	ընդամենը	2	0,1
Կանխամտածված ինքնավնասում X60-X84	արական	28	2,2
	իգական	5	0,4
	ընդամենը	33	1,3
Վնասում՝ անորոշ և կանխամտածված (Y00-Y98)	արական	296	23,1
	իգական	56	4,1
	ընդամենը	352	13,3
ԸՆԴԱՄԵՆԸ	արական	4911	383,9
	իգական	2327	171,1
	ընդամենը	7238	274,2

Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Ընդ որում, եթե ընդհանուր մահացության կառուցվածքում վաղաժամ մահացության կշիռը կազմում է 26.6%, ապա 35-65 աշխատունակ տարիքային խմբում՝ 23.2%, որը բացասական ազդեցություն է թողնում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա:


Աղյուսակ 4. ՀՀ բնակչության վաղաժամ մահացությունն ըստ մահվան պատճառների և սեռատարիքային խմբերի, 2017

	Ընդհանուր	0-65 տարեկան	ընդհանուր ըստ դասերի, %	35-65 տարեկան	ընդհանուր ըստ դասերի, %
Ընդամենը	27157	7238	26,7	6290	23,2
Իգական	13316	2327	17,5	1996	15,0
Արական	13841	4911	35,5	4294	31,0
Շաքարային դիաբետ (E10-E14)	809	231	28,6	227	28,1
Իգական	493	107	21,7	105	21,3
Արական	316	124	39,2	122	38,6
ՉԼ (C00-C99)	5550	2071	37,3	1996	36,0
Իգական	2446	890	36,4	855	35,0
Արական	3104	1181	38,0	1141	36,8
ԱՇՀՀ (I00-I99)	15106	2675	17,7	2620	17,3
Իգական	7928	713	9,0	694	8,8
Արական	7178	1962	27,3	1926	26,8

Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Վաղաժամ մահացության դիտարկումն ըստ պատճառների և սեռի փաստում է, որ տղամարդկանց շրջանում ցուցանիշը գրեթե 4 անգամ բարձր է կանանց ցուցանիշից, բացառությամբ մահացությունը չարորակ նորագոյացություններից (Գծապատկեր 6):

Գծապատկեր 6. ՀՀ բնակչության վաղաժամ մահացությունն ըստ պատճառների և սեռի, % ընդհանուր մահերից, 2017



Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Մահացությունն արյան շրջանառության համակարգի հիվանդություններից (ԱՇՀՀ) ԱՇՀՀ առանձին նոզոլոգիաներից առաջացած մահերի մասնաբաժիններն ընդհանուր մահացության կառուցվածքում ներկայացված են Աղյուսակ 3-ում, որոնք 2009-2017թթ. ընթացքում էականորեն չեն փոխվել: Առավել մեծ տոկոս են կազմում մահերը սրտի իշեմիկ հիվանդություններից (ՄԻՀ)՝ 29 %, ուղեղանոթային հիվանդություններից՝ 9.1% և սրտամկանի սուր ինֆարկտից (ՍՄԻ)՝ 5.7%:

Աղյուսակ 3. Մահացությունն ԱՇՀՀ ըստ նոզոլոգիաների, 2009-2017

Մահվան պատճառներ	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Սրտի իշեմիկ հիվանդություն, քրոնիկ և այլ ձևեր	29.1%	29.4%	29.5%	30.5%	31.2%	30.9%	29.1%	30.5%	29.0%
Ուղեղի անոթային հիվանդություններ	11.5%	10.6%	10.4%	10.2%	9.4%	9.5%	8.7%	8.7%	9.1%
Սրտամկանի սուր ինֆարկտ	9.7%	10.0%	9.1%	9.4%	8.8%	8.6%	8.4%	9.4%	5.7%
Գերճնշումային հիվանդություններ	3.6%	3.9%	3.2%	2.8%	2.4%	2.2%	2.5%	2.2%	4.8%

Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2017

Աղյուսակ 4. ԱՇՀՀ ընդհանուր և վաղաժամ մահացությունն ըստ նոզոլոգիաների, 2017

Մահվան պատճառներ	2017			
	Բոլոր տարիքային խմբեր	%	Վաղաժամ (մինչև 65 տարեկան)	%
Սրտի իշեմիկ հիվանդություն (I20-I25)	7866	52,1	1553	58.1
այդ թվում՝				
ստենոկարդիա (I20)	8	0,1	1	0.03
սրտամկանի սուր ինֆարկտ (I21)	1552	10,3	340	12.7
սրտամկանի կրկնակի ինֆարկտ (I22)	318	2,1	59	2.2
Ուղեղի անոթային հիվանդություններ (I60-I69)	2466	16,3	403	15.1
Գերճնշումային հիվանդություններ (I10-I15)	1299	8,6	161	6.0

Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Համաձայն 2017թ.-ի վիճակագրական տվյալների՝ Հայաստանի 15 և բարձր տարիքի բնակչության շրջանում գրանցվել է ԱՇՀՀ հիվանդացության 53 441 դեպք (2243.8/ 100 000 բնակչի հաշվով), ընդ որում, հիվանդների ընդհանուր թիվը կազմել է 250 171 (10503.9/ 100 000 բնակչի հաշվով), իսկ մահացությունը՝ 15 106 դեպք (507.01/100 000 բնակչի հաշվով):

Աղյուսակ 5. 18 և բարձր տարիքի բնակչության շրջանում ԱՇՀՀ տարածվածությունը (ընդհանուր հիվանդացություն) և հիվանդացությունը (կյանքում առաջին անգամ ախտորոշված), 2017

	Տարածվածություն		Հիվանդացություն	
	Բ.թ.	Հ.թ.	Բ.թ.	Հ.թ.
Ընդամենը	249016	10911.7	52878	2317.1
Զարկերակային ճնշման բարձրացմամբ պայմանավորված հիվանդություններ	133480	5849.0	24178	1059.5
Սրտի իշեմիկ հիվանդություն	76418	3348.6	15396	674.6
այդ թվում՝ կրծքահեղձակ (ստենոկարդիա)	26487	1160.6	5809	254.5
Սրտամկանի սուր ինֆարկտ	2209	96.8	2181	95.6
Սրտամկանի կրկնակի ինֆարկտ	597	26.2	550	24.1
Ուղեղանոթային հիվանդություններ	19040	834.3	5766	252.7
այդ թվում՝ ուղեղի արյունազեղում	2231	97.8	947	41.5
Ուղեղի ինֆարկտ	2662	116.6	1063	46.6
ինսուլտ՝ չճշտված, որպես արյունազեղում	2029	88.9	859	37.6
Ուղեղի ինֆարկտ չառաջացնող՝ նախատղեղային և ուղեղային զարկերակների խցանում և նեղացում	5857	256.6	1722	75.5

Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018


Մահվան առավել տարածված պատճառները մարզերում

Գծապատկեր 7-Ա, Բ, Գ-ում ներկայացված են մահվան առավել տարածված պատճառները Հայաստանի մարզերում: Գծապատկերները ցույց են տալիս, որ.


- ԱՇՀՀ մահացությունը զգալիորեն բարձր է Տավուշում և Լոռիում
- Չարորակ նորագոյացություններից մահացությունը՝ Լոռիում
- Շաքարային դիաբետից՝ Տավուշում:

Գծապատկեր 7. Մահվան առավել տարածված պատճառներն ըստ մարզերի, 100 000 բնակչի հաշվով, 2017


Ա. ԱՇՀՀ



Բ. Նորագոյացություններ



Գ. Շաքարային դիաբետ




Մահվան առավել տարածված պատճառների միջազգային համեմատություն

Գծապատկեր 8-ում ներկայացված է եվրոպական տարածաշրջանի երկրներում և Հայաստանում ԱՇՀՀ և ՉՆ պատճառով մահացության համեմատական վերլուծությունը ըստ եվրոպական «Առողջություն բոլորի համար» շտեմարանի տվյալների:

Հայաստանում արյան շրջանառության համակարգի հիվանդություններից մահացությունն ավելի ցածր է, քան ԱՊՀ-ում և Արևելյան Եվրոպայի երկրներում, մոտավորապես նույնն է, ինչ Ադրբեջանում, սակայն ավելի բարձր է, քան Վրաստանում: Մինևույն ժամանակ, չարորակ նորագոյացությունների պատճառով մահացությունը Հայաստանում նույն այդ երկրների և խմբերի համեմատ զգալիորեն բարձր է:

Գծապատկեր 8. ԱՇՀՀ և ՉՆ մահացության ցուցանիշներ , 100 000 բնակչի հաշվով, ընտրանքային երկրներ և երկրների համախմբություններ, առկա ամենավերջին տարիների տվյալներով, 2007, 2014-2016




Աղբյուր՝ ԱԲ-ՏՇ, ԱՀԿ

Երեխաների, մանկական, նորածնային և մայրական մահացություն

Մանկական և մայրական մահացության ցուցանիշները սերտորեն փոխկապակցված են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի հետ:

2005թ.-ին Հայաստանն ընդունել է կենդանածնության ԱՀԿ ստանդարտ սահմանումը, ինչն էլ կարող է մասամբ բացատրել 2006թ.-ին արձանագրված արտասովոր աճը: Հետևաբար, էքստրապոլյացիայի դեպքում, որպես բազային արժեքներ ընդունվել են 2006թ.-ի ցուցանիշները: Գծապատկեր 9-ում ներկայացված են մանկական, երեխաների և նեոնատալ մահացության ցուցանիշների միտումները՝ սկսած 2000թ.-ից:

Գծապատկեր 9. Երեխաների, մանկական և նորածնային մահացություն՝ 1 000 կենդանածինների հաշվով, 2000-2017




Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Տվյալներից երևում է, որ 2011-2015թթ. ընթացքում նկատվում է մանկական մահացության բոլոր երեք ցուցանիշների նվազում: Ընդ որում, ցուցանիշներն արդեն մոտ են Մոր և մանկական առողջության պահպանման ռազմավարությամբ սահմանված թիրախային արժեքներին:

Հայաստանում մանկական մահացության ցուցանիշն ավելի բարվոք է, քան ԱՊՀ-ում, Արևելյան Եվրոպայի երկրներում, Վրաստանում և Թուրքիայում (Գծապատկեր 10):


Գծապատկեր 10. Մանկական մահացությունը՝ 1 000 կենդանի ծնունդի հաշվով, ընտրանքային երկրների և երկրների համախմբությունների, առկա ամենավերջին տարիների տվյալներով



Աղբյուր՝ ԱԲ-ՏՀ, ԱՀԿ, 2016 (տվյալները թարմացվել են 15.06.18)

Մայրական մահացության տարեկան և եռամյա միջինների շարժը Հայաստանում ներկայացված է Գծապատկեր 11 և 12-ում:


Չճապատկեր 11. Մայրական մահացության գործակիցը՝ 100 000 կենդանի ծնունդների հաշվով, 1995 և 2000-2017 Տարեկան ցուցանիշ



Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Չճապատկեր 12. Մայրական մահացության գործակիցը՝ 100 000 կենդանի ծնունդների հաշվով, 1995, 2000-2017 (եռամյա միջին)

Եռամյա միջին ցուցանիշ



Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018


2011-2017թթ. ընթացքում մայրական մահացության ցուցանիշը (եռամյա միջինը) համապատասխանել է ռազմավարության չափանիշներին: : Հետևաբար՝

- նպատակահարմար է՝ որպես մայրական մահացության մակարդակի նոր թիրախ, սահմանել ՀԶՆ-ով սահմանված արժեքը՝ 10 մահ 100 000 ծնունդների հաշվով:

Հաշվի առնելով տարեկան ցուցանիշների տատանումները՝ միջազգային համեմատությունները պետք է կատարվեն վերապահումներով, քանի որ, ինչպես արդեն նշվել է, ցուցանիշը բավական անկայուն է: Այնուամենայնիվ, Հայաստանում մայրական

մահացության ցուցանիշը զգալիորեն ավելի ցածր է, քան հարևան երկրների ցուցանիշները, այդ թվում նաև՝ ԵՄ-26 և ԱՊՀ երկրների միջինների համեմատ: Այն գրեթե հավասարվել է եվրոպական զարգացած երկրների ցուցանիշներին (Գծապատկեր 13):

Գծապատկեր 13. Մայրական մահացությունը 100 000 կենդանի ծնունդի հաշվով, ընտրանքային երկրներ և երկրների համախմբություններ, 2013-2016



Աղբյուր՝ ԱԲ-ՏՇ, ԱՀԿ


Հիվանդությունների տարածվածության միտումները

Հայաստանում բնակչության ընդհանուր հիվանդացության կառուցվածքում առավել տարածված հիվանդությունների տեսակարար կշիռը կազմում է 68.0%: Այդ հիվանդություններն են՝ շնչառական օրգանների, արյան շրջանառության համակարգի, մարսողական օրգանների, միզասեռական համակարգի, աչքի և նրա հավելյալ ապարատի, ներզատական համակարգի հիվանդությունները և նորագոյացությունները:

Գծապատկեր 14-ում ներկայացված է վերը թվարկված հիվանդությունների տարածվածությունը 2002, 2008 և 2010-2017թթ. ընթացքում:

Հարկ է նշել, որ վերջին 12 տարիների ընթացքում աճել է արձանագրված ԱՇՀՀ-ով հիվանդների թիվը, որը փաստում է այդ հիվանդությունների բուժման կապակցությամբ ԱԱՊ հաստատություններ դիմելիության աճի մասին:


Գծապատկեր 14. ՀՀ բնակչության շրջանում առավել տարածված հիվանդություններ, 2002, 2008, 2010-2017



Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Գծապատկեր 15-ում ներկայացված են հոսպիտալացման ցուցանիշների միջազգային համեմատություններն ըստ հիվանդությունների պատճառների:

Գծապատկեր 15. Հիվանդանոցից դուրս գրվածները՝ 100 000 բնակչի հաշվով, ընտրված հիվանդություններ, ընտրանքային միջազգային համեմատություններ, 2016



	Մարսող. օրգ. հիվանդ.	Շնչառ. օրգ. հիվանդ.	ԱՇՀՀ
ԱՊՀ	1716,1	2452,1	3123,5
Ադրբեջան	738,8	855,2	866,1
Վրաստան	1113,1	2394,4	2122,8
Հայաստան	1068,8	1790,0	1951,5
Թուրքիա	1172,1	1781,6	1502,0
ԵՄ-13	1711,0	1847,0	3020,0
ԵՄ-15	1808,0	1264,1	2234,1

Աղբյուր՝ ԱԲ-ՏՇ, ԱՀԿ, 2018

Գծապատկերից երևում է, որ Հայաստանում դիտարկվող ցուցանիշները մոտ են Վրաստանի և Թուրքիայի ցուցանիշներին:

1995թ.-ին Հայաստանի տնտեսությունը կազմալուծված էր, բնակչությունն աղքատացած, ենթակառուցվածքների աշխատանքը կազմալուծված, առաջնային օղակում բուժօգնությունը դարձել էր վճարովի, որը նպաստել էր բուժօգնության անմատչելիությանը: Արդյունքում աղքատացած բնակչությունը հիվանդության դեպքում հոսպիտալացման մակարդակի վրա էապես ազդում է տվյալ երկրում հիվանդանոցային բուժօգնության մատչելիությունը:

- 1995թ.-ին բոլոր հիվանդությունների մակարդակը կտրուկ նվազել էր: Բացասությունը պարզ է բնակչությունը հաճախ չէր դիմում բուժօգնության:

Հետևաբար, 2005թ.-ից բնակչության ընդհանուր հիվանդացության աճը, որն արձանագրվել է բոլոր հիվանդությունների գծով առողջության առաջնային պահպանման օղակում, առավելապես բնութագրում է առաջնային բուժօժանոցային բուժօգնությունների մատչելիության աճը, այլ ոչ թե բնակչության առողջության վիճակը: Դիմելիության աճը պայմանավորված է համակարգում իրականացված բարեփոխումներով: Տվյալները պարզապես հուշում են, որ եթե բնակչության դիմելիությունն առաջնային բուժօգնության օղակ բարձրացել է, ապա առողջության վիճակի բարելավումն անխուսափելի է: Առավելապես այդ պատճառով անհրաժեշտություն կա իրականացնելու ընտրանքային հետազոտություններ, որոնք կարտացոլեն բնակչության առողջության ընդհանուր վիճակը, այդ թվում՝ բուժօժանոցայիններից չօգտվելու պատճառները, ինչպես նաև տարբեր հիվանդությունների առկայությունը բնութագրող հիվանդագին վիճակների և ախտանիշների տարածվածության արժանահավատ պատկերը:

Աղյուսակ 6. 15 և բարձր տարիքի բնակչության ընդհանուր հիվանդացությունն ըստ հիվանդությունների խմբերի և տարիների, 1990, 1995, 2005, 2010-2017

Հիվանդություններ	1990	1995	2000	2005	2010	2012	2013	2014	2015	2016	2017
ԸՆԴԱՄԵՆԸ	62665	35944	25537	31964	41969	48263	49352	50439.0	52604.8	54741.0	54798.1
Շնչառական օրգանների հիվանդություններ	16420	8145	5825	7535	9292	9135	9419	9200.4	9253.8	10003.4	9429.4
Արյան շրջանառության համակարգի հիվանդություններ	8709	5588	4047	4430	6599	8645	8903	9226.4	9723.8	10250.1	10503.9
Աչքի և նրա հավելյալ ապարատի հիվանդություններ	-	-	-	1626	3117	3756	3790	3911.3	4161.3	4312.6	4162.5
Ներզատական համակարգի հիվանդություններ, սնուցման և նյութափոխանակության խանգարումներ	2003	1766	1703	2237	2777	3398	3706	3930.9	4402.7	4824.5	5021.8
Միզասեռական համակարգի հիվանդություններ	3450	1948	1383	1948	2870	3372	3536	3532.7	3702.0	3795.6	3976.0
Մարտդակային օրգանների հիվանդություններ	11813	4992	2751	2751	2824	3059	3084	3116.2	3163.3	3156.0	3209.2
Շաքարային դիաբետ	1434	1350	1331	1576	2056	2515	2771	2955.4	3186.9	3430.7	3600.6
Հոգեկան խանգարումներ	2978	2126	1796	1897	2296	2456	2445	2522.0	2437.1	2478.1	2500.4
Հղիություն, ծննդաբերություն և հետծննդաբերական շրջան (բարդություններ)	2521	1274	1530	2043	1948	2335	2353	2169.2	2753.7	2387.3	2148.9
Վարակիչ և մակարոնիաների հիվանդություններ	1600	1333	1488	1899	2241	2499	2274	2274.5	2326.1	2277.7	2216.4
Ոսկրամկանային համակարգի և շարակցական հյուսվածքի հիվանդություններ	1965	962	724	941	1462	1915	1961	2022.2	2082.9	2152.9	2165.8
Նյարդային համակարգի հիվանդություններ	4600	2719	1785	1265	1588	1834	1875	1957.0	2077.2	2146.4	2220.0
Նորագոյացություններ	1152	1085	931	1219	1433	1849	1855	1962.6	2114.0	2227.1	2298.2
Վնասվածքներ, թունավորումներ և արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետևանքներ	4945	3065	1689	1495	1678	1851	1852	1945.0	1950.8	1928.8	1842.8
Մաշկի և ենթամաշկային բջջանքի հիվանդություններ	1965	1504	659	1037	1541	1798	1807	1967.4	2010.0	2077.5	2105.3
Ականջի և պտկաձև ելունի հիվանդություններ	-	-	-	584	1020	1233	1318	1410.9	1515.0	1493.0	1586.7
Կլինիկական և լաբորատոր հետազոտությունների ընթացքում բացահայտված և այլ խորագրերում չդասակարգված ախտանիշեր, նշաններ և շեղումներ նորմայից	41801	79	41779	43	146	157	202	214.9	227.0	248.8	256.6
Բնածին շեղումներ (զարգացման արատներ), դեֆորմացիաներ և քրոմոսոմային խանգարումներ	58	47	43	77	95	100	111	100.5	96.7	97.7	89.9

Աղբյուր՝ ՀՀ ԱՆ ԱՏՎԱԿ, 2018

6 Բուժառայությունների գործունեություն սպառում

Առողջապահության համակարգն առավել արդյունավետ է, եթե հավասար պայմանների դեպքում, ռեսուրսների մակարդակին համապատասխան, բնակչությանն է մատուցվում առավել արդյունավետ և որակյալ բուժօգնություն:

Համաձայն ԱՀԿ-ի սահմանումների, տարբերում են բուժառայությունների երեք տիպի մատչելիություն.

- **Ֆինանսական,** երբ սահմանափակվում է բուժառայությունից օգտվելու հնարավորությունը տնային տնտեսությունում ֆինանսական միջոցների սղության պատճառով,
- **աշխարհագրական,** երբ սահմանափակվում է բուժառայությունից օգտվելու հնարավորությունը բուժօգնության հեռու գտնվելու կամ բացակայության պատճառով,
- **տեղեկատվական,** երբ սահմանափակվում է բուժառայությունից օգտվելու հնարավորությունը տեղեկատվության բացակայության, ինչպես նաև քաղաքացիների՝ իրենց իրավունքների մասին տեղեկացված չլինելու պատճառով:


2016թ.-ին Հայաստանում աղքատության մակարդակը կազմել է 29.4%՝ 2008թ.-ին արձանագրված 27.6%-ի դիմաց: Շատ աղքատների տեսակարար կշիռն ամբողջ բնակչության մեջ կազմել է 9.8%՝ 2008թ.-ին արձանագրված 12.6%-ի դիմաց: Ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 1.8%՝ 2008թ.-ին արձանագրված 1.6%-ի դիմաց 2016 թ.-ին ընդհանուր աղքատության մակարդակը դեռևս ավելի բարձր էր 2008 թվականի մակարդակից 1.8 տոկոսային կետով (կամ 6.5% -ով), մինչդեռ ծայրահեղ աղքատության մակարդակը բարձրացել էր ընդամենը 0.2 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, ճգնաժամից հետո աղքատների թիվը նվազել է 2.9 տոկոսային կետով՝ 2008 թ.-ի համեմատ: 2016թ.-ին աղքատության մակարդակը դեռ գերազանցում է 2008թ.-ի մակարդակին 1.8 տոկոսային կետով (կամ 6.5 %-ով), իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ միայն 0.2 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, ճգնաժամից հետո, շատ աղքատների մակարդակը 2008թ.-ի համեմատ նվազել է 2.9 տոկոսային կետով:

Չնայած բուժօգնություն ստանալու առկա տարբեր արտոնություններին և կանոնակարգերին, տեղեկացված չլինելու պատճառով բնակչության մի ստվար զանգված

կամովի կամ ստիպված կատարում է գրպանից վճարումներ, այն դեպքում, երբ կարող էր չկատարել: Հետևաբար, բուժօգնության տեղեկատվական գործոնը չափազանց կարևոր է առողջապահության համակարգի հզորացման գործում:


Հայաստանում մեկ տարվա ընթացքում ամբուլատոր հաճախումների թիվը մեկ անձի հաշվով, ինչպես նաև տարեկան կտրվածքով հոսպիտալացումների մակարդակը 2017թ.-ին կտրուկ նվազել է՝ ի համեմատ 1990թ.-ի (Գծապատկեր 16 և Գծապատկեր 17): Սակայն, 2000թ.-ից սկսած, երբ Հայաստանում սկսվել է նշանակալի տնտեսական աճ, այդ ցուցանիշները սկսել են աճել ի շնորհիվ իրականացվող բարեփոխումների, մասնավորապես, ԱԱՊ օղակում: Այնուամենայնիվ հիվանդանոցային հաճախումների թիվն աճել է զգալիորեն, քան ամբուլատոր հաճախումների թիվը, որը կարող է նաև պայմանավորված լինել այն հանգամանքով, որ բնակչության մեծամասնությունը շրջանցում է ԱԱՊ հաստատությունները, և առողջական խնդիրների ի հայտ գալու դեպքում դիմում է նեղ մասնագիտական հիվանդանոցային բուժհաստատություն:

Գծապատկեր 16. ԱԱՊ հաճախումները թիվը 1 բնակչի հաշվով, 1990, 1995 և 2000-2017



Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Գծապատկեր 17. Հոսպիտալացման տարեկան մակարդակը՝ 100 բնակչի հաշվով, 1990, 1995 և 2000-2017




Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Ներկայացված տվյալները կարելի է մեկնաբանել որպես բնակչության համար առաջնային օղակի մատչելիության և հիվանդանոցային բուժօգնության դիմելիության աճ:


Միջազգային տվյալների հետ համեմատելիս ակնհայտ է, որ Հայաստանի հոսպիտալացումների ցուցանիշը գերազանցում է Ադրբեջանի և Վրաստանի ցուցանիշներին, սակայն հետ է մնում Թուրքիայից, ԱՊՀ, ԵՄ-15 և ԵՄ-13 երկրներից: Նույնպիսի պատկեր է նաև ամբուլատոր հաճախումների ցուցանիշի տեսակետից (Գծապատկեր 17 և Գծապատկեր 19):

Գծապատկեր 18. Հոսպիտալացման մակարդակը՝ 100 բնակչի հաշվով, ընտրանքային երկրներ և երկրների համախմբություններ, 2014



Աղբյուր՝ ԱԲ-ԵՏՇ, ԱՀԿ,

Գծապատկեր 19. Ամբուլատոր հաճախումները՝ 1 անձի հաշվով, ընտրանքային երկրներ և երկրների համախմբություններ



Աղբյուր՝ ԱԲ-ԵՏԸ, ԱՀԿ

Հոսպիտալացման մակարդակն ըստ մարզերի


Գծապատկեր 20-ում ներկայացված է 2006-2017թթ.-ի ընթացքում հոսպիտալացման մակարդակը մարզային կտրվածքով (100 բնակչի հաշվով):

Համաձայն ներկայացված տվյալների.

- 2010-2016թթ.-ի ընթացքում գրանցվել է հոսպիտալացման աճի միտում, սակայն 2017թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ նկատվել է նվազման միտում, բացառությամբ Սյունիքի մարզի: Հատկապես կտրուկ նվազել է հոսպիտալացման մակարդակը Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում:

Այդ երևույթը հավանաբար պայմանավորված է մարզային բնակչության արտագաղթով կամ մարզային բուժհաստատություններում համապատասխան մասնագետների բացակայությամբ:

Գծապատկեր 20. Հոսպիտալացման մակարդակն ըստ մարզերի՝ 100 բնակչի հաշվով, 2006-2017




Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Նշենք, որ.


- 2012-2014թթ. ընթացքում աճել էր դիմելիությունը թե՛ պետական, թե՛ մասնավոր հիվանդանոցներ, որը նվազեցման միտում է ունեցել 2017թ.-ին (Գծապատկեր 21):
- Գծապատկեր 22-ի տվյալները փաստում են, որ 2012-2014թթ. ընթացքում էապես աճել է մարզային հիվանդանոց դիմած անձանց թիվը:

Գծապատկեր 21. Պետական և մասնավոր հիվանդանոցների հոսպիտալացման մակարդակը (բացարձակ թիվ), 2006-2017



Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2015

Գծապատկեր 22. Երևանի և մարզերի հիվանդանոցների հոսպիտալացման մակարդակը (բացարձակ թիվ), 2006-2015




Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2015

Ամբուլատոր հաճախումներն ըստ մարզերի

Ամբուլատոր հաճախումների շարժընթացը մարզերում, ի տարբերություն հիվանդանոցային հոսպիտալացման, կրում է այլ պատկեր: Բոլոր մարզերում 2017թ.-ին 2006թ.-ի համեմատությամբ գրանցվել է ամբուլատոր հաճախումների թվի աճ մեկ անձի հաշվով, ինչը նշանակում է, որ Հայաստանի բնակչության համար, ի շնորհիվ իրականացված բարեփոխումների, ամբուլատոր բուժօգնության մատչելիությունն աճել է:

Գծապատկեր 23. Ամբուլատոր պոլիկլինիկական հաճախումների մակարդակը մեկ անձի հաշվով տարեկան կտրվածքով, ըստ մարզերի, 2006-2017



Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

7 Բուժօգնությունների որակ

Բուժօգնության որակն ու անվտանգությունը

Առողջապահական ծառայությունների որակի գնահատման նպատակով, մասնավորապես, դիտարկվել են հետևյալ ինդիկատորները՝

- Չարորակ նորագոյացությունների հայտնաբերման և բուժման արդյունավետությունը, այդ թվում՝
 - ✓ կրծքագեղձի քաղցկեղի
 - ✓ արգանդի պարանոցի քաղցկեղի
- Հիվանդանոցային մահաբերության մակարդակը:

Քաղցկեղների վաղ հայտնաբերում

Համաձայն ապացուցողական բժշկության տվյալների՝ քաղցկեղների 40%-ը կանխարգելվող և բուժվող հիվանդություններ են, և դրանց շարքին են դասվում կրծքագեղձի և արգանդի պարանոցի քաղցկեղները (ԿՔ, ԱՊՔ): Այդ հիվանդությունները զարգանում են մոտավորապես 5-10 տարվա ընթացքում:

Քաղցկեղների բուժման հավանականությունն աճում է՝ դրանց վաղ հայտնաբերման դեպքում:

Վերջին տասնամյակի ընթացքում ԿՔ և ԱՊՔ վերահսկման համապարփակ ծրագրերի շնորհիվ, աշխարհի մի շարք զարգացող երկրներում քաղցկեղի այս տեսակի նոր դեպքերի թիվն ու մահացությունն իջել է 60-80%:

Կրծքագեղձի և արգանդի պարանոցի քաղցկեղները կանանց չարորակ նորագոյացությունների կառուցվածքում գրավում են առաջին և երկրորդ տեղերը: Այդ հիվանդություններն առավել հաճախ հանդիպում են 35-55 տարեկան կանանց մոտ: ԿՔ և ԱՊՔ հազվադեպ են հանդիպում 20 տարեկանից ցածր տարիքի կանանց մոտ, իսկ դեպքերի մեծամասնությունը արձանագրվում է 65-ից բարձր տարիքի կանանց շրջանում:

Համաձայն 2017թ.-ի ՀՀ ԱՆ Ուռուցքաբանության ազգային կենտրոնի և ԱՏՎԱԿ տվյալների ԿՔ դեպքերի 26.1%-ը գրանցվել են հիվանդության զարգացման III և IV փուլերում: ԱՊՔ քաղցկեղի դեպքերի 62.4% գրանցվել են հիվանդության զարգացման III և IV փուլերում: ԿՔ նոր դեպքերը կանանց շրջանում կազմել են 1118, իսկ ԱՊՔ՝ 262 դեպք:

Այդ պատճառով քաղցկեղների բուժման տեսակետից շատ կարևոր է այն հանգամանքը, թե ո՞ր փուլում են դրանք հայտնաբերվում: Գծապատկեր 24-ում ներկայացված են քաղցկեղների հայտնաբերման տվյալներն ըստ քաղցկեղի փուլերի 2003-2017թթ. ընթացքում :

Տվյալները հուշում են, որ.


- **Քաղցկեղների վաղ հայտնաբերման հարցում առաջընթաց չկա**

Այսպիսով, I-II փուլում հայտնաբերված բոլոր տեսակի քաղցկեղների մասնաբաժինը 2017թ.-ին կազմել է 44%, իսկ III և IV փուլերում՝ 56%:

Հետևաբար՝

- **քաղցկեղի վաղ հայտնաբերման խնդիրն արդեն 10 տարի մնում է խնդրահարույց, և անհրաժեշտ են լուրջ միջոցառումների իրականացում այդ ցուցանիշը բարելավելու նպատակով:**

Գծապատկեր 24. Չարորակ նորագոյացությունների հայտնաբերումն՝ ըստ հիվանդության փուլերի, բոլոր տեսակի քաղցկեղներ, 2003-2017




Աղբյուր՝ Ուռուցքաբանության ազգային կենտրոն, 2018

Կրծքագեղձի քաղցկեղի հայտնաբերում

Կրծքագեղձի քաղցկեղը չարորակ նորագոյացությունների տարատեսակ է, որի վիճակագրությունը վարում է ՀՀ ուռուցքաբանության ազգային կենտրոնը: Չարորակ նորագոյացությունների բուժման ինտեգրալ ցուցանիշ է կրծքագեղձի քաղցկեղի հայտնաբերումից հետո 5 տարի ապրելու հավանականությունը (Գծապատկեր 25): Գծապատկերի տվյալները ցույց են տալիս, որ 2002թ.-ից ի վեր այս ցուցանիշը թեև դանդաղ, սակայն անշեղորեն աճում է: Արդյո՞ք այդ աճը կարելի՞ է համարել բավարար՝ հարցի պատասխանը վերապահվում է համապատասխան մասնագետներին:

Գծապատկեր 25. Կրծքագեղձի քաղցկեղի հայտնաբերումից հետո 5 տարի ապրելու հավանականությունը



Սղբյուր՝ Ուռուցքաբանական ազգային կենտրոն, 2018

Փորձենք պարզել թե, ո՞ր գործոնով է պայմանավորված ապրելիության ցուցանիշի աճը՝ կրծքագեղձի քաղցկեղի վաղ հայտնաբերումի՞ց, թե՞ բուժման արդյունավետությունից: Այս ցուցանիշը խիստ կախված է կրծքագեղձի քաղցկեղի և՛ վաղ հայտնաբերումից, և՛ բուժման արդյունավետությունից: Այդ մասին պատկերացում են տալիս Գծապատկեր 127-ի տվյալները: Գծապատկերից երևում է, թե հիվանդության ո՞ր փուլում են հայտնաբերվել կրծքագեղձի քաղցկեղի դեպքերը 2003-2017թթ. ընթացքում:

Համաձայն այդ տվյալների՝ կրծքագեղձի քաղցկեղը I-II փուլերում հայտնաբերելու դեպքերի քանակը 2010-2017թթ. ընթացքում աճել է, հետևաբար, կարելի է ենթադրել, որ՝


- կրծքագեղձի քաղցկեղի հայտնաբերումից հետո 5 տարի ապրելու հավանականության աճը որոշ չափով պայմանավորված է դրա վաղ փուլերում հայտնաբերման հնարավորության աճով:

Մյուս կողմից, տվյալներում քաղցկեղի I-II փուլում հայտնաբերումն ունի 3-4 տարվա աճ, որից հետո դրա վաղ հայտնաբերման հավանականությունը նվազում է: Մասնավորապես,

կրծքագեղձի քաղցկեղի I-II փուլում հայտնաբերման ցուցանիշի աճ է գրանցվել 2004-2006, 2007-2009 և 2010-2014թթ. և 2017թ.-ի ժամանակահատվածներում և նվազում՝ 2006-2007, 2009-2010թթ.և 2014-2016թթ. ընթացքում:

Նման պատճառների մասին որևէ բացատրություն դեռևս չի տրվել:

Գծապատկեր 26. Կրծքագեղձի քաղցկեղի հայտնաբերումն ըստ հիվանդության փուլերի, 2003-2017



Աղբյուր՝ Ուռուցքաբանական ազգային կենտրոն, 2017

Գծապատկեր 26-ի տվյալները հուշում են, որ՝

- **հիմքեր չկան ենթադրելու, որ կրծքագեղձի քաղցկեղն ուշ՝ IV փուլում, հայտնաբերելու հավանականությունը նվազում է:**

Այսպիսով, 2017թ.-ին IV փուլում հայտնաբերվել է կրծքագեղձի քաղցկեղների 20%-ը, այն դեպքում, երբ, օրինակ, 2011թ.-ին՝ 26%-ը: Այսինքն 2007թ.-ի համեմատ ցուցանիշը բարելավվել է:

Հետևաբար, կարելի է ենթադրել, որ.

- **կանանց մոտ կրծքագեղձի քաղցկեղով ապրելիության աճը պայմանավորված է առավելապես բուժման որակի աճով:**

Անշուշտ, ողջունելի է քաղցկեղի բուժման ոլորտում ցանկացած առաջընթացը: Պետք է ենթադրել, որ Հայաստանում առկա է կանանց կրծքագեղձի քաղցկեղի բուժման արդյունավետության բարձրացման նշանակալի պոտենցիալ, ինչը կապված է քաղցկեղի վաղ հայտնաբերման հետ: Հարկ է նշել, որ ցանկացած նոր տեխնոլոգիա՝ ներդրման փուլում, նախորդից ավելի թանկ է: Ուստի, պետք է ենթադրել, որ քաղցկեղի բուժման որակի բարելավումը Հայաստանում զուգորդված է դրա գնի բարձրացմամբ:

Հետևաբար, քաղցկեղի վաղ հայտնաբերման ոլորտում առաջընթացը կարող է որակապես բարելավել քաղցկեղի բուժման արդյունավետությունը՝ միաժամանակ զգալիորեն կրճատելով անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

Այսինքն՝

- քաղցկեղի վաղ հայտնաբերմանն ուղղված ֆինանսական միջոցները կարող են կրճատել կոնկրետ հիվանդի բուժման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների օգտագործումը և կիրառվել՝ ավելի մեծաքանակ հիվանդների բուժման համար: Վերջին հաշվով, վաղ հայտնաբերման բուժումն ավելի արդյունավետ է և շահավետ, քան բուժման նոր տեխնոլոգիաների ներդրումը:

Չարորակ նորագոյացությունների հիմնախնդիրներ

Համաձայն 1985-2017թթ. վիճակագրական տվյալների ՀՀ բնակչության շրջանում ՉՆ հիվանդացությունը (կյանքում առաջին անգամ ախտորոշված/նոր դեպքեր) աճել են գրեթե 1.8 անգամ (Աղյուսակ 7):

Աղյուսակ 7. ՀՀ հիվանդացությունը չարորակ նորագոյացություններով

Տարիներ	Կյանքում առաջին անգամ հաստատված ախտորոշումով և ուռուցքաբանական հիմնարկներում գրանցված չարորակ նորագոյացություններով հիվանդների թիվը		Տարեվերջին ուռուցքաբանական հիմնարկներում դիսպանսերային հսկողության տակ գտնվող հիվանդների թիվը	
	Բ.թ.	հ.թ.	Բ.թ.	հ.թ.
1985	4710	140.6	17584	522.0
1987	5119	148.8	20045	578.7
1988	5227	151.0	21228	613.4
1989	5270	150.9	22067	632.0
1990	5162	145.1	20929	588.2
1991	4905	135.7	21787	602.6
1992	4462	121.1	21584	585.6
1993	4586	122.9	21670	580.7
1994	4515	120.5	21709	578.4
1995	4705	125.2	21290	565.3
1996	4757	126.1	20721	548.1
1997	4709	124.4	20602	543.4
1998	5145	135.6	21605	568.8
1999	5415	142.5	22589	593.9
2000	5413	142.3	21972	577.8
2001	5666	149.1	23451	617.1
2002	5737	178.6	24384	759.6
2003	5951	185.3	25580	796.3
2004	6174	192.1	26522	824.7
2005	6396	198.8	26512	823.6
2006	7163	222.4	27963	867.6
2007	7294	226.1	28439	880.4
2008	7336	226.8	28692	886.1
2009	7657	236.1	30117	926.8
2010	7593	233.2	31550	967.0
2011	7858	240.4	32580	995.0
2012	7877	260.5	34400	1136.5
2013	7911	261.8	36660	1215.1
2014	8365	277.6	38918	1292.7
2015	8372	278.6	40862	1362.7
2016	8376	279.9	42821	1434.0
2017	8389	281.6	43830	1474.4

հ.թ.-100000 բնակչի հաշվով

Չարորակ նորագոյացություններով հիվանդացությունը կտրուկ աճում է 35-ից բարձր տարիքային խմբերում և հասնում է գագաթնակետին 65 և բարձր տարիքի բնակչության շրջանում (Աղյուսակ 8):

Աղյուսակ 8. ՀՀ բնակչության հիվանդացությունը չարորակ նորագոյացություններով ըստ սեռա-տարիքային խմբերի

Տարիք	2016թ.						2017թ.					
	Կյանքում առաջին անգամ հաստատված ախտորոշումով և ուռուցքաբանական հիմնարկներում գրանցված չարորակ նորագոյացություններով հիվանդների թիվը						Կյանքում առաջին անգամ հաստատված ախտորոշումով և ուռուցքաբանական հիմնարկներում գրանցված չարորակ նորագոյացություններով հիվանդների թիվը					
	ընդամենը		տղամարդ		կին		ընդամենը		տղամարդ		կին	
	բ.թ.	հ.թ.	բ.թ.	հ.թ.	բ.թ.	հ.թ.	բ.թ.	հ.թ.	բ.թ.	հ.թ.	բ.թ.	հ.թ.
0-14	65	11.0	40	12.7	25	9.0	35	5.9	17	5.3	18	6.4
15-17	10	9.8	5	9.2	5	10.5	8	8.0	7	13.2	1	2.2
18-24	38	12.8	18	12.2	20	13.5	43	15.8	24	17.6	19	13.9
25-34	157	29.5	64	25.0	93	33.5	168	31.7	55	21.7	113	40.7
35-44	373	95.7	124	67.5	249	120.8	416	104.2	127	67.6	289	136.8
45-54	1066	288.9	451	270.1	615	304.5	959	271.1	395	248.3	564	289.8
55-59	1101	507.1	537	548.5	564	473.2	1136	520.6	572	586.1	564	467.7
60-64	1219	754.8	653	924.9	566	622.7	1289	765.9	692	942.8	597	629.1
65 և բարձր	4347	1309.3	2467	1877.5	1880	937.2	4335	1274.6	2331	1737.0	2004	973.3
Ընդամենը	8376	279.9	4359	306.1	4017	256.1	8389	281.6	4220	298.6	4169	266.2

հ.թ. -100000 բնակչի հաշվով

- Կանանց շրջանում զգալիորեն բարձր է կրծքագեղձի, հաստ աղու, արգանդի պարանոցի և մարմնի հիվանդացությունը (Աղյուսակ 9):
- Տղամարդկանց շրջանում՝ շնչափողի, բրոնխների, թոքի, միզապարկի, ստամոքսի շագանակագեղձի քաղցկեղով հիվանդացությունը (Աղյուսակ 9):
- Ավելին, վերջին տարիների ընթացքում և՛ կանանց, և՛ տղամարդկանց շրջանում, զգալիորեն աճել է ստամոքսի և հաստ աղու քաղցկեղով հիվանդացությունը, որը կարող է պայմանավորված լինել նստակյաց ապրելակերպով և անատոլոջ սննդակարգով (Աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Կյանքում առաջին անգամ հաստատված ախտորոշումով հաճախակի հանդիպող չարորակ նորագոյացությունների թվաքանակն ըստ սեռա-տարիքային խմբերի (բացարձակ թիվ), 2017


Հիվանդություններ	ՀՄԴ 10	Ընդամենը	0-14	15-17	18-24	25-34	35-44	45-54	55-59	60-64	65և >
Իգական Սեռ											
Կրծքագեղձի	C50	1118			1	31	124	198	196	189	379
Արգանդի պարանոցի	C53	262				9	41	64	61	33	54
Արգանդի մարմնի	C54	250					7	21	50	48	124
Զվարանի	C56	204			3	6	11	38	26	38	82
Շնչափողի, բրոնխների, թոքի	C33- C34	204					4	15	13	26	146
Ստամոքսի	C16	221				5	5	16	21	24	150
Հաստ աղու	C18	291				1	3	23	25	46	193
Արական Սեռ											
Շնչափողի, բրոնխների, թոքի	C33- C34	1109				5	13	86	161	219	625
Կոկորդի	C32	112					1	18	17	28	48
Ստամոքսի	C16	339			1	3	6	36	49	50	194
Հաստ աղու	C18	232			1		13	13	29	27	149
Լյարդի և ներյարդային լեռուղիների	C22	174	2			1	2	12	24	26	107
Շագանակագեղձի	C61	332						6	26	48	252
Միզապարկի	C67	338			1	2	8	25	44	58	200

Աղյուսակ 10. Չարորակ նորագոյացություններով հիվանդությունների տարածվածությունը (ընդհանուր հիվանդացություն), 2017

ՀՄԴ 10		Բ.թ.
Իգական սեռ		
Կրծքագեղձի	C50	10784
Արգանդի պարանոցի	C53	3116
Արգանդի մարմնի	C54	1912
Չվարանի	C56	1256
Շնչափողի, բրոնխների, թոքի	C33- C34	325
Ստամոքսի	C16	594
Հաստ աղիքի	C18	1395
Չարորակ լիմֆոմաներ	C81-90, C96	1033
Արական սեռ		
Շնչափողի, բրոնխների, թոքի	C33- C34	1649
Կոկորդի	C32	1138
Ստամոքսի	C16	999
Հաստ աղիքի	C18	1243
Շագանակագեղձի	C61	1330
Միզապարկի	C67	2328
Չարորակ լիմֆոմաներ	C81-90, C96	1186

- Թոքի և ստամոքսի քաղցկեղի դեպքերի ավելի քան 63.4%-ը հայտնաբերվում են IV փուլում, իսկ III փուլում հայտնաբերված դեպքերի տեսակարար կշիռը կազմում է 15-17%: Այսինքն, դեպքերի մոտ 80%-ը հայտնաբերվում են հիվանդության ուշ փուլերում, որով պայմանավորված է բուժման արդյունավետության և ապրելիության ցուցանիշը:

Գծապատկեր 27. Չարորակ նորագոյացությունների հայտնաբերումն ըստ նոզոլոգիաների և փուլերի, 2017




Հիվանդանոցային մահաբերություն

Հիվանդանոցային մահաբերության ընդհանուր ցուցանիշը և յուրաքանչյուր հիվանդության մահաբերության ցուցանիշները նկարագրում են հիվանդանոցային բուժօգնության կազմակերպման և իրականացման որակը:


Հիվանդանոցային մահաբերության ընդհանուր ցուցանիշը 1990-2017թթ. ընթացքում տրված է Գծապատկեր 28-ում: Գծապատկերի տվյալները ցույց են տալիս, որ 2001-2014թթ. ընթացքում տեղի է ունեցել հիվանդանոցային մահաբերության ցուցանիշի շարունակական նվազում, իսկ 2015-2016թթ ընթացքում այն պահպանվել է, իսկ 2017թ.-ին այն կազմում է 1.3, ինչը վկայում է հիվանդանոցային բուժօգնության կազմակերպման և որակի բարելավման մասին:

Գծապատկեր 28. Հիվանդանոցային մահաբերություն՝ 100 ընդունվածների հաշվով, բոլոր դեպքերը, 1990, 1995 և 2000-2017



Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Գծապատկեր 29. Հիվանդանոցային մահաբերություն՝ 100 ընդունվածների հաշվով, ընտրված հիվանդություններ, 1990, 1995 և 2000-2017



◆ ՌԻԱՀ
 ■ ՍՍԻԲ
 ▲ Այրվածքներ
 ◆ Շաքարային դիաբետ
 ◆ Տուբերկուլոզ
 ՌԻԱՀ - Որդեղանոցային հիվանդություններ, ՍՍԻԲ - Սրտամկանի սուր ինֆարկտ
 Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Եթե դիտարկենք հիվանդանոցային մահաբերությունն ըստ առանձին հիվանդությունների (Գծապատկեր 29), ապա կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները՝

- 2008-2017թթ. ընթացքում նկատվում է ուղեղանոթային հիվանդություններից հիվանդանոցային մահաբերության նվազման միտում,
- 2012-2017թթ. ընթացքում նկատվում է այրվածքներից հիվանդություններից հիվանդանոցային մահաբերության աճ,
- 2014-2017թթ. ընթացքում նկատվում է տուբերկուլոզից հիվանդանոցային մահաբերության աճ,
- 2014-2017թթ. ընթացքում նկատվում է շաքարային դիաբետից հիվանդանոցային մահաբերության աճ:

Կանանց և երեխաներին մատուցվող առողջապահական ծառայությունների որակ


Կանանց և երեխաներին մատուցվող առողջապահական ծառայությունների որակը գնահատված է երկու խումբ ինդիկատորներով.

1. ծննդյան և հետծննդյան շրջանի բարդությունները նկարագրող ինդիկատորներ և կեսարյան հատումներ,
2. հղիների նախածննդյան խնամքի, կրծքով սնուցման և պատվաստումների ինդիկատորներ:

Ծննդյան և հետծննդյան շրջանի բարդություններ

2010-2017թթ. ընթացքում Հայաստանում ծննդաբերական և հետծննդյան շրջանի միզասեռական օրգանների և սակավարյունությունների հետ կապված նշանակալի բարդությունները գրեթե անփոփոխ են (Գծապատկեր 30):

Գծապատկեր 30. Ծննդաբերական և նախաձննդյան շրջանի որոշ բարդությունների ցուցանիշներ՝ 1 000 ծնունդի հաշվով, 1990, 1995 և 2000-2017




Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Գծապատկերի տվյալները փաստում են, որ 2002-2010թթ. ընթացքում նկատվել է այդ ցուցանիշների նվազում, սակայն 1990թ.-ի համեմատ նույն ցուցանիշները մնում են շատ բարձր մակարդակի վրա:

Կեսարյան հատումներ

Հայաստանում կեսարյան հատումների քանակն անշեղորեն աճում է և 2017թ.-ին հասել է 310-ի՝ 1000 ծնունդի հաշվով: Ընդամենը կատարվել է 11 727 կեսարյան հատում (Գծապատկեր 31):

Գծապատկեր 31. Կեսարյան հատումները՝ 1 000 կենդանի ծնունդի հաշվով և դրանց բացարձակ քանակը, 1990, 1995 և 2000-2017



Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Հայտնի է, որ կեսարյան հատումներով ծննդաբերությունների ընթացքում ավելի հաճախ են զարգանում հետծննդյան բարդություններ: Բացի դրանից, բժիշկները խորհուրդ են տալիս կեսարյան հատումով ծննդաբերած կանանց՝ ծննդաբերել 2-3 տարի անց:

Հետևաբար.

- Հայաստանում կեսարյան հատումների նվազեցումը, ծննունդների թվի ավելացման գործոն է:


Մոր և մանկան առողջության պահպանում

Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում դիտարկվել են հետևյալ ինդիկատորները.

- Հղիների նախաձննդյան խնամքի վաղ ընդգրկում,
- կրծքով սնուցման ընդգրկում,
- պատվաստումներ:

Հղիների նախաձննդյան խնամքի վաղ ընդգրկում: 2005թ.-ից ի վեր այս ցուցանիշը անշեղորեն աճել է մինչև 2013թ.-ը, սակայն այն դեռևս փոքր է «Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015թթ.» ազգային ռազմավարությամբ նախատեսված ցուցանիշի արժեքից՝ 90%: Ցուցանիշը դեռևս ցածր է նաև Հայաստանում 1995թ.-ի ցուցանիշից, որը կազմել է 55% (Գծապատկեր 32):

Գծապատկեր 32. Նախաձննդյան խնամքի վաղ ընդգրկում (մինչև 12 շաբաթական), հղիների տոկոսը, 1995 և 2000-2017




Աղբյուր՝ USՀԱԿ, 2018

Կրծքով սնուցման ընդգրկում: «Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015թթ.» ռազմավարությունը նախատեսում էր մինչև 2009թ.-ը ապահովել մինչև 4 ամսական երեխաների 65%-ի և մինչև 6 ամսական երեխաների 40%-ի բացառապես կրծքով սնուցումը

և պահպանել դրա շարունակականությունը երեխայի կյանքի երկրորդ տարվա ընթացքում: 2015թ.-ին այդ ցուցանիշը 2010թ. համեմատ բավական աճել է՝ 56%-ից հասնելով 73%-ի (Գծապատկեր 33):

Գծապատկեր 33. Հայաստանում կրծքով սնուցվող 0-6 ամսական երեխաների տոկոսը, 2001-2017



Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

8 Առողջապահական համակարգի կադրային ներուժ

Առողջապահության կադրային ներուժն (ԱԿՆ) ընկած է առողջապահական ծառայությունների մատուցման, բուժօգնության որակի և կառավարման հիմքում:

ԱԿՆ գնահատումն անհրաժեշտ է տարբեր նպատակներով, մասնավորապես, պլանավորման, վերահսկման և առողջապահական ոլորտի ռազմավարության, ծրագրերի և միջնորդությունների գնահատման համար: ԱԿՆ զարգացման և կառավարման հարցում հույժ կարևոր է վստահելի տեղեկատվության առկայությունը:

Առողջապահական համակարգի «Ռեսուրսների կազմավորում» գործառույթը ներառում է համակարգի մարդկային ռեսուրսների պատշաճ պատրաստումը, շարունակական մասնագիտական կրթության զարգացումը, մասնագետների առկայությունը, ինչպես նաև առողջապահական հաստատություններում կադրերի համամասնորեն բաշխումը:

Վերջին տարիներին Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության եվրոպական գրասենյակն ընդունել է մի շարք որոշումներ (EUR/RC57/R1, EUR/RC59/R4)՝ ուղղված տարածաշրջանում առողջապահական կադրային ներուժի հիմնախնդիրների լուծմանը, որոնք անդամ երկրներին առաջարկում են բարելավել առողջապահական համակարգի կադրային ներուժի վերաբերյալ տեղեկատվությունը, մշակել և հաստատել ռազմավարական փաստաթղթեր՝ կադրային ներուժի զարգացման վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2014թ.-ի փետրվարի 6-ի նիստի N5 արձանագրային որոշմամբ հաստատվեց Առողջապահության ոլորտի մարդկային ներուժի զարգացման ռազմավարության և միջոցառումների ծրագիր, որտեղ համապարփակ ներկայացված են առողջապահության համակարգում մարդկային ներուժի զարգացման քաղաքականությանն ուղղված քայլերը:

Առողջապահական համակարգերի զարգացման և բնակչությանն որակյալ բժշկական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ է բուժաշխատողների մասնագիտական կրթության և շարունակական զարգացման գործընթացների ապահովում:

Միջազգային փորձը փաստում է, որ շարունակական մասնագիտական զարգացումը նպաստում է բժշկական ծառայությունների որակի բարձրացմանը, հիվանդացության, մահացության նվազեցմանը և այլ առողջապահական ցուցանիշներ ի բարելավմանը:

Հաշվի առնելով հիշյալ խնդիրները և այն հանգամանքը, որ շարունակական մասնագիտական զարգացումը համարվում է որակյալ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման, հիվանդին չվնասելու և նրա առողջական խնդիրներն անհրաժեշտ մակարդակով լուծելու համար պարտադիր պայման, Հայաստանում ևս ներդրվեց վերոնշյալ համակարգը, ինչի կապակցությամբ

կատարվեցին մի շարք օրենսդրական փոփոխություններ և լրացումներ, մասնավորապես՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-113-Ն, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների ընդունումը: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-113-Ն օրենքի առանձին գլխում (գլուխ 3.2) սահմանվեցին շարունակական մասնագիտական զարգացման կազմակերպման գործընթացի իրականացման սկզբունքները, շնորհվող ՇՄՁ կրեդիտների լրացման կարգը, շարունակական մասնագիտական զարգացման տեսակներն իրականացնող կազմակերպությունները, հավատարմագրմանը ներկայացվող հիմնական պահանջները, հստակ տարանջատվեցին բուժաշխատողները՝ կրթության մակարդակի և առողջապահության բնագավառում իրականացվող գործունեությանը համապատասխան:

Ձեկույցի այս բաժինը վերաբերվում է Հայաստանի առողջապահության համակարգի կադրային ներուժի՝ բժիշկների և միջին բուժանձնակազմի պատրաստման, մասնագետների առկայության, բաշխվածությանն և պահանջարկի առանցքային հիմնախնդիրներին: «Առողջապահական համակարգի կադրային ներուժ» գլուխը ներառում է Առողջապահության համակարգի գործունեության գնահատման (ԱՀԳԳ) 2009թ.-ի զեկույցի և դրանից հետո տեղ գտած միտումները:

Առողջապահական համակարգի կադրային ներուժի պատրաստում

Հայաստանի Հանրապետությունում բժշկական կադրերի մասնագիտական կրթական պատրաստումն իրականացվում է Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում (ԵՊԲՀ) և 5 ոչ պետական բարձրագույն բժշկական ուսումնական հաստատություններում: Միջին բուժանձնակազմի մասնագետների պատրաստումն իրականացվում է 20 միջին մասնագիտական բժշկական հաստատություններում, որոնցից 12-ը պետական են, իսկ 8-ը՝ ոչ պետական:


Աղյուսակ 11. ՀՀ բարձրագույն և միջին մասնագիտական բժշկական ուսումնական հաստատությունների թիվը, 2010-2015

		2010	2011	2012	2013	2014	2015
ԲՈՒՀ	Պետական	1	1	1	1	1	1
	Ոչ պետական	6	6	6	6	5	5
	Ընդամենը	7	7	7	7	6	6
Միջին մասնագիտական	Պետական	12	11	11	11	11	12
	Ոչ պետական	10	10	11	12	13	8
	Ընդամենը	22	21	22	23	24	20

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, 2015

Բարձրագույն բժշկական ուսումնական հաստատությունների շրջանավարտների թիվը պետական և ոչ պետական բուհերում ներկայացված են Գծապատկեր 34, Աղյուսակ 12 և Աղյուսակ 13-ում: Համաձայն այդ տվյալների, վերջին տարիների ընթացքում զգալիորեն մեծ է ստոմատոլոգ մասնագիտությամբ շրջանավարտների թիվը: Սակայն, մյուս կողմից, 2010թ.-ից զուգահեռաբար նվազում է գործող ստոմատոլոգների թիվը, ինչը կարող է պայմանավորված լինել մասնագետների արտագաղթով դեպի Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) երկրներ, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնություն, որտեղ առկա է այդ մասնագետների մեծ պահանջարկ, բարձր վարձատրություն և մասնագիտական զարգացման հնարավորություն:

Գծապատկեր 34. Բարձրագույն բժշկական պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների շրջանավարտների թիվն ըստ մասնագիտությունների (ոչ պետական հաստատությունների տվյալները ներկայացված են միայն 2008-2017թթ.)



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, 2017

Աղյուսակ 12. Բարձրագույն բժշկական պետական ուսումնական հաստատությունների շրջանավարտների թիվն ըստ մասնագիտությունների, 2010-2017

Մասնագիտություններ	Ընդամենը							
	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Բուժական գործ	284	344	295	294	305	277	565	433
Բուժական գործ զինված ուժերում	33	33	39	31	23	10		
Ստոմատոլոգիա	132	-	250	265	219	115	217	155
Ղեղազիտություն	58	-	99	96	63	41	119	61
Հանրային առողջություն						10	11	6
Ընդամենը	507	377	683	686	610	453	912	655

Աղյուսակ 13. Բարձրագույն բժշկական ոչ պետական ուսումնական հաստատությունների շրջանավարտների թիվն ըստ մասնագիտությունների, 2010-2017

Մասնագիտություններ	Ընդամենը							
	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Բուժական գործ	120	231	125	137	150	101	172	152
Ստոմատոլոգիա	257	535	360	346	378	202	497	232
Ղեղազիտություն	36	63	57	42	48	30	26	31
Հանրային առողջապահություն	90	-	-	-	-	-		
Ընդամենը	503	829	542	525	576	333	695	415

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, 2015

1990-ական թվականների կեսերին առողջապահական համակարգն ուներ մեծ կադրային ներուժ (39 բժիշկ 10 000 բնակչի հաշվով), որոնց պատրաստման գործընթացը մինչև 2002թ. իրականացվում էր ԵՊԲՀ-ում, որը միակ հավատարմագրված բժշկական կրթություն իրականացնող բարձրագույն հաստատությունն էր: 1990-1999թթ. տարբեր մասնագիտություններով բժիշկ շրջանավարտների տարեկան թիվը կազմում էր 600-700 շրջանավարտ, իսկ միջին բուժանձնակազմինը՝ 1 200-2 500:

Սկսած 2004թ.-ից բժշկական կադրերի պատրաստումը կտրուկ աճեց բժշկական կրթություն իրականացնող հավատարմագրված պետական, ինչպես նաև ոչ պետական բարձրագույն հաստատությունների շնորհիվ: Եթե 2006-2016թթ. ժամանակաշրջանում ԵՊԲՀ-ը պատրաստել է 6455 շրջանավարտ, ապա 2017թ.-ին բոլոր պետական և ոչ պետական, բարձրագույն բժշկական հաստատություններն ավարտել են ընդհանուր թվով 1070 շրջանավարտ:

2016թ.-ին ԵՊԲՀ շրջանավարտների թիվը կազմել է 912, ապա 2016թ.-ին՝ 655, այսինքն՝ վերջին երեք տարիների ընթացքում, բոլոր մասնագիտություններով շրջանավարտների թիվն նվազել է:

Նույն ժամանակահատվածում ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների թիվը կրճատվել է 1.6 անգամ:

2017թ.-ին բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների 63%-ն ավարտել է ԵՊԲՀ-ը, որոնցից 24%-ը՝ ստոմատոլոգիա, իսկ 66%-ը՝ բուժական գործ մասնագիտությամբ: Ոչ պետական բարձրագույն բժշկական հաստատությունների շրջանավարտների գերակշռող մասը՝ 56%-ը, մասնագիտությամբ նույնպես ստոմատոլոգ են:

Աղյուսակ 14. Միջին մասնագիտական բժշկական պետական ուսումնական հաստատությունների շրջանավարտների թվաքանակն ըստ մասնագիտությունների, 2010-2017

Մասնագիտություններ	Ընդամենը							
	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Բուժքույրական	1480	1282	890	895	796	1079	679	572
Մանկաբարձական	831	698	553	433	417	490	266	215
Դեղագործական	579	483	480	478	503	548	458	420
Ատամնատեխնիկական	370	328	309	402	418	380	372	251
Բուժական կոսմետոլոգիա	83	21	42	57	96	92	180	131
Քույրական գործի կազմակերպում	36	150	185	104	204	179	155	127
Բուժական մերսում	34	14	14	16	28	19	21	8
Հիվանդի ընդհանուր խնամք						18	19	20
Ընդամենը	3413	2976	2473	2385	2462	2805	2150	1744

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, 2015

Աղյուսակ 15. Միջին մասնագիտական բժշկական ոչ պետական ուսումնական հաստատությունների շրջանավարտների թվաքանակն ըստ մասնագիտությունների, 2010-2017

Մասնագիտություններ	Ընդամենը							
	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Բուժքույրական	59	86	50	91	59	80	71	50
Մանկաբարձական	74	70	35	70	68	30	40	21
Դեղագործական	25	60	75	152	148	74	78	40
Ատամնատեխնիկական	22	37	57	162	83	88	91	72
Բուժական կոսմետոլոգիա	-	21	27	34	47	61	65	47
Քույրական գործի կազմակերպում	-	-	-	-	-		13	8
Բուժական մերսում	-	-	-	-	-			
Ընդամենը	180	274	244	509	405	333	358	238

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, 2015

Առողջապահական համակարգի կադրային ներուժի բաշխում

Բժիշկների և բուժքույրերի կազմը և բժիշկ/բուժքույր հարաբերակցությունը

Հայաստանի առողջապահության համակարգի կադրային ներուժի առկայության, աշխարհագրական, ըստ մասնագիտությունների բաշխվածության և ապահովվածության վերաբերյալ վերլուծություն իրականացնելու համար դիտարկվել են 2001-2017թթ. Առողջապահության տեղեկատվական վերլուծական կենտրոնի (ԱՏՎԱԿ) տվյալների օրինաչափությունները և միտումները:

Ըստ 2017թ.-ի տվյալների, ՀՀ պետական և ոչ պետական բժշկական, գիտական և գիտահետազոտական, բարձրագույն և միջին բժշկական մասնագիտական ուսումնական հաստատություններում գործող կադրային ներուժի (բժիշկներ, բուժքույրեր) բացարձակ թիվը կազմել է 29 760 բուժաշխատող, իսկ բժիշկների բացարձակ թիվը բոլոր մասնագիտություններով (ներառյալ ատամնաբույժերը)՝ 12 964 (43.51/10 000 բնակչի հաշվով), որը 2011թ.-ի տվյալների համեմատ կրճատվել է 526 ով 13 490, (41/10 000 բնակչի հաշվով), միջին բուժանձնակազմինը՝ 1688-ով, 2017թ.-ին կազմելով 16 796 (56.5/ 10 000 բնակչի հաշվով):

Աղյուսակ 16. Առողջապահության համակարգի կադրեր և ռեսուրսներ, 2005-2017 (ներառյալ մասնավոր ստոմատոլոգիական կաբինետները)

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Բժիշկներ՝ բոլոր մասնագիտություններով (ներառյալ ատամնաբույժերը)	12307	12388	12251	12964	13177	13591	13490	12922	12664	12896	13117	13148	12964
Միջին բուժանձնակազմ	18364	18574	18595	18594	18516	18649	18484	18784	18426	18053	17632	17464	16796
Ընդամենը	30671	30962	30846	18594	31693	32240	31974	31706	31090	30949	30749	30612	29760
Հիվանդանոցների թիվը	145	140	135	130	127	130	130	129	129	130	132	129	125
Հիվանդանոցային մահճակալների թիվը (հազար)	14.4	14.3	13.1	12.4	12.1	12.1	12.2	12.2	12.3	12.5	12.5	12.5	12.5
ԱՄՊ բժշկական օգնություն իրականացնող հաստատություններ	458	460	467	474	487	504	506	513	514	509	504	505	501
Դեղագեղաներ	143	157	163	176	204	214	199	176	228	232	225		
Դեղագործներ	113	118	121	124	125	129	137	130	124	133	116		


Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2015

2009թ.-ից մինչև 2011թ. բուժքույրերի թիվը տատանվել է 18 181-18 820 սահմաններում: Ընդ որում, 2012թ.-ից նրանց թիվը դրսևորում է նվազման միտում (Գծապատկեր 35): 2011թ.-ից ի վեր գրանցվել է բոլոր մասնագիտություններով բժիշկների թվաքանակի նվազում, իսկ 2015թ.-ին դիտվում է աճ ապա նորից նվազում՝ 2017թ.ին:

Համաձայն Հայաստանի առողջապահական համակարգի օպտիմալացման հայեցակարգի տրամաբանության, ակնկալվում էր բժիշկ/բուժքույր հարաբերակցության աճ: 2010-2015թթ.

բժիշկ/բուժքույր հարաբերակցությունը կայունացել է նույն մակարդակի վրա՝ 0,74, ապա տեսանելի է աճ՝ մինչև 0,77:

Գծապատկեր 35. Հայաստանում առկա բժիշկների, բուժքույրերի քանակ, բուժքույր/բժիշկ հարաբերակցություն, 2001-2017



Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2015

Բժիշկների և բուժքույրերի բաշխման մարզային համամասնություն

Ինչպես արդեն նշեցինք 2017թ. դրությամբ բժիշկների թիվը բոլոր մասնագիտություններով (ներառյալ ատամնաբույժերը) կազմել է 12 964 (43.6/10 000 բնակչի հաշվով), իսկ միջին բուժանձնակազմի՝ 16 796 (56.5/10 000 բնակչի հաշվով):

Համաձայն 2017թ. տվյալների, ԱԱՊ օղակում բժիշկների թիվը կազմել է՝ 5149 (17.24/10 000 բնակչի հաշվով), միջին բուժանձնակազմի թիվը՝ 7706 (25.86/10 000), իսկ հիվանդանոցային օղակում օգնություն իրականացնող բուժհաստատություններում բժիշկների թիվը կազմել է՝ 4231 (14.17/10 000 բնակչի հաշվով), միջին բուժանձնակազմի թիվը՝ 8346 (28.01/10 000):


Ընդ որում, բնակչության ապահովվածությունը բժշկական կադրերով անհրաժեշտ է գնահատել ըստ առկա անմիջական բժշկական օգնություն իրականացնող բժիշկների և բուժքույրերի թվի:

Երևանի և մարզերի բնակչության ապահովվածությունն անմիջական բժշկական օգնություն իրականացնող բժիշկներով անհավասարաչափ է բաշխված:

Երևանում 2017թ.-ին ցուցանիշը կազմել է 57.8/10 000 բնակչի հաշվով (Գծապատկեր 145), իսկ մարզերում այդ ցուցանիշը չի գերազանցել 21.4/10 000 (Լոռու մարզ), ընդ որում ամենացածր ցուցանիշը գրանցվել է Գեղարքունիքում (12.7՝ 10 000 բնակչի հաշվով) և Արմավիրում (13.6):

ԱԱՊ և հիվանդանոցային հաստատություններում գործող բուժքույրերով ապահովվածությունը նույնպես անհավասարաչափ է՝ Երևանում (76.5՝ 10 000 բնակչի հաշվով), իսկ մարզերում ցուցանիշն անհամեմատ ավելի ցածր է (Գծապատկեր 36):

Գծապատկեր 36. Բնակչության ապահովվածությունն անմիջական բժշկական օգնություն իրականացնող (ԱԱՊ և հիվանդանոցային օղակ) կադրային ներուժով, 10 000 բնակչի հաշվով, 2017




Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Կադրային ներուժի բաշխումն առողջության առաջնային պահպանման և հիվանդանոցային բժշկական օգնություն իրականացնող հաստատություններում

Հայաստանի առողջապահական համակարգի օպտիմալացման գործընթացի համաձայն 2000-2001թթ. ժամանակահատվածում ԱԱՊ և հիվանդանոցային օղակում գործող բժիշկների թիվը կրճատվել է 511 բժիշկով և 685 բուժքույրով: Ընդ որում, բժիշկների 90%-ը կրճատվել է ԱԱՊ օղակից (2000թ.-ին՝ 5 074-ից մինչև 2001թ.-ին՝ 4 607 բժիշկ, այսինքն՝ 467-ով):

Գծապատկեր 37. Բժիշկների թիվն ԱԱՊ և հիվանդանոցային օղակներում, 2000-2017



Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Այնուամենայնիվ, սկսած 2002թ.-ից և՛ ԱԱՊ, և՛ հիվանդանոցային օղակներում բժիշկների թիվն աճել է և 2017թ. այն կազմել է 9424 (Գծապատկեր 37):

Բարձրագույն բժշկական պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների ստոմատոլոգիական և դեղագիտական ֆակուլտետների շրջանավարտների թիվը 2000-2017թթ. ներկայացված է Աղյուսակ 17-ում: 2011-2017թթ. ընթացքում ստոմատոլոգ մասնագետների թիվը նվազել է 148-ով:

Աղյուսակ 17. Բարձրագույն բժշկական պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների ստոմատոլոգիական և դեղագիտական ֆակուլտետների շրջանավարտների թիվը, 2000-2017

Տարի	Ստոմատոլոգիական ֆակուլտետ	Դեղագիտական ֆակուլտետ
2000	62	31
2001	68	46
2002	73	29
2003	68	54
2004	85	45
2005	82	41
2006	79	35
2007	72	32
2008 ²	322	73
2009	306	77
2010	389	94
2011	535	63
2012	610	156
2013	611	138
2014	597	111
2015	317	71
2017	387	92

Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2015

2000-2010թթ. ընթացքում առողջապահության համակարգում գործող ստոմատոլոգների թիվն ընդհանուր առմամբ աճել է 2.6 անգամ՝ 834-ից մինչև 2 180 (Աղյուսակ 18): Այնուհետև 2011թ.-ից մինչև 2017թ. այն նվազել է 1.4 անգամ:


²2000-2007 թվականների ժամանակահատվածում ներկայացված են Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ստոմատոլոգիական և դեղագիտական ֆակուլտետների շրջանավարտների տվյալները, 2008 թվականից ընդգրկվել են նաև 6 բարձրագույն բժշկական ոչ պետական ուսումնական հաստատությունների տվյալները:

Աղյուսակ 18. ՀՀ ստոմատոլոգների թիվն ըստ պրոֆիլների, 2000-2017

Տարի	Ստոմատոլոգներ թերապևտիկ և վիրաբուժական պրոֆիլի Հոդամենը	Ստոմատոլոգներ թերապևտիկ պրոֆիլի	Ստոմատոլոգներ վիրաբուժական պրոֆիլի
2000	834	659	175
2001	614	498	116
2002	594	474	120
2003	780	610	170
2004	884	682	202
2005	1171	969	202
2006	1254	1066	188
2007	1177	954	223
2008	1755	1508	247
2009	1987	1711	276
2010	2180	1843	337
2011	2097	1788	309
2012	1782	1460	322
2013	1606	1319	287
2014	1629	1292	337
2015	1606	1278	328
2017	1554	1223	331

Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Գծապատկեր 38. Մասնավոր ստոմատոլոգիական կաբինետների և ստոմատոլոգների թիվը, 2004-2017



Աղբյուր՝ ԱՏՎԱԿ, 2018

Առողջության առաջնային պահպանման օդակի ընդհանուր պրակտիկայի բժիշկներ

Առողջապահական համակարգում բժիշկների թափուր աշխատատեղեր


Հայաստանում բժիշկների պատրաստման գործընթացի աճին զուգահեռ ավելանում է նաև բժիշկների թափուր աշխատատեղերի քանակը:

2003-2016թթ.-ին բժիշկների թափուր աշխատատեղերի շարժընթացը կարելի է բաժանել երեք փուլի (Գծապատկեր 39).

- 2003-2006թթ. տարբեր մասնագիտություններով բժիշկների պահանջարկն աճել է 1.4 անգամ (361-ից 512-ը),


- 2007-2012թթ. թափուր աշխատատեղերի քանակը նվազել է 1.3 անգամ,
- 2014-2016թթ. մասնագետների պահանջարկն աճել է 1.5 անգամ:

Գծապատկեր 39. Բժիշկների թափուր աշխատատեղեր, 2003-2018




Հատկապես բոլոր մասնագիտություններով բժիշկների պահանջարկը մեծ է հեռավոր մարզերում՝ Լոռիում (46), Սյունիքում (39), Գեղարքունիքում (38), Շիրակում (34) (Գծապատկեր 40): Ըստ մասնագիտությունների առավել պահանջված են ընտանեկան բժիշկները, անեսթեզիոլոգները, թերապևտները, նյարդաբանները, էնդոկրինոլոգները և այլն (Գծապատկեր 41):

Գծապատկեր 40. Բժիշկների թափուր աշխատատեղերն ըստ մարզերի, 2018թ. հուլիս ամսվա դրությամբ



Աղբյուր՝ ՀՀ ԱՆ, 2018

Գծապատկեր 41. Բժիշկների թափուր աշխատատեղերն ըստ մասնագիտությունների, 2018թ. հուլիս ամսվա դրությամբ



Աղբյուր. ՀՀ ԱՆ, 2016

Ներկայում բավականին մեծ է կադրային ներուժի արտագաղթը Ռուսաստանի Դաշնություն և Եվրոպական տարածաշրջանի երկրներ: Հայաստանը հանդիսանում է այլ երկրների համար կադրային ներուժի պատրաստող:

Մարզերի կադրային պահանջարկի համալրման հիմնական մեխանիզմներից մեկն է պետական պատվերի շրջանակում կլինիկական օրդինատուրան ավարտած մասնագետների պարտադիր նշանակման պրակտիկան: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ աշխարհի ավելի քան 70 երկրներում կիրառվում է պարտադիր աշխատանքի նշանակելու փորձը:

ԲԱԺԻՆ 2

9 Մեթոդաբանություն

Մահճակալային ֆոնդի օգտագործման վերլուծության համար կիրառվել է «2-1000 Մահճակալային ֆոնդը և դրա օգտագործումը» վիճակագրական հաշվետվական ձևը, որը հիվանդանոցները ներկայացնում են տարեկան կտրվածքով: Այդ փաստաթղթերի հիման վրա ԱՏՎԱԿ-ում կազմավորվում է նույն անվամբ՝ «2-1000 Մահճակալային ֆոնդը և դրա օգտագործումը» տվյալների շտեմարանը:

2010-2017 թթ տվյալները պարունակող շտեմարանում առկա է 6,597 տող: Յուրաքանչյուր տողը պարունակում էր տվյալ տարվա, տվյալ հիվանդանոցի տվյալ բաժանմունքի մահճակալային ֆոնդը նկարագրող տվյալները: Յուրաքանչյուր հիվանդանոցի մեկ տարվա տվյալները կազմված էին տարբեր քանակի տողերից, քանի որ հիվանդանոցներում կան տարբեր քանակի բաժանմունքներ³:

Կրկնակի հաշվարկների բացառում

Վերլուծության ընթացքում կրկնակի հաշվարկից խուսափելու համար դուրս են բերվել «Ընդամենը» տողերը, որտեղ ներկայացված էին տվյալ տարվա, տվյալ հիվանդանոցի **բոլոր բաժանմունքների** գումարային տվյալները, վերահաշվարկվել են «Բացի դրանից վերակենդանացման» անվամբ և «վերակենդանացման՝ Մեծահասակների» բաժանմունքների տողերը, «[մանկաբուժական] այդ թվում՝ նորածինների» և [մանկաբուժական] կրծքի երեխաների» տողերը», «[Տուբերկուլոզ] այդ թվում՝ ոսկրահոդային հիվանդներ» և «Տուբերկուլոզ մեծահասակների» տողերը, «[Թմրաբանական] այդ թվում՝ ստիպողական բուժման» և «Թմրաբանական» բաժանմունքների տողերը:

Այսպիսով, կրկնակի հաշվարկների բացառմանն ուղղված գործողությունների արդյունքում շտեմարանից դուրս է բերվել 1311 տող, մնացել է՝ 5286:

³ «2-1000» շտեմարանում կար 85 համար, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում էր մեկ տիպի բաժանմունքի:

Մահճակալների տարեկան միջին զբաղվածությունը՝ օրական կտրվածքով

«2-1000» հաշվետվական ձևում և, հետևաբար, շտեմարանում առկա չէր «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը՝ օրական կտրվածքով» ցուցանիշը: Վերլուծություն կատարելու համար այն պետք էր հաշվարկել շտեմարանի յուրաքանչյուր տողի համար: Այդ ցուցանիշը հաշվարկվել է հետևյալ բանաձևով.

$$\text{«Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը՝ օրական կտրվածքով»} = \frac{\text{«Մահճակալների զբաղեցված օրերի թիվը»}}{\text{«Մահճակալների տարեկան միջին քանակը»}}$$

Մահճակալների զբաղեցված օրերի թիվը ստանալու համար գումարվում են բաժանմունքում առկա յուրաքանչյուր մահճակալի զբաղված օրերի թվերը:

Տվյալների վերլուծության ընթացքում բացահայտվեց, որ այդ հաշվարկային ցուցանիշը, սիստեմատիկ կերպով գերազանցում է 365-ը՝ տարվա օրերի քանակը, ինչը տրամաբանորեն անթույլատրելի է⁴: Այդ անտրամաբանական արդյունքների վիճակագրական վերլուծությունից պարզվեց, որ դրանք անընդունելի չափով մեծաքանակ են: ԱՏՎԱԿ մասնագետների հետ փորձագիտական քննարկումների արդյունքում պարզվեց հետևյալը, որ երբեմն մեկ օրվա ընթացքում մի քանի հոգի՝ կարճ ժամանակահատվածով՝ 1-2 ժամ զբաղեցնում է մահճակալը, արդյունքում մեծանում է «մահճակալների զբաղեցված օրերի թիվը» ցուցանիշը: Այս դեպքում հաշվարկվում է ոչ թե մահճակալի զբաղեցված օրը, այլ դեպքը, ինչն էլ առաջացնում է անճշգրտություն տեղեկատվական շտեմարանում: Աղյուսակ 19-ում տրված է «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը՝ օրական կտրվածքով» ցուցանիշը՝ բացարձակ թվերով և ըստ տարիների վերլուծված, իսկ Աղյուսակ 20-ում՝ տոկոսներով տվյալ տարվա բոլոր հիվանդանոցների բոլոր բաժանմունքների համար:

Աղյուսակ 19 «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը՝ օրական կտրվածքով» (բացարձակ թվեր)

Մահճ. տարեկան միջ. զբաղ., օր	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2010-2017
[0-365]									
[0-50]	78	76	81	100	91	94	94	94	708
(50-100]	92	86	84	98	92	105	105	113	775
(100-150]	112	103	93	95	97	100	120	114	834
(150-200]	116	110	93	83	83	88	81	90	744
(200-250]	82	85	90	83	83	72	74	73	642
(250-300]	67	58	65	72	63	51	72	60	508
(300-365]	47	50	63	53	49	69	62	59	452
[0-365] Ընդ.	594	568	569	584	558	579	608	603	4663
(365 <]									
(365-400]	10	15	13	17	24	17	19	16	131
(400-500]	17	22	19	25	38	30	30	34	215
(500-1000]	11	18	23	21	36	32	39	34	214
(1000-3818]	3	6	4	5	4	4	3	10	39
(365 <] Ընդ.	43	62	60	72	105	92	93	96	623
Ընդամենը	637	630	629	656	663	671	701	699	5286

⁴ Հիշված նահանջ տարիները, երբ անթույլատրելի է 366-ը գերազանցող արժեքը:

Աղյուսակ 20 «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը՝ օրական կտրվածքով» (մասնաբաժինը՝ %)

Մահճ. տարեկան միջ. զբաղ. օր	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2010-2017
[0-365]									
[0-50]	12.2%	12.1%	12.9%	15.2%	13.7%	14.0%	13.4%	13.4%	13.4%
(50-100]	14.4%	13.7%	13.4%	14.9%	13.9%	15.6%	15.0%	16.2%	14.7%
(100-150]	17.6%	16.3%	14.8%	14.5%	14.6%	14.9%	17.1%	16.3%	15.8%
(150-200]	18.2%	17.5%	14.8%	12.7%	12.5%	13.1%	11.6%	12.9%	14.1%
(200-250]	12.9%	13.5%	14.3%	12.7%	12.5%	10.7%	10.6%	10.4%	12.1%
(250-300]	10.5%	9.2%	10.3%	11.0%	9.5%	7.6%	10.3%	8.6%	9.6%
(300-365]	7.4%	7.9%	10.0%	8.1%	7.4%	10.3%	8.8%	8.4%	8.6%
[0-365] Շնդ.	93.2%	90.2%	90.5%	89.0%	84.2%	86.3%	86.7%	86.3%	88.2%
(365 <]									
(365-400]	1.6%	2.4%	2.1%	2.6%	3.6%	2.5%	2.7%	2.3%	2.5%
(400-500]	2.7%	3.5%	3.0%	3.8%	5.7%	4.5%	4.3%	4.9%	4.1%
(500-1000]	1.7%	2.9%	3.7%	3.2%	5.4%	4.8%	5.6%	4.9%	4.0%
(1000-3818]	0.5%	1.0%	0.6%	0.8%	0.6%	0.6%	0.4%	1.4%	0.7%
(365 <] Շնդ.	6.8%	9.8%	9.5%	11.0%	15.8%	13.7%	13.3%	13.7%	11.8%
Շնդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%

ԱՏՎԱԿ 2018թ.

Աղյուսակ 20-ից երևում է, որ 365-ից ավելի օր զբաղվածություն սիստեմատիկ առկա է եղել բոլոր դիտարկվող տարիներին: 2010-2017թթ-ին այս ցուցանիշը ունեցել է աճի միտում՝ 6.8%-ից հասնելով 13.7%-ի :

Վերը բերված վերլուծության ընթացքում, խուսափելու համար «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը, օր» ցուցանիշի շեղված գնահատականներից, որոշվեց, այդ ցուցանիշի ընդհանրացված վերլուծությունը իրականացնել առանց 365-ից մեծ ցուցանիշներով տողերի՝ Հայաստանի, մարզերի կամ բաժանմունքների կտրվածքով

Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը

Հիվանդանոցային գործունեության արդյունավետության մեկ այլ ցուցանիշ է «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը»: Այդ ցուցանիշը նույնպես հաշվարկվում է է «2-1000 Մահճակալային ֆոնդը և դրա օգտագործումը» հաշվետվական ձևի տվյալներով կազմավորված շտեմարանով: Ցուցանիշի հաշվարկի համար կիրառվում է հետևյալ բանաձևը.

Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը = («մահճակալների զբաղեցված օրերի թիվը»)/ («Հիվանդանոցից դուրս գրվածների քանակ» + «Մահացածների քանակ»)

Եթե շտեմարանի որևէ տողում «մահճակալների զբաղեցված օրերի թիվը» 0 չէ, ապա այդ ցուցանիշը տվյալ հիվանդանոցի տվյալ բաժանմունքի համար տեսականորեն հաշվարկելի է, ուստի բնական է համարել, որ այդ դեպքում տվյալ տարվա ընթացքում հիվանդանոցի տվյալ բաժանմունք ընդունվել են հիվանդներ: Ընդ որում, այս ցուցանիշի արժեքը նույնպես չի կարող գերազանցել 365-ը և այդ ցուցանիշի «շատ մեծ» արժեքները նույնպես չեն կարող լինել մեծաքանակ: Դրանք հնարավոր են մի քանի սպեցիֆիկ հիվանդանոցային բաժանմունքների համար, օրինակ՝ հոգեբուժական կամ օնկոլոգիական:

Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակի ցուցանիշի բաշխումը տրված է Աղյուսակ 21-ում, իսկ Աղյուսակ 22-ում՝ տոկոսներով տվյալ տարվա բոլոր հիվանդանոցների բոլոր բաժանմունքների համար:

Աղյուսակ 21 Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակի ցուցանիշի բաշխումը

Հիվ. մնալու օրերի միջին քանակը	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2010-2017
[0-3]	60	65	65	78	86	88	94	105	641
(3-7]	281	289	320	312	326	330	365	359	2582
(7-10]	170	159	128	142	135	135	124	125	1118
(10-15]	58	52	55	44	47	51	54	44	405
(15-20]	16	17	12	20	21	18	22	28	154
(20-40]	26	25	27	25	18	17	18	16	172
(40-60]	7	6	6	5	6	3	5	3	41
(60-100]	3	5	2	4	2	2	3	3	24
(100-200]	1	1	4	2	2	3	2	3	18
(200-365]		4	3	5	4	5	6	4	31
(365-3989]	4	5	7	7	7	7	8	7	52
Հիվանդ չեն ունեցել	9	-	-	12	9	12	-	-	42
Ընդամենը	637	630	629	656	663	671	701	699	5286


Աղյուսակ 22 Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակի ցուցանիշի բաշխումը(%)

Հիվ. մնալու օրերի միջին քանակը	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2010-2017
[0-3]	9.4%	10.3%	10.3%	11.9%	13.0%	13.1%	13.4%	15.0%	12.1%
(3-7]	44.1%	45.9%	50.9%	47.6%	49.2%	49.2%	52.1%	51.4%	48.8%
(7-10]	26.7%	25.2%	20.3%	21.6%	20.4%	20.1%	17.7%	17.9%	21.2%
(10-15]	9.1%	8.3%	8.7%	6.7%	7.1%	7.6%	7.7%	6.3%	7.7%
(15-20]	2.5%	2.7%	1.9%	3.0%	3.2%	2.7%	3.1%	4.0%	2.9%
(20-40]	4.1%	4.0%	4.3%	3.8%	2.7%	2.5%	2.6%	2.3%	3.3%
(40-60]	1.1%	1.0%	1.0%	0.8%	0.9%	0.4%	0.7%	0.4%	0.8%
(60-100]	0.5%	0.8%	0.3%	0.6%	0.3%	0.3%	0.4%	0.4%	0.5%
(100-200]	0.2%	0.2%	0.6%	0.3%	0.3%	0.4%	0.3%	0.4%	0.3%
(200-365]	0.0%	0.6%	0.5%	0.8%	0.6%	0.7%	0.9%	0.6%	0.6%
(365-3989]	0.6%	0.8%	1.1%	1.1%	1.1%	1.0%	1.1%	1.0%	1.0%
Հիվանդ չեն ունեցել	1.4%	0.0%	0.0%	1.8%	1.4%	1.8%	0.0%	0.0%	0.8%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%

Ըստ վերլուծված ցուցանիշների աղյուսակ 22-ում ներկայացված տվյալների բաշխումը հուշում են, որ կարիք կա դիտարկելու, թե որ բաժանմունքներում է հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակի ցուցանիշը բավականաչափ մեծ:

Գծապատկեր 43-ում ներկայացված են այն բաժանմունքները, որտեղ, 2010-2017 թթ. ընթացքում, ցուցանիշի արժեքը մեծ է եղել 40-ից: Ըստ գծապատկերի առկա են մեծ արժեքներ հիմնականում չորս տիպի բաժանմունքներում՝ ցերեկային ստացիոնար, հոգեբուժական՝ մեծահասակների, տուբերկուլյոզ՝ մեծահասակների և մեծահասակների վերակենդանացման : Ակնհայտ է, որ նշված վերջին երեք տիպի բաժանմունքներում երկարատև բուժումը բնական է, սակայն ցերեկային ստացիոնարում ցուցանիշի մեծ արժեքը մատնանշում է նախորդ բաժնում արդեն բարձրաձայնված խնդրի մասին:

Գծապատկեր 43 2010-2017 թթ. ընթացքում "Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը" 40-ից մեծ լինելու դեպքերի քանակը




Հայաստանի մարզերի ընդհանուր նկարագիրը


Առողջապահական ենթակառուցվածքների տեղաբաշխման առանձնահատկությունների, նրանցում առկա ներկա վիճակի և զարգացման պլանավորման տեսակետից Հայաստանի ադմինիստրատիվ կառուցվածքը ունի կարևոր նշանակություն, որով էլ պայմանավորված է Հայաստանի տարածքի և բնակչության բաշխման առանձնահատկությունները: Հայաստանի տարածքի և բնակչության ստորաբաժանման կարևոր առանձնահատկությունն այն է, որ մայրաքաղաք Երևանում, որի տարածքը կազմում է Հայաստանի տարածքի ընդամենը 0.7%-ը, բնակվում է Հայաստանի բնակչության 36.3%-ը: Մյուս կողմից, ըստ ադմինիստրատիվ տեսակետի, Երևանը հավասարեցված է մարզերին: Այդ պատճառով, Հայաստանի մարզերը դասակարգվում են հետևյալ կերպ՝ Երևան, որպես «բացառիկ» ադմինիստրատիվ տարածք և «մնացած մարզեր»:

Այդ անհամամասնությունը կարող ենք տեսնել Գծապատկեր 156 -ում, որում պատկերված են Հայաստանի մարզերը՝ դասավորված «տարածք» և «բնակչության քանակ» կոորդինատային համակարգում: Եվ ինչպես երևում է, Երևանը «շատ հեռու է» մնացած մարզերից, որոնք «խմբված են» մեկ մեծ կլաստերում: Այդ պատճառով, Հայաստանի մարզերի միջև համեմատությունը և դրանց դասակարգումն ըստ չափերի կատարվել է նաև բացառելով Երևանը: Այդ համեմատությունը պատկերված է Գծապատկեր 44-ում, որը նույնն է ինչ Գծապատկեր 45-ն, որտեղ պարզապես չորս անգամ մեծացվել է «բնակչության քանակ» առանցքի մասշտաբը, որի հետևանքով Երևանը մնացել է Գծապատկերից դուրս (աջ կողմում), սակայն մնացած 10 մարզերի միջև տարբերությունները դարձել են «նկատելի»:

Գծապատկեր 44 ՀՀ մարզերի բնակչությունը և տարածքը՝ ներառյալ Երևանը, 2018, 1 հուլիսի



Գծապատկեր 45 ՀՀ մարզերի բնակչությունը և տարածքը՝ բացառությամբ Երևանը, 2018, 1 հուլիսի



Այդ գծապատկերի հիման վրա կարելի է կատարել Հայաստանի մարզերի մի քանի դասակարգումներ, որոնք կիրառելի են կոնկրետ վերլուծական անհրաժեշտության դեպքում:

Առաջին դասակարգման հիմքում ընկած է մարզերի բնակչությունը: Համաձայն այս դասակարգման, առանձնացվում է մարզերի երեք խումբ:

1. «Բնակչության մեծ քանակ ունեցող մարզեր»՝ Արմավիր (264,500), Արարատ (257,800), Կոտայք (251,500), Շիրակ (234,700), Լոռի (216,500), Գեղարքունիք (229,300):
2. «Բնակչության միջին քանակ ունեցող մարզեր»՝ Սյունիք (138,300), Արագածոտն (126,900) և Տավուշ (123,200):
3. «Բնակչության փոքր քանակով մարզ»՝ Վայոց Ձոր, որի բնակչությունը ընդամենը 49,500 է, այսինքն՝ մոտ 2.5 անգամ զիջում է «բնակչության միջին թվաքանակ» ունեցող մարզերի բնակչությանը:

Երկրորդ դասակարգման հիմքում ընկած է մարզերի տարածքը: Այս դեպքում ստանում ենք մարզերի երկու խումբ:

1. «Համեմատաբար մեծ տարածք ունեցող մարզեր»՝ Գեղարքունիք, Սյունիք, Լոռի: Ընդ որում, Գեղարքունիքի մարզի տարածքի մեծ մասը Սևանա լիճն է:
2. «Համեմատաբար փոքր տարածք ունեցող մարզեր»՝ Արմավիր, Արարատ, Կոտայք, Շիրակ, Արագածոտն, Տավուշ, Վայոց Ձոր:

Երրորդ դասակարգումը կատարվում էըստ բնակչության թվի և տարածքի չափի: Այս դեպքում ստանում ենք չորս խումբ:

1. «Մեծ տարածքով և մեծաքանակ բնակչությամբ մարզեր»՝ Գեղարքունիք և Լոռի:
2. «Փոքր տարածքով և մեծաքանակ բնակչությամբ մարզեր»՝ Արարատ, Արմավիր, Կոտայք և Շիրակ: Նկատենք, որ այստեղ ընդգրկված են Երևանի և Գյումրու շրջակայքի մարզերը:
3. «Մեծ տարածքով և փոքրաքանակ բնակչությամբ մարզ»՝ Սյունիք:Նշենք, որ սա նաև հեռավոր մարզ է:
4. «Փոքր տարածքով և փոքրաքանակ բնակչությամբ մարզեր»՝ Արագածոտն, Տավուշ և Վայոց Ձոր:

Բնակչության համար որակյալ հիվանդանոցային բուժօգնություն ստանալու հարցում նշանակալի ազդեցություն ունեն մարզերի բնակչության առողջապահական վարքը, , մասնավորապես հիվանդանոցային բուժօգնություն ստանալու հարցում, ինչպես նաև մարզերի հեռավորությունը մայրաքաղաքից և մեծ քաղաքներից (Գյումրի, Վանաձոր):

Վերը նշված անհամամասնությունը պատմականորեն հանգեցրել է նրան, որ Երևանում է կենտրոնացել Հայաստանի տնտեսական, մշակութային և սոցիալական, այդ թվում՝ առողջապահական ենթակառուցվածքների մեծ և առավել զարգացած մասը: Երևանում են գտնվում նաև մասնագիտացված հիվանդանոցների մեծ մասը: Այդ անհամամասնության պատճառով, Հայաստանի բնակչության շրջանում ձևավորվել է կարծիք, որ որակյալ ծառայություն, մասնավորապես հիվանդանոցային բուժօգնություն ստանալու համար անհրաժեշտ է դիմել Երևանյան հիվանդանոցներ:

Հիվանդանոցային ցուցանիշների դինամիկան Հայաստանում, 2010-2017

Աղյուսակ 23 և Աղյուսակ 24-ում տրված են Հայաստանում հիվանդանոցային բուժօգնության հիմնական ցուցանիշների դինամիկան, այդ թվում մահճակալների քանակը, ընդունված հիվանդների թիվը, մահացածների թիվը, մահճակալ-օր (մահճակալների զբաղեցված օրերի թիվը), մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը (օրերով) և հիվանդի հիվանդանոցում մնալու օրերի միջին թիվը:

Աղյուսակ 23-ում տրված են ցուցանիշների բացարձակ արժեքները, իսկ Աղյուսակ 24-ում փոփոխության դինամիկան 2010 թ. համեմատ՝ այն ընդունելով որպես 100%: Ընդ որում, Աղյուսակ 23-ում դիագրամները միմյանցից անկախ են և ցուցադրում են միայն տվյալ տողի ցուցանիշի դինամիկան, իսկ Աղյուսակ 24-ում, դիագրամների բարձրությունները նորմավորված են և համադրելի են միմյանց հետ: Դրա հետևանքով, հնարավոր է տարբեր ցուցանիշների դինամիկան նախնական, տեսականորեն համեմատել: Մասնավորապես, դիագրամներից անմիջապես երևում է, որ մահճակալային ֆոնդի հարաբերական աճը 2010-2017 թթ. ընթացքում եղել է շատ ավելի ցածր (4.1%), քան հիվանդանոց ընդունվածների քանակի հարաբերական աճը (մոտ 24.4%):

Հաշվի առնելով մեթոդաբանական նախաբանի վերլուծությունը այս աղյուսակներում մահճակալ-օր (մահճակալների զբաղեցված օրերի թիվը), մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը և հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը հաշվարկվել են առանց ցերեկային ստացիոնարի տվյալների:

Աղյուսակ 23. Հիվանդանոցային բուժօգնության հիմնական ցուցանիշները (Մահճակալ-օր, Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը և Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը տրված են առանց ցերեկային ստացիոնարի)

Ցուցանիշ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Դիագրամ
Մահճակալների միջին տարեկան թիվը	12,686	12,733	12,880	12,927	13,121	13,157	13,281	13,206	
Ընդունվել են՝ ընդամենը	334,830	358,093	389,490	388,884	424,219	412,455	418,582	416,375	
Ընդունվել են 0-14 տարեկան	52,474	60,400	64,629	69,127	81,600	81,561	84,669	82,896	
Ընունվել են 15-17 տարեկան	13,025	13,840	13,814	13,466	13,517	12,469	11,800	12,302	
Դուրս են գրվել, ընդամենը	328,987	352,157	383,716	381,450	417,198	405,158	411,241	408,844	
Մահացել են	4,592	4,750	4,978	5,104	5,376	5,586	5,675	5,403	
Մնում են	3,865	4,306	4,328	5,147	5,186	5,362	5,341	5,787	
Մահճ. x օր	2,723,956	2,760,870	2,906,805	2,913,624	3,094,889	3,015,893	3,056,181	3,042,285	
Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը, օր	215	217	226	225	236	229	230	230	
Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը	8.2	7.7	7.5	7.5	7.3	7.3	7.3	7.3	

Աղյուսակ 24 Հիվանդանոցային բուժօգնության հիմնական ցուցանիշները (ընդգրկված են բոլոր բաժանմունքները, Մահճակալ-օր, Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը և Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը տրված են առանց ցերեկային ստացիոնարի)

Ցուցանիշ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Դիագրամ
Մահճակալների միջին տարեկան թիվը	100.0%	100.4%	101.5%	101.9%	103.4%	103.7%	104.7%	104.1%	
Ընդունվել են՝ ընդամենը	100.0%	106.9%	116.3%	116.1%	126.7%	123.2%	125.0%	124.4%	
Ընդունվել են 0-14 տարեկան	100.0%	115.1%	123.2%	131.7%	155.5%	155.4%	161.4%	158.0%	
Ընունվել են 15-17 տարեկան	100.0%	106.3%	106.1%	103.4%	103.8%	95.7%	90.6%	94.4%	
Դուրս են գրվել, ընդամենը	100.0%	107.0%	116.6%	115.9%	126.8%	123.2%	125.0%	124.3%	
Մահացել են	100.0%	103.4%	108.4%	111.1%	117.1%	121.6%	123.6%	117.7%	
Մեռմ են	100.0%	111.4%	112.0%	133.2%	134.2%	138.7%	138.2%	149.7%	
Մահճ. x օր	100.0%	101.4%	106.7%	107.0%	113.6%	110.7%	112.2%	111.7%	
Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը, օր	100.0%	101.0%	105.1%	105.0%	109.9%	106.8%	107.2%	107.3%	
Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը	100.0%	94.7%	91.6%	92.3%	89.7%	89.9%	89.8%	89.9%	

Աղյուսակ 23 և 24-ի տվյալներից երևում է, որ 2010-2017 թթ. հիվանդանոցային բուժօգնության ցուցանիշների ընդհանուր միտումը եղել է աճը, բացի 15-17 տարեկան ընդունված հիվանդների թվաքանակից և հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակից:

Մասնավորապես **հիվանդանոցային մահճակալների թվաքանակը** 2010-2017-ին աճել է 12,686-ից մինչև 13,206, ընդամենը 520-ով կամ՝ 4.1%-ով:


Ընդունված հիվանդների թվաքանակն աճել է 81,545-ով կամ՝ 24.4%-ով: Եթե 2010-ին հիվանդանոց է ընդունվել 334,194 հիվանդ, ապա 2017-ին՝ 416,375: Այս ցուցանիշը, 2010-2014 թթ. կտրուկ աճել է ընդհանուր առմամբ 26.7%-ով, 2015-ին՝ նվազել է 3.4%-ով, իսկ 2017-ին 2015 թ. համեմատ աճել է 1.2%-ով: Թվերից կարելի է ենթադրել, որ այդ երկու տարիներին տեղի է ունեցել հիվանդանոցային բուժօգնության ֆինանսական մատչելիության բարձրացում:

Հարկ է ուշադրություն դարձնել, որ **15-17 տարեկան ընդունված հիվանդների թվաքանակը** նվազել է 723-ով կամ՝ 5.6%-ով: Եթե 2010-ին այդ տարիքային խմբի ընդունված հիվանդների թիվը կազմել է 13,025, ապա 2017-ին՝ 12,302: Կարելի է ենթադրել, որ այդ նվազումը կապված է տղաների բանակից խուսափելու միտման հետ, որի հետևանքով, սկսած 15 տարեկանից, նրանք արտագաղթում են Հայաստանից:

2017 թ. **հիվանդանոցում մահացածների թվաքանակը** 2010 թ. համեմատ աճել է 17.7%-ով՝ 2010 թ. 4,592-ից մինչև 2017-ին 5,403: Ավելի հստակ պատերազում կազմելու համար

հիվանդանոցային մահերի դինամիկայի մասին Գծապատկեր 46-ում տրված է հիվանդանոց ընդունվածների և հիվանդանոցում մահացածների հարաբերությունը 2010-2017 թթ. ընթացքում: Տվյալները ցույց են տալիս, որ այդ մահերի աճի միտում ըստ էության չկա: Նշված տարիներին այն տատանվել է 1.32%-ի շուրջ:

Գծապատկեր 46. Հիվանդանոցում մահացածների և հիվանդանոց ընդունվածների հարաբերությունը, 2010-2017 թթ.



2010-2017 թթ. ընթացքում աճել է **մահճակալի տարեկան միջին զբաղվածության** ցուցանիշը՝ 215-ից մինչև 230 օր: Սակայն **հիվանդանոցում մնալու օրերի** միջին քանակը նվազել է 8.2-ից մինչև 7.3 օր:


Այսպիսով, տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում 2015-ից դադարել է աճել հիվանդանոցային բուժօգնության ֆինանսական մատչելիությունը, դրա արդյունքում նաև դիմելիությունը, իսկ 2016-2017 թթ. որոշակիորեն նկատվել է ֆինանսական մատչելիության անկում:

10 . Հիվանդանոցային բաժանմունքների ընդհանուր նկարագրությունը

2017 թ. Հայաստանի հիվանդանոցներում առկա է 72 տեսակի բաժանմունք: Յուրաքանչյուր տեսակի բաժանմունքների քանակը Հայաստանում 2017-ին տրված է Գծապատկեր 47-ում:

Գծապատկեր 47. Հիվանդանոցային բաժանմունքների քանակը Հայաստանում, 2017 թ. Տրված են թվով 4 և ավելի բաժանմունքները

Բաժանմունքների քանակը, ՀՀ, 2017 թ.



2010-2017 թթ.-ին բաժանմունքների ընդհանուր քանակը աճել է 636-ից մինչև 697: Թե ինչպիսի դինամիկա է ունեցել յուրաքանչյուր տեսակի բաժանմունքների ընդհանուր

քանակը տրված է Աղյուսակ 25-ում: 2017 թ. Հայաստանում թվով ամենամեծ բաժանմունքները հետևյալն են.

- Մեծահասակների վիրաբուժական (68, ↓)⁵,
- Հղիների և ծննդաբերության (60, ↓),
- Թերապևտիկ (56, ↓),
- Գինեկոլոգիական՝ մեծահասակների (59, ↑),
- Հղիության՝ պարոլոգիաների (48, ↑)
- Մանկաբուժական (48, ↑) :

Աղյուսակ 25. Բաժանմունքների քանակն ըստ տիպերի, 2010-2017

Բաժանմունք	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Դիագրամ
Ընդամենը՝ բաժանմունք	636	628	627	654	661	668	699	697	
Վիրաբուժակ. մեծ.	66	66	64	66	70	70	69	68	
Հղիների և ծննդ.	63	64	64	64	62	62	60	60	
Գինեկ. մեծ.	47	47	47	49	51	51	60	59	
Թերապևտիկ	63	61	59	58	59	58	55	56	
Հղիության պարոլոգ.	29	26	28	28	28	26	49	48	
Մանկաբուժական	46	45	44	45	46	47	47	48	
Վերակենդ. մեծ.	36	38	39	39	42	42	37	39	
Ինֆեկցիոն մեծ.	38	36	36	37	37	36	34	34	
Ցեր. ստաց.	21	25	28	27	26	30	29	29	
Վիժում. կատար.	18	17	15	16	16	16	20	20	
Քիր-կոկորդ-ականջ մեծ.	18	18	17	19	19	18	18	19	
Վնասվածքաբ. մեծ.	16	15	17	20	18	19	19	17	
Նյարդաբան. մեծ.	16	15	14	14	14	16	16	15	
Սրտաբանական	14	14	15	14	15	16	15	14	
Ուռուցիկական մեծ.	10	10	10	14	13	13	14	13	
Հոգեբուժ. մեծ.	11	11	12	11	11	11	11	11	
Ակնաբուժական մեծ.	5	5	4	5	6	7	8	9	
Ուռուցքաբան. մեծ.	4	4	3	3	4	4	6	7	
Ստոմատ. մեծ.	5	5	5	5	6	6	7	7	
Նյարդավիրաբ. մեծ.	6	5	6	7	8	7	7	7	
Պլաստիկ վիրաբ.	2	3	6	7	4	6	8	7	
Տուբերկուլ. մեծ.	9	9	9	9	7	6	6	6	
Սրտային վիրաբուժ.	5	5	4	4	5	5	6	6	
Վերակենդ. մանկ.	6	4	4	5	4	7	6	6	
Անոթային վիրաբ.	3	3	3	6	6	6	6	6	
Պրոկտոլոգիական	2	2	2	4	3	4	4	5	
Վիրաբուժակ. մանկ.	5	6	6	7	7	6	6	5	
Վերականգնող. մեծ.	5	4	4	5	5	5	5	5	
Ինֆեկցիոն մանկ.	4	4	4	4	4	4	4	4	
Կրծք. վիրաբ. մեծ.	2	2	2	2	3	3	3	4	


⁵ ↓ - սլաքը նշանակում է, որ բաժանմունքների քանակը ունեցել է նվազման միտում, իսկ ↑ - բաժանմունքների քանակն ունեցել է աճի միտում:

Բաժանմունք	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Դիագրամ
Միկրովիրաբ.	3	3	2	3	3	3	3	3	■ ■ ■ _ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Թմբարանական	3	3	3	3	3	3	3	3	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Առիթմոլոգիական							2	3	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ _ ■
Վնասվածքաբ. մանկ.	4	4	3	3	3	3	3	3	■ ■ ■ _ _ _ _ _ _ _
Օրթոպեդիկ մեծ.	3	3	3	3	3	3	3	3	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Ներգատ. մեծ.	4	4	4	4	6	5	4	3	■ _ _ _ _ ■ ■ ■ ■ _
Նյարդաբան. մանկ.	3	3	3	3	3	3	3	3	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Աղետամոքսային մեծ.	2	2	2	2	2	2	2	2	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Երիկամ. մեծ.	3	3	3	3	3	3	3	2	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ _
Քիթ-կոկորդ-ականջ մանկ.	1	1	1	2	2	2	2	2	_ _ _ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Ռևմատոլոգ. մեծ.	2	2	2	2	2	2	2	2	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Ակնաբուժական մանկ.	2	2	2	2	2	2	2	2	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Ընդհանուր	1	1	1	1	1	1	2	2	_ _ _ _ _ _ _ ■ ■ ■
Օրթոպեդիկ մանկ.	2	2	2	2	2	2	2	2	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Ստոմատ. մանկ.	1	2	1	2	2	2	2	2	_ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Ճառագայթ. Ռենտգեն	2	2	2	2	2	2	2	2	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Անհետաձգ. մանկ. բ/օ							2	2	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Նյարդավիրաբ. մանկ.	1	1	1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Արյունաբ. մեծ.	1	1	1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Ալերգոլոգիական մեծ.	1	1	1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Թոքաբան. մանկ.	1	1	1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Ֆիզիոթերապևտիկ	1	1	1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Թոքաբանական մեծ.	1	1	1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Ոսկրաձուծի փոխպատվ.								1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Մուր թունավորման	1	1	1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Մաշկավեճ. մեծ.	1	1	1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Տուբերկուլ. մանկ.	1	1	1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Գինեկ. մանկ.	2	1	1	2	2	2	1	1	■ _ _ ■ ■ ■ ■ ■ _
Աղետամոքսային մանկ.	1	1	1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Երիկամ. մանկ.	1	1	1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Վերականգնող. մանկ.	2	1	1	1	1	1	1	1	■ _ _ _ _ _ _ _ _
Ալերգոլոգիական մանկ.	1	1	1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Փսիխոսոմատիկ	1	1	1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Ուռոլոգիական մանկ.	1	1	1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Հոգեբուժ. մանկ.	1		1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Ուռուցքաբան. մանկ.	1	1	1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Արյունաբ. մանկ.	1	1	1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Այրվածքային	1	1	1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Կրծք. վիրաբ. մանկ.	1	1	1	1	1	1	1	1	■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Ռեպրոդուկտոլոգիա	1	1							■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■
Թարախ. վիրաբ. մեծ.	1	1	1	1	1	1	1		■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■ ■

Ցանկի բաժանմունքերի քանակի փոփոխության միտումներից կարելի է եզրակացնել, որ նվազել է այն բաժանմունքների թիվը, որոնք սպասարկում են ամբողջ բնակչությանը, ինչն այս դեպքում ուղիղ համեմատական է բնակչության թվի հետ, վերջինս էլ ինչպես հայտնի է, 26 տարի է ինչ նվազում է ն՛ բնակչության արտահոսքի, ն՛ կանանց պտղաբերության գործակցի պարզ վերարտադրության համար անհրաժեշտ մակարդակից ցածր լինելու հետևանքով: Դա վերաբերվում է մեծահասակների վիրաբուժական, հղիների և ծննդաբերական, թերապևտիկ բաժանմունքներին:

Մյուս կողմից աճել են կանանց վերարտադրողական առողջությամբ զբաղվող և մանկաբուժական բաժանմունքների քանակը:

Չճապատկեր 48. Վերարտադրողական առողջության բաժանմունքները և հղիության, ծննդաբերության ու հետծննդաբերական շրջանի հիվանդությունների քանակը



Վերաբուժական բաժանմունքների քանակը 2017 թ.՝ 2015-ի համեմատ նվազել է 2-ով, իսկ հղիների և ծննդաբերական բաժանմունքներինը՝ 2012-ի համեմատ՝ 4-ով: Դրա փոխարեն 2016 թ. 2013-ի համեմատ կտրուկ աճ է ունեցել մեծահասակների գինեկոլոգիական բաժանմունքների քանակը. 2017 թ. դարձել է 59, այսինքն 2013-ի համեմատ ավելացել է 10 բաժանմունքով:

Նվազել է մեծահասակների ինֆեկցիոն՝ բաժանմունքների քանակը (2010-ին 38-ից մինչև 34 2017-ին):

2010-2017 թթ. աճել է ցերեկային ստացիոնար բաժանմունքների քանակը՝ 21-ից մինչև 29:

2010-2017 թթ. նվազել են վերաբուժական, թերապևտիկ, հղիների և ծննդաբերական բաժանմունքների ընդհանուր քանակը: Սակայն, միաժամանակ տեղի է ունեցել մեծահասակների գինեկոլոգիական և հղիության պաթոլոգիաների բաժանմունքների թվաքանակի աճ:

2017 թ **բաժանմունքների քանակը մարզերում.** տրված է Աղյուսակ 26-ում: Աղյուսակում բաժանմունքները դասավորված են ըստ այն ցուցանիշի, թե քանի մարզում է առկա այդ տիպի բաժանմունք: Օրինակ, առաջին տեղում է մեծահասակների վերաբուժական բաժանմունքը, որն առկա է բոլոր 11 մարզերում (ներառյալ Երևանը): Վերջին տեղերում են ֆիզիոթերապևտիկ, տուբերկուլյոզային և այլ բաժանմունքներ, որոնք առկա են միայն մեկ մարզում:

Աղյուսակ 26. Հիվանդանոցային բաժանմունքների բաշխվածությունը մարզերում, 2017:

N	Բաժանմունքներ	ԱԳ	ԱՍ	ԱԸ	ԳԵ	ԵՐ	ԼՈ	ԿՈ	ՇԻ	ՍՅ	ՎՁ	ՏԱ	Ընդ.	Առկա են մարզերում
1	Վիրաբուժակ. մեծ.	4	3	4	5	24	5	6	6	5	2	4	68	11
2	Հղիների և ծննդ.	6	2	4	5	12	6	5	6	5	3	6	60	11
3	Գինեկ. մեծ.	3	2	4	5	19	4	5	6	5	2	4	59	11
4	Թերապևտիկ	4	3	4	5	13	6	4	4	5	2	6	56	11
5	Հղիության պաթոլոգ.	4	2	4	5	10	4	3	6	5	1	4	48	11
6	Մանկաբուժական	4	3	4	5	6	5	3	4	5	3	6	48	11
7	Ինֆեկցիոն մեծ.	2	3	3	5	2	5	3	2	4	1	4	34	11
8	Ցեր. ստաց.		2	1	2	13	1	1	5	2	1	1	29	10
9	Վիժում. կատար.	2	1	2	2	1	1	1	4	2		4	20	10
10	Վերակենդ. մեծ.	2	3	1	3	21	2	3	2	2			39	9
11	Քիթ-կոկորդ-ականջ մեծ.	2	1	1		11		1	2			1	19	7
12	Նյարդաբան. մեծ.		1	1		8	1	2	1			1	15	7
13	Հոգեբուժ. մեծ.			1	1	4	1	2	1	1			11	7
14	Վնասվածքաբ. մեծ.		1			11	1		2	1		1	17	6
15	Սրտաբանական		2			9	1		1	1			14	5
16	Տուբերկուլ. մեծ.					1	1	1	1	2			6	5
17	Ուռուցիկական մեծ.	1				10	1		1				13	4
18	Ակնաբուժական մեծ.		1			6	1					1	9	4
19	Ինֆեկցիոն մանկ.					1	1		1	1			4	4
20	Վերականգնող. մեծ.					3		1	1				5	3
21	Թմբաբանական					1			1	1			3	3
22	Պլաստիկ վիրաբ.					6		1					7	2
23	Ուռուցքաբան. մեծ.					6			1				7	2
24	Վերակենդ. մանկ.					5			1				6	2
25	Սրտային վիրաբուժ.					5				1			6	2
26	Վիրաբուժակ. մանկ.					4	1						5	2
27	Ընդհանուր								1			1	2	2
28	Օրթոպեդիկ մանկ.			1		1							2	2
29	Նյարդավիրաբ. մեծ.					7							7	1
30	Ստոմատ. մեծ.					7							7	1
31	Անոթային վիրաբ.					6							6	1
32	Պրոկտոլոգիական					5							5	1
33	Կրծք. վիրաբ. մեծ.					4							4	1
34	Օրթոպեդիկ մեծ.					3							3	1
35	Առիթմոլոգիական					3							3	1
36	Միկրովիրաբ.					3							3	1
37	Վնասվածքաբ. մանկ.					3							3	1
38	Ներզատ. մեծ.					3							3	1
39	Նյարդաբան. մանկ.					3							3	1
40	Երիկամ. մեծ.					2							2	1
41	Քիթ-կոկ.-ականջ մանկ.					2							2	1
42	Ճառագայթ. Ռենտգեն					2							2	1
43	Աղեստամոքսային մեծ.					2							2	1
44	Ռևմատոլոգ. մեծ.					2							2	1
45	Անհետաձգ. մանկ. p/o					2							2	1
46	Ստոմատ. մանկ.					2							2	1
47	Ակնաբուժական մանկ.					2							2	1
48	Նյարդավիրաբ. մանկ.					1							1	1
49	Գինեկ. մանկ.					1							1	1
50	Ոսկրած. փոխպատվ.					1							1	1
51	Ալերգոլոգիական մեծ.					1							1	1
52	Փսիխոսոմատիկ					1							1	1
53	Թոքաբանական մեծ.					1							1	1

N	Բաժանմունքներ	ԱԳ	ԱՍ	ԱՐ	ԳԵ	ԵՐ	ԼՈ	ԿՈ	ՇԻ	ՍՅ	ՎԶ	ՍՍ	Ընդ.	Առկա են մարզերում
54	Ֆիզիոթերապևտիկ							1					1	1
55	Տուբերկուլ. մանկ.							1					1	1
56	Ալերգոլոգիական մանկ.					1							1	1
57	Մաշկավեճ. մեճ.					1							1	1
58	Հոգեբուժ. մանկ.			1									1	1
59	Կրծք. վիրաբ. մանկ.					1							1	1
60	Երիկամ. մանկ.					1							1	1
61	Վերականգնող. մանկ.					1							1	1
62	Սուր թունավորման					1							1	1
63	Աղեստամոքս. մանկ.					1							1	1
64	Թոքաբան. մանկ.					1							1	1
65	Այրվածքային					1							1	1
66	Ուռուցիկական մանկ.					1							1	1
67	Արյունաբ. մանկ.					1							1	1
68	Ուռուցքաբան. մանկ.					1							1	1
69	Արյունաբ. մեճ.					1							1	1
	Բաժանմունքների քանակը	34	30	36	43	295	48	44	60	48	15	44	697	-
	Տարբեր տիպի բաժանմ. քանակը	11	15	15	11	65	19	18	23	17	8	14	69	-

69 տարբեր տիպերի բաժանմունքներից միայն 7-ն են, որոնք առկա են բոլոր 11 մարզերում, դրանք են. մեծահասակների վիրաբուժական, մանկական վիրաբուժական, թերապևտիկ, հղիների և ծննդաբերական, հղիության պարթոլոգիայի, մանկաբուժական և ինֆեկցիոն՝ մեծահասակների:

Երկու տիպի բաժանմունք՝ ցերեկային ստացիոնար և վիժումների կատարման, առկա են 10 մարզում: Ցերեկային ստացիոնարը բացակայում է Արագածոտնում, իսկ վիժումների կատարման բաժանմունքը՝ Վայոց Ձորում:

Մեծահասակների վերակենդանացման բաժանմունքն առկա է 9 մարզում: Այն բացակայում է Վայոց Ձորի և Տավուշի մարզերում:⁶

Երեք տիպի բաժանմունք առկա են 7 մարզում: Այդ բաժանմունքներն են՝ քիթ-կոկորդ-ականջ (բացակայում է՝ Գեղարքունիքում, Լոռում, Սյունիքում և Վայոց Ձորում), մեծահասակների նյարդաբանական (բացակայում է՝ Արագածոտնում, Գեղարքունիքում, Սյունիքում և Վայոց Ձորում) և մեծահասակների հոգեբուժական (բացակայում է՝ Արագածոտնում, Արմավիրում, Վայոց Ձորում և Տավուշում):

Խիստ սահմանափակ աշխարհագրական տեղաբաշխում ունեցող բաժանմունքներն են:

⁶Չարկ է հետազայում առանձին ուսումնասիրել, թե ինչ ազդեցություն ունի Վայոց Ձորում և Տավուշում վերակենդանացման բաժանմունքների բացակայությունը: Արդյոք դա կոմպենսացվում է համապատասխանաբար Արարատում (օրինակ՝ Ջերմուկ – Արարատ 121 կմ) և Իջևանում (օրինակ՝ Բերդ – Իջևան 51 կմ) վերակենդանացման բաժանմունքների առկայությամբ:

Միայն մեկ մարզում է առկա 43 տիպի բաժանմունք: Ընդ որում, դրանցից 40-ն առկա է միայն Երևանում, իսկ երեքը այլ մարզերում: Դրանք են՝ հոգեբուժական մանկական բաժանմունքը, որը գտնվում է Արարատում (Ակադեմ. Ա. Հայրիյանի անվ. Արմաշի ԱԿ ՓԲԸ), մանկական տուբերկուլյոզային բաժանմունքը (Հանրապետական հակատուբ. Դիսպանսեր ՓԲԸ) և ֆիզիոթերապևտիկ բաժանմունքները (Արզնու երկաթ. հիվանդ. վերականգ. կենտրոն ՓԲԸ), որոնք երկուսն էլ գտնվում են Կոտայքում (Աբովյան քաղաքում):

Միայն երկու մարզում է առկա 7 բաժանմունք: Դրանք են. մեծահասակների ուռուցքաբանական (Երևան, Շիրակ), պլաստիկ վիրաբուժական (Երևան, Կոտայք), սրտային վիրաբուժական (Երևան, Սյունիք), մանկական վերակենդանացման (Երևան, Շիրակ), մանկական վիրաբուժական (Երևան, Լոռի), մանկական օրթոպեդիկ (Երևան, Արարատ) և «Ընդհանուր»⁷ (Շիրակ, Տավուշ):


Ըստ մարզերում բաժանմունքների տիպերի քանակի (մարզում կարող է լինել նույն տիպի մեկից ավելի բաժանմունք) ամենահագեցածը Երևանն է, որտեղ է 69 տիպի բաժանմունքներից առկա 65-ը կամ՝ 94%-ը: Երկրորդը Շիրակն է, որտեղ առկա է 23 տիպի բաժանմունք: Երրորդ խումբն են կազմում՝ Լոռին (19) Կոտայքը (18) և Սյունիքը (17):

Անհրաժեշտ է առանձնակի ուսումնասիրություն Վայոց Ձորի մարզի բնակչության կարիքների բավարարվածության վերաբերյալ, քանի որ այստեղ է հիվանդանոցային բաժանմունքների տիպերի ամենամեծ բացակայությունը: Հարկ է առանձին գնահատել, թե արդյո՞ք Արարատի մարզի հիվանդանոցները կոմպենսացնում են այդ բացակայությունը:

Գծապատկեր 49-ում տրված է Հայաստանի մարզերի նախնական դասակարգումն ըստ դրանցում առկա հիվանդանոցային բաժանմունքների տիպերի և մարզի բնակչության: Գծապատկերում բացակայում է Երևանը, քանի որ այն և՛ չափերով (ՀՀ բնակչության 36%), և՛ բաժանմունքների առկա տիպերի քանակով (94%) խիստ գերազանցում է մնացած մարզերը և դուրս է մնացել գծապատկերի տիրույթից:

⁷ Վիճակագրության հավաքագրման N2 ձևում, «Ընդհանուր» կատեգորիային են պատկանում այն բաժանմունքները որոնք մասնագիտացված չեն:

Գծապատկեր 49. Հայաստանի մարզերն ըստ հիվանդանոցային բաժանմունքների տիպերի քանակի և բնակչության քանակի, 2017



Գծապատկերից երևում է որ, մարզերում բաժանմունքների տիպերի առկայության տեսակետից Հայաստանի մարզերը (բացառությամբ Երևանի) կազմում են երեք խումբ:

Առաջին խումբն են կազմում Տավուշ, Արագածոտն, Լոռի, Կոտայք, Արարատ, Արմավիր և Վայոց Ձորի մարզերը, որոնց բնակչության քանակի և բաժանմունքների տիպերի քանակի հարաբերակցությունը կազմավորում է «հայաստանյան տիպիկ իրադրությանը» (ղրանք հարաբերականորեն ավելի մոտ են գտնվում ռեգրեսիոն գծին):⁸

Երկրորդ խումբն են կազմում Շիրակը և Սյունիքը, որտեղ բաժանմունքների տիպերի առկայությունն ավելի «մեծ» է, քան բնակչության քանակը (նրանք ավելի **բարձր** են և հեռու ռեգրեսիոն գծից): Այստեղ բաժանմունքների տիպերի առկայության վիճակն ավելի բարվոք է քան «հայաստանյան տիպիկ իրավիճակը»: Նշենք, որ «հայաստանյան տիպիկ իրավիճակին» մոտ է նաև Երևանը:

Երրորդ խումբը ներկայացված է միայն Գեղարքունիքի մարզով, որտեղ բաժանմունքների տիպերի բազմազանությունն ավելի փոքր է, քան «տիպիկ» հայաստանյան մարզում (այն ավելի **ցածր** է և հեռու ռեգրեսիոն գծից: Այստեղ բաժանմունքների տիպերի առկայության վիճակն ավելի վատթար է քան «հայաստանյան տիպիկ իրավիճակը»:

Անհրաժեշտ է առանձնակի ուսումնասիրություն Գեղարքունիքի մարզում բաժանմունքների առկայության բավարարության հարցի պարզաբանման համար:

⁸ Գծապատկերում գծիկային (ռեգրեսիոն) գիծը ցույց է տալիս, թե տվյալ մարզում ինչպիսին կլինեն բաժանմունքների տիպերի «իդեալական» քանակը, եթե այն համապատասխաներ մարզի բնակչության հարաբերական քանակին:

11 . Բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշները, 2017

Ամփոփ տվյալներ

Աղյուսակ 27-ում տրված են հիվանդանոցային բաժանմունքների գործունեության ցուցանիշները հանրապետության մակարդակով: Աղյուսակի վանդակների գունավորումները արվել են ցուցանիշներն համեմատելիս արագորեն կողմնորոշվելու նպատակով: Յուրաքանչյուր սյուն երանգավորված է մնացած սյուներից անկախ: Տվյալ սյունում որքան ավելի մեծ է ցուցանիշի արժեքը, այնքան ավելի մուգ կարմիր է վանդակի գույնը: Որքան ավելի մուգ կանաչ է վանդակի գունավորումը, այնքան ավելի փոքր է ցուցանիշի արժեքը: Տվյալ սյունում դեղնավուն են ցուցանիշի միջին չափի արժեքներ ունեցող վանդակները:

Եթե տվյալները դիտարկում ենք ըստ բաժանմունքների, ապա որքան ավելի շատ են դրան համապատասխանող տողում կարմիրի երանգները, այնքան ավելի մեծաքանակ է և ավելի շատ հիվանդներ է ընդունում և ավելի ինտենսիվ է աշխատում այդ տիպի բաժանմունքը: Օրինակ. առավել շատ են, ավելի մեծ քանակով հիվանդներ են ընդունել 2017-ին «Վիրաբուժական մեծահասակների», «Թերապևտիկ», «Հոգեբուժական մեծահասակների», «Մանկաբուժական», «Վերակենդանացման մեծահասակների», «Հղիների և ծննդաբերական», «Սրտաբանական» և «Ցերեկային ստացիոնար» բաժանմունքները:

Աղյուսակ 27. Բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշները, ՀՀ, 2017


Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճ. միջին տարեկան թիվը	Ընդունվել են ընդ.	Ընդունվել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մեռ. մ են	Մահճ. *օր	Մահճ. տար. միջին զբաղ., օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
Ալերգոլոգիական մանկ.	1	13	534	462	72	840	0	2	5,465	420	6.5
Ալերգոլոգիական մեծ.	1	17	1,315	8	194	1,338	0	3	5,083	299	3.8
Ակնաբուժական մանկ.	2	38	671	377	294	671	0	0	1,645	43	2.5
Ակնաբուժական մեծ.	9	226	13,852	100	470	13,820	0	33	40,145	178	2.9
Աղեստամոքս. մանկ.	1	20	566	533	33	574	0	0	4,368	218	7.6
Աղեստամոքսային մեծ.	2	85	2,571	0	67	2,626	12	43	20,110	237	7.6
Այրվածքային	1	50	273	95	5	445	5	15	7,652	153	17.0
Անհետաձգ. մանկ. ք/օ	2	25	5,949	5,921	28	2,255	0	50	17,407	696	7.7
Անոթային վիրաբ.	6	61	2,460	1	127	2,459	43	59	22,471	368	9.0
Առիթմոլոգիական	3	51	4,198	0	381	4,400	3	62	42,305	830	9.6
Աղյուսաբ. մանկ.	1	25	372	289	83	372	0	13	5,879	235	15.8
Աղյուսաբ. մեծ.	1	28	745	0	0	691	39	21	8,920	319	12.2
Գինեկ. մանկ.	1	20	239	207	19	239	0	0	2,258	113	9.4
Գինեկ. մեծ.	59	495	15,995	52	43	16,060	1	40	56,215	114	3.5
Երիկամ. մանկ.	1	30	1,818	1,587	113	1,965	0	30	32,729	1,091	16.7
Երիկամ. մեծ.	2	60	1,324	2	74	1,462	5	19	15,964	266	10.9
Ընդհանուր	2	10	80	34	0	80	0	0	389	39	4.9
Թերապևտիկ	56	800	30,078	1,345	464	31,438	333	190	229,393	287	7.2
Թմբաբանական	3	80	1,323	0	0	1,313	5	33	15,901	199	12.1
Թորքաբան. մանկ.	1	20	381	372	9	1,403	0	22	8,562	428	6.1

Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահ. միջին տարեկան թիվը	Ընդունվել են	Ընդունվել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մեռն են	Մահ. *օր	Մահ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
Թոքաբանական մեծ.	1	30	590	0	35	603	5	15	4,784	159	7.9
Ինֆեկցիոն մանկ.	4	195	6,156	5,803	353	6,258	0	60	38,071	195	6.1
Ինֆեկցիոն մեծ.	34	433	10,587	3,826	114	10,627	4	118	71,683	166	6.7
Կրծք. վիրաբ. մանկ.	1	20	443	424	13	505	0	2	4,023	201	8.0
Կրծք. վիրաբ. մեծ.	4	82	1,732	2	12	1,981	0	36	18,672	228	9.4
Հիմների եւ ծննդ.	60	924	36,839	1	57	39,805	1	284	155,613	168	3.9
Հիիության պաթոլոգ.	48	340	18,933	1	59	16,090	0	102	87,819	258	5.5
Հոգեբուժ. մանկ.	1	8	3	2	1	3	0	0	127	16	42.3
Հոգեբուժ. մեծ.	11	1,355	8,968	11	100	8,979	34	1,075	446,306	329	49.5
Ճառագայթ. Ռենտգեն	2	110	1,606	5	5	1,610	1	57	47,698	434	29.6
Մանկաբուժական	48	654	33,786	33,022	440	36,855	12	630	239,709	367	6.5
Մաշկավեճ. մեծ.	1	100	2,960	326	317	2,953	0	37	26,354	264	8.9
Միկրովիրաբ.	3	48	803	20	12	800	0	14	7,213	150	9.0
Ներզատ. մեծ.	3	77	4,688	321	417	4,684	0	44	30,754	399	6.6
Նյարդաբան. մանկ.	3	52	1,293	1,128	141	1,453	0	7	12,108	233	8.3
Նյարդաբան. մեծ.	15	383	15,113	5	581	15,676	252	149	112,636	294	7.1
Նյարդավիրաբ. մանկ.	1	20	539	510	29	701	0	9	5,834	292	8.3
Նյարդավիրաբ. մեծ.	7	164	2,112	4	10	2,692	14	54	32,898	201	12.2
Ոսկրածուծի փոխպատվ.	1	7	8	0	0	8	0	0	114	16	14.3
Ուռուցիկական մանկ.	1	20	989	898	57	992	0	6	8,383	419	8.5
Ուռուցիկական մեծ.	13	245	9,101	30	714	9,152	7	67	60,408	247	6.6
Ուռուցքաբան. մանկ.	1	30	173	95	68	170	1	0	2,883	96	16.9
Ուռուցքաբան. մեծ.	7	487	9,291	54	13	9,212	38	108	135,926	279	14.7
Պլաստիկ վիրաբ.	7	42	1,380	64	2	1,381	0	2	3,120	74	2.3
Պրոկտոլոգիական	5	81	2,072	1	20	2,069	4	11	15,442	191	7.4
Ռևմատոլոգ. մեծ.	2	60	885	0	50	881	1	6	7,711	129	8.7
Սուր թունավորման	1	25	944	4	18	919	14	2	1,426	57	1.5
Ստոմատ. մանկ.	2	23	1,859	1,744	34	1,879	0	3	6,790	295	3.6
Ստոմատ. մեծ.	7	85	3,374	353	116	3,392	0	11	17,325	204	5.1
Սրտաբանական	14	535	24,311	7	1,001	24,257	478	186	163,474	306	6.6
Սրտային վիրաբուժ.	6	170	4,313	215	14	4,677	67	43	28,995	171	6.1
Վերականգնող. մանկ.	1	45	217	213	4	217	0	0	4,934	110	22.7
Վերականգնող. մեծ.	5	345	3,940	35	8	3,956	4	72	59,184	172	14.9
Վերակենդ. մանկ.	6	84	4,026	3,945	64	2,118	194	103	32,639	389	14.1
Վերակենդ. մեծ.	39	517	29,501	4,816	217	17,313	3,488	256	105,024	203	5.0
Վիժում. կատար.	20	30	2,653	0	0	2,653	0	0	2,809	94	1.1
Վիրաբուժակ. մանկ.	5	65	2,838	2,624	171	2,900	0	24	18,665	287	6.4
Վիրաբուժակ. մեծ.	68	1,549	40,270	2,796	1,164	41,103	221	329	255,509	165	6.2
Վնասվածքաբ. մանկ.	3	67	1,628	1,411	63	1,656	0	16	13,010	194	7.9
Վնասվածքաբ. մեծ.	17	329	9,436	731	1,181	9,928	10	62	62,535	190	6.3
Տուբերկուլ. մանկ.	1	30	291	126	133	293	0	6	3,906	130	13.3
Տուբերկուլ. մեծ.	6	328	1,852	1	9	1,848	25	89	47,661	145	25.4
Ցեր. ստաց.	29	407	14,716	2,742	626	14,553	72	980	269,296	662	18.4
Փսիխոսոմատիկ	1	15	304	0	0	321	3	15	3,265	218	10.1
Քիթ-կոկորդ-ականջ մանկ.	2	45	2,315	2,190	42	2,323	0	1	16,440	365	7.1
Քիթ-կոկորդ-ականջ մեծ.	19	241	6,834	596	551	6,874	0	32	39,676	165	5.8
Օրթոպեդիկ մանկ.	2	30	460	399	38	460	0	0	2,804	93	6.1
Օրթոպեդիկ մեծ.	3	100	4,489	10	752	4,603	7	29	37,013	370	8.0
Ֆիզիոթերապևտիկ	1	20	10	0	0	10	0	0	51	3	5.1
ԸՆԴԱՄԵՆ	697	13,206	416,375	82,896	12,302	408,844	5,403	5,787	3,311,581	251	8.0

Գծապատկեր 50-ում տրված է բաժանմունքների դիրքավորվածությունը «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակ» և «Մահճակալների տարեկան միջին զբաղվածություն»

հարթությունում (տարածությունում): Գրաֆիկը ցույց է տալիս, որ այդ ցուցանիշների տեսակետից բաժանմունքները պայմանականորեն դասակարգվում են վեց խմբում:

Գծապատկեր 50. Հիվանդանոցային բաժանմունքների դիրքավորվածությունը "Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը" և "Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը" ցուցանիշների տարածությունում, 2017 թ.



Խումբ 1. Բաժանմունքների ամենամեծ խումբը, որոնց «Մահճակալի տարեկան միջին զբաղվածության ցուցանիշը» գտնվում է [3; 319] միջակայքում, իսկ «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» ցուցանիշի [1; 17] միջակայքում:

Խումբ 2. Կազմված է ինը բաժանմունքից (շրջանակված են կապույտ օվալով) «Մահճակալի տարեկան միջին զբաղվածության» ցուցանիշը գտնվում է [367; 428] միջակայքում, իսկ «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» ցուցանիշի [6.1; 14.1] միջակայքում:

Խումբ 3. Կազմված է չորս բաժանմունքից, որոնցում «Մահճակալի տարեկան միջին զբաղվածության» ցուցանիշներն ամենամեծն են՝ մանկական երիկամաբանական (1,091 օր), Առիթմոլոգիական (830), մանկական անհետաձգելի բուժօգնության (696) և Ցերեկային ստացիոնար (662): Մյուս կողմից, այս խումբը «Հիվանդանոցում մնալու օրերի քանակը» ցուցանիշի տեսակետից բաժանվում է երկու ենթախմբի՝ հանրապետական միջին մոտ գտնվող արժեքներով՝ մանկական անհետաձգելի բուժօգնություն (7.7) և Առիթմոլոգիական (9.6), իսկ մյուս ենթախումբը՝ մանկական երիկամաբանական (16.7) և Ցերեկային ստացիոնար (18.4): Նշենք, որ ԱՏՎԱԿ աշխատակիցների մեկնաբանությամբ, ցերեկային ստացիոնարը հիմնականում իրականացնում է հեմոդիալիզ:

Խումբ 4. Կազմված է երկու բաժանմունքներից՝ մանկական վերականգնողական (մահճակալի տարեկան զբաղվածությունը՝ 110, հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը՝ 22.7) և Տուբերկուլոզ՝ մեծահասակների (145, 25.4):

Խումբ 5. Կազմված է միայն մեկ բաժանմունքից՝ Ճառագայթային, ռենտգեն: Ինչպես երևում է Գծապատկերից այն նույնքան «մոտ» կամ «հեռու» է և՛ երկրորդ, և՛ երրորդ, և՛ չորրորդ խմբերից, որի հետևանքով չի միավորվել դրանցից ոչ մեկի հետ: Այս բաժանմունքում «Հիվանդանոցում մնալու օրերի քանակը» 434 է՝ մեծ է 356-ից, իսկ «Մահճակալի տարեկան միջին զբաղվածության» ցուցանիշը 29.6 է:

Խումբ 6. Կազմված է երկու բաժանմունքից՝ մանկական հոգեբուժական և մեծահասակների հոգեբուժական : Այս բաժանմունքներն ունեն «Հիվանդանոցում մնալու օրերի քանակը» ցուցանիշի ամենամեծ արժեքները՝ համապատասխանաբար՝ 42 և 50 օր: Սակայն միմյանցից տարբերվում են «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշով: Մանկական հոգեբուժական բաժանմունքում (որը ներկայացված է միայն "Ակադեմ. Ա. Հայրիյանի անվ. Արմաշի" ԱԿ ՓԲԸ-ով) այն 16 օր է, իսկ մեծահասակների հոգեբուժական բաժանմունքում (ներկայացված է 11 հիվանդանոցներով)՝ 329 օր:

Հիվանդանոցային բաժանմունքների գործունեության ցուցանիշների համեմատական նկարագիրն ըստ մարզերի

Հիվանդանոցային բաժանմունքների գործունեության արդյունավետության տեսակետից կարևոր է ուսումնասիրել, թե ինչպիսին են միևնույն տիպի բաժանմունքների գործունեության բնութագրերը տարբեր մարզերում: Վերլուծության արդյունքները կարող են կիրառվել բաժանմունքների գործունեության օպտիմալացման նպատակով:

Ալերգոլոգիական մանկական և մեծահասակների բաժանմունք

Մանկական և մեծահասակների ալերգոլոգիական մեկական բաժանմունք կա միայն Երևանում: Այդ բաժանմունքների մարզային համեմատության փոխարեն իմաստ ունի դիտարկել դրանց մեծահասակների և մանկական բաժանմունքների գործունեության ցուցանիշները (Աղյուսակ 28):

Աղյուսակ 28. Ալերգոլոգիական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017:

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճա-կալենրի միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են 0-14	Ընուն-վել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մնում են	Մահճ.՝ օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Ալերգոլոգիական մանկական	1	13	534	462	72	840	0	2	5,465	420	6.5
ԵՐ	Ալերգոլոգիական մեծահասակ	1	17	1,315	8	194	1,338	0	3	5,083	299	3.8

Աղյուսակում աչքի է ընկնում այն, որ 2017-ին մանկական ալերգոլոգիական բաժանմունք (Հայաստանում այն առկա է միայն «Արաբկիր Երեխ. և դեռահաս. Առողջ. Ինստիտուտ» ՍՊԸ-ում) ընդունվել է 534 հիվանդ, սակայն դուրս է գրվել 840-ը: Այդ փաստը կարիք է առաջացնում հավելյալ դիտարկել բաժանմունքի գործունեության ցուցանիշները 2010-2017 թթ. ընթացքում, քանի որ դիտարկելով թե ինչքան հիվանդ է մնում նախորդ տարում՝ դուրս չի գրվում և փոխանցվում է հաջորդ տարի (որպես բաժանմունքում առկա հիվանդ), ապա կատանանք իսկական պատկերը:

Ակնաբուժական՝ մանկական և մեծահասակների

Մանկական ակնբուժական բաժանմունք առկա է միայն Երևանում՝ «Ս.Վ. Մալայանի անվան Ակնաբուժական կենտրոն» ՓԲԸ-ում և «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿՓԲԸ-ում:

Մեծահասակների ակնաբուժական բաժանմունքներ, բացի Երևանից կան նաև Արմավիրի, Լոռու և Տավուշի մարզերում: Այս բաժանմունքներից մահճակալի տարեկան զբաղվածության տեսակետից առանձնանում է Երևանը՝ 183 օր: Լոռիում այն 95 է, իսկ Արմավիրում և Տավուշում՝ համապատասխանաբար 56 և 53: Չի բացառվում, որ Երևանի հիվանդանոցները դեպի իրենց են ձգում Արմավիրի ակնաբուժական բաժանմունքի հիվանդներին: Ինչ վերաբերվում է Լոռու և Տավուշի մարզերին, ապա այդտեղ

բաժանմունքների առկայությունն արդարացված է հեռու լինելու հանգամանքով: հետևաբար, կարիք կա *իրականացնել հավելյալ ուսումնասիրություն՝ գնահատելու համար արդյո՞ք մեծահասակների ակնաբուժական բաժանմունք անհրաժեշտ է նաև Սյունիքում*, որը նույնպես հեռավոր մարզ է:

Աղյուսակ 29. Ակնաբուժական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճա-կայների միջին տարեկան թիվը	Ընդունվել են ընդ. 14	Ընդունվել են՝ 0-14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահա-ցել են	Մեռում են	Մահճ.՝ տար. միջին զբաղ.՝ օր	Մահճ. տար. միջին քանակը	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Ակնաբուժական մանկական	2	38	671	377	294	671	0	0	1,645	43	2.5
ԱՄ	Ակնաբուժական մեծահասակ	1	5	157	0	0	156	0	0	282	56	1.8
ԵՐ	Ակնաբուժական մեծահասակ	6	216	13,304	100	470	13,273	0	33	39,431	183	2.7
ԼՈ	Ակնաբուժական մեծահասակ	1	4	338	0	0	338	0	0	379	95	1.1
ՏԱ	Ակնաբուժական մեծահասակ	1	1	53	0	0	53	0	0	53	53	1.0

Աղետամոքսային՝ մանկական և մեծահասակների

Աղետամոքսային՝ մանկական մեկ և մեծահասակների աղետամոքսային երկու բաժանմունք կա միայն Երևանում:

Աղյուսակ 30. Աղետամոքսային բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճա-կայների միջին տարեկան թիվը	Ընդունվել են ընդ. 14	Ընդունվել են՝ 0-14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահա-ցել են	Մեռում են	Մահճ.՝ տար. միջին զբաղ.՝ օր	Մահճ. տար. միջին քանակը	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Աղետամոքսային մանկական	1	20	566	533	33	574	0	0	4,368	218	7.6
ԵՐ	Աղետամոքսային մեծահասակ	2	85	2,571	0	67	2,626	12	43	20,110	237	7.7

Արյունաբանական՝ մանկական և մեծահասակների

Այս բաժանմունքներն առկա են միայն Երևանում՝ «Պրոֆ. Ռ.Օ.Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ում:

Աղյուսակ 31. Արյունաբանական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճա-կայների միջին տարեկան թիվը	Ընդունվել են ընդ. 14	Ընդունվել են՝ 0-14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահա-ցել են	Մեռում են	Մահճ.՝ տար. միջին զբաղ.՝ օր	Մահճ. տար. միջին քանակը	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Արյունաբան. Մանկական	1	25	372	289	83	372	0	13	5,879	235	15.8
ԵՐ	Արյունաբան. Մեծահասակ	1	28	745	0	0	691	39	21	8,920	319	12.2

Գիեկոլոգիական՝ մանկական և մեծահասակների

Մանկական գիեկոլոգիական բաժանմունք կա միայն Երևանում՝ «Ընտանիքի պլանավորման և սեռական առողջության կենտրոն» ՓԲԸ-ում, որը բացվել է 2017 թ.-ին:


Մեծահասակների գինեկոլոգիական բաժանմունքների քանակը Երևանում կազմում է 19, իսկ մնացած բոլոր մարզերում՝ 40: Սակայն Երևանում մեծահասակների գինեկոլոգիական բաժանմունքներ ընդունված հիվանդները կազմում են այդ կատեգորիայի հիվանդների 73%-ը: Երկրորդ տեղում է Կոտայքի մարզը՝ 7%:

Աղյուսակ 32. Գինեկոլոգիական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են ընդ.	Ընդունվել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մտնում են	Մահճ.՝ օր	Մահճ. միջին զբաղ., օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Գինեկոլոգիակ. Մանկական	1	20	239	207	19	239	0	0	2,258	113	9.4
ԱԳ	Գինեկոլոգիակ. Մեծահասակ	3	5	99	0	0	98	0	1	365	73	3.9
ԱՄ	Գինեկոլոգիակ. Մեծահասակ	2	20	375	0	2	374	1	0	1,183	59	3.2
ԱՐ	Գինեկոլոգիակ. Մեծահասակ	4	30	385	0	0	383	0	3	1,783	59	4.8
ԳԵ	Գինեկոլոգիակ. Մեծահասակ	5	18	558	0	0	558	0	0	2,532	141	5.6
ԵՐ	Գինեկոլոգիակ. Մեծահասակ	19	326	11,707	51	38	11,791	0	26	36,686	113	3.9
ԼՈ	Գինեկոլոգիակ. Մեծահասակ	4	13	463	0	0	461	0	2	2,239	172	4.1
ԿՈ	Գինեկոլոգիակ. Մեծահասակ	5	28	1,092	0	1	1,081	0	3	3,891	139	3.8
ՇԻ	Գինեկոլոգիակ. Մեծահասակ	6	34	694	1	2	688	0	3	4,555	134	7.7
ՍՅ	Գինեկոլոգիակ. Մեծահասակ	5	10	444	0	0	449	0	2	2,105	211	4.7
ՎՁ	Գինեկոլոգիակ. Մեծահասակ	2	3	52	0	0	52	0	0	164	55	4.3
SU	Գինեկոլոգիակ. Մեծահասակ	4	8	126	0	0	125	0	0	712	89	5.3

Սակայն Երևանի մեծահասակների գինեկոլոգիական բոլոր բաժանմունքների օգտագործման ցուցանիշները ամենաբարձրը չեն (տես՝ Գծապատկեր 51): Մահճակալի տարեկան զբաղվածության տեսակետից Երևանին գերազանցում են Լոռին, Գեղարունիքը, Կոտայքը և Շիրակը: Իսկ հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակի տեսակետից Երևանյան բաժանմունքները 6-րդն են:

Գծապատկեր 51. Մարզերում մեծահասակների գինեկոլոգիական բաժանմունքների դիրքավորվածությունը «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» և «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշների տարածությունում, 2017



Երիկամաբանական՝ մանկական և մեծահասակների

Երիկամաբանական՝ մեկ մանկական («Արաբկիր» երեխաների և դեռահասաների առողջության ինստիտուտ ՄՊԸ-ում) և երկու մեծահասակների («Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն ՓԲԸ և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ում) բաժանմունք կա միայն Երևանում:

Մանկական երիկամաբանական բաժանմունքում մահճակալի միջին զբաղվածությունն ամենամեծն է բոլոր բաժանմունքների շրջանում, որը մոտ երեք անգամ գերզանցում է 365-ը: Սակայն այդ ցուցանիշն էական ազդեցություն չի թողնում հանրապետական բոլոր հիվանդանոցների ցուցանիշի վրա իր փոքր կշռի հետևանքով:

Աղյուսակ 33. Երիկամաբանական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017:

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են՝ 14	Ընունվել են 0- 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մնում են	Մահճ.*	Մահճ. միջին զբաղ., օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Երիկամաբան. Մանկական	1	30	1,818	1,587	113	1,965	0	30	32,729	1,091	16.7
ԵՐ	Երիկամաբան. Մեծահասակ	2	60	1,324	2	74	1,462	5	19	15,964	266	11.1

Թերապևտիկ

Թերապևտիկ բաժանմունքեր կան բոլոր մարզերում: Այս տիպի բաժանմունքների առանձնահատկությունն այն է, որ դրանցում հիվանդների մարզային բաշխումը համեմատաբար հավասարաչափ է:

Աղյուսակ 34. Թերապևտիկ բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017


Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են՝ 14	Ընունվել են 0- 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մնում են	Մահճ.*	Մահճ. տար. միջին զբաղ., օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԱԳ	Թերապևտիկ	4	39	866	0	3	892	6	1	6,599	169	7.1
ԱՍ	Թերապևտիկ	3	53	1,436	0	0	1,465	3	5	10,392	196	7.1
ԱՐ	Թերապևտիկ	4	66	2,520	0	12	3,013	31	17	18,985	288	7.1
ԳԵ	Թերապևտիկ	5	59	1,726	0	0	1,792	11	8	12,794	217	7.2
ԵՐ	Թերապևտիկ	13	212	8,772	3	376	9,560	3	55	82,711	390	8.3
ԼՈ	Թերապևտիկ	6	94	5,616	287	39	5,462	163	35	34,408	366	6.2
ԿՈ	Թերապևտիկ	4	63	3,040	1,055	15	3,134	23	35	21,896	348	7.0
ՇԻ	Թերապևտիկ	4	82	2,300	0	14	2,237	38	12	16,289	199	7.4
ՍՅ	Թերապևտիկ	5	68	1,875	0	5	1,980	24	14	14,500	213	6.9
ՎՁ	Թերապևտիկ	2	7	72	0	0	72	0	0	433	62	6.0
ՏԱ	Թերապևտիկ	6	57	1,855	0	0	1,831	31	8	10,386	182	5.6

Աղյուսակ 34-ում ներկայացված են բաժանմունքի գործունեության ցուցանիշները , իսկ Գծապատկեր 52-ում՝ «Մահճակալների տարեկան միջին զբաղվածության» և

«Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» ցուցանիշների վիզուալ արտապատկերումը : Գծապատկերից երևում է, որ «Մահճակալների տարեկան միջին զբաղվածության» ցուցանիշն ամենացածրը Վայոց Ձորում է (62), իսկ ամենաբարձրը՝ Երևանում (390), Լոռիում (366) և Կոտայքում (348): Երևանում և Լոռիում թերապևտիկ բաժանմունքներում առկա է ցուցանիշը 365-ից մեծ լինելու խնդիրը:

Ցուցանիշի արժեքը բավական բարձր է Արարատում: Մնացած մարզերը կազմում են հոծ խումբ՝ ցուցանիշի արժեքների [169-217] միջակայքում:

Գծապատկեր 52 Մարզերում թերապևտիկ բաժանմունքների դիրքավորվածությունը «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» և «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշների տարածությունում, 2017 թ.



Թմրաբանական

Թմրաբանական բաժանմունքեր կան միայն երեք մարզերում՝ Երևանում, Շիրակում և Սյունիքում: Աշխարհագրական դիրքավորվածությունը ակնհայտորեն հիմնավորված է՝ երկուսը մեծ բնակչությամբ մարզերում, մեկը՝ հեռավոր մարզում: Այդ պատճառով «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշի ցածր արժեքները Շիրակում և Սյունիքում պետք է համարել հիմնավորված:

Աղյուսակ 35. Թրաքանական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են ընդ.	Ընդունվել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս գրվել են	Մահացել են	Մնում են	Մահճ.՝ օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Թրաքանական	1	60	1,187	0	0	1,178	4	29	14,396	240	12.2
ՇԻ	Թրաքանական	1	10	63	0	0	63	0	1	905	91	14.4
ՍՅ	Թրաքանական	1	10	73	0	0	72	1	3	600	60	8.2

Թրաքանական՝ մանկական և մեծահասակների

Թրաքանական՝ մեծահասակների և մանկական մեկական բաժանմունք կա միայն Երևանում: Մեծահասակների բաժանմունքը «Արմենիա» հանրապետական ԲԿ ՓԲԸ-ում է, իսկ մանկականը՝ «Արաբկիր» երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ ՍՊԸ-ում:

Աղյուսակ 36. Թրաքանական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017:

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են ընդ.	Ընդունվել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս գրվել են	Մահացել են	Մնում են	Մահճ.՝ օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Թրաքանական մանկական	1	20	381	372	9	1,403	0	22	8,562	428	6.1
ԵՐ	Թրաքանական մեծահասակ	1	30	590	0	35	603	5	15	4,784	159	7.9

Ինֆեկցիոն՝ մանկական

Մանկական ինֆեկցիոն մեկական բաժանմունքեր առկա են Երևանում, Լոռիում, Շիրակում և Սյունիքում: *Այդ բաժանմունքների գործունեության ցուցանիշները թույլ են տալիս ենթադրել, որ դրանց անհրաժեշտությունն առկա է նաև այլ, մասնավորապես Երևանից հեռու գտնվող մարզերում՝ Տավուշ, Վայոց Ձոր, Գեղարքունիք:*


Աղյուսակ 37. Ինֆեկցիոն՝ մանկական հիվանդանոցային բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017:

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են ընդ.	Ընդունվել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս գրվել են	Մահացել են	Մնում են	Մահճ.՝ օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Ինֆեկցիոն մանկական	1	145	4,702	4,438	264	4,791	0	53	28,061	194	5.9
ԼՈ	Ինֆեկցիոն մանկական	1	20	577	562	15	578	0	2	3,900	195	6.7
ՇԻ	Ինֆեկցիոն մանկական	1	25	622	580	42	623	0	4	4,186	167	6.7
ՍՅ	Ինֆեկցիոն մանկական	1	5	255	223	32	266	0	1	1,924	385	7.2

Հարկ է ուշադրություն դարձնել, որ Սյունիքում (բաժանմունքը գտնվում է «Գորիսի ԲԿ» ՓԲԸ կազմում) «Մահճակալների տարեկան զբաղվածության» ցուցանիշը շատ բարձր է եղել համեմատած մյուս մարզերի ցուցանիշի հետ, իսկ «Հիվանդանոցում մնալու միջին տևողությունը» ցուցանիշը չնայած նույնպես ավելի բարձր էր, սակայն ոչ ծայրահեղ չափով: Աղյուսակային տվյալները ցույց են տալիս, որ Սյունիքի բաժանմունքում կա ընդամենը 5 մահճակալ:

«Գորիսի ԲԿ» ՓԲԸ-ում մահճակալների քանակի և մահճակալի տարեկան միջին զբաղվածության ցուցանիշների դիտարկումը 2010-2017 թթ. ցույց է տալիս, որ 2012-2014 թթ. ընթացքում, երբ այստեղ մահճակալների քանակը կրկնապատկվել էր՝ 5-ից աճելով մինչև 10, մահճակալների զբաղվածության հետ կապված խնդիրներ չեն առաջացել: Եթե 2011 թ. ցուցանիշը 365-ից բարձր էր (ինչը խնդրահարույց է ինֆեկցիոն հիվանդությունների դեպքում), ապա 2012-ին ցուցանիշը նվազեց: Ըստ երևույթին մահճակալների թվի կրկնապատկումը տեղի է ունեցել 2010-2011 թթ.՝ հիվանդների քանակի աճի վրա հիմնված կանխատեսման արդյունքում:

Գծապատկեր 53. «Գորիսի ԲԿ» ՓԲԸ-ում «Մահճակալների տարեկան միջին քանակը» և «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը», 2010-2017, «Գորիսի ԲԿ» ՓԲԸ-ում մանկական ինֆեկցիոն բաժանմունք ընդունված հիվանդների թիվը, 2010-2017



Սակայն, երբ 2014 թ. մահճակալների թիվը նորից նվազեց մինչև 5, ապա 2017 թ. նորից առաջացավ «Մահճակալների տարեկան միջին զբաղվածություն» ցուցանիշի հետ կապված խնդիր, այն նորից դարձավ 365-ից մեծ՝ 385:

Հետևաբար, կարիք կա բարձրաձայնելու Սյունիքում մանկական ինֆեկցիոն բաժանմունքում մահճակալների ավելացման խնդրի մասին: Հավանաբար, այս դեպքում նպատակահարմար թվաքանակն է 7-8:

Ինֆեկցիոն՝ մեծահասակներ


Մեծահասակների ինֆեկցիոն բաժանմունքներն առկա են բոլոր մարզերում: Ընդ որում, բացի Երևանից, այդ բաժանմունքներում ընդունվում են նաև 0-14 և 15-17 տարեկան երեխաներ: Այս հիվանդությունների համար ցուցանիշների համեմատությունը դժվար է այն պատճառով, որ ինֆեկցիոն հիվանդությունները կարող են ունենալ տեղային բնույթ:

Գծապատկեր 54-ում ներկայացված է մարզերի ինֆեկցիոն բաժանմունքներում ընդունված հիվանդների (մասնաբաժինը (%))՝ բոլոր ինֆեկցիոն հիվանդներից) հարաբերությունը մարզերի բնակչությանը (մասնաբաժինը (%)) ՀՀ ամբողջ բնակչությունից): Գծապատկերից երևում է, որ Երևանում, Սյունիքի, Արմավիրի և Տավուշի մարզերում 2017 թ. ինֆեկցիոն հիվանդությունների քանակը եղել է հանրապետականից ավելի բարձր:

Աղյուսակ 38. Ինֆեկցիոն՝ մեծահասակների բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017:

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են ընդ. 14	Ընդունվել են 0- և 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մեռած են օր	Մահճ.՝ տար. միջին զբաղ. օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը	
ԱԳ	Ինֆեկցիոն մեծահասակ	2	9	287	215	5	288	0	0	2,166	241	7.7
ԱՍ	Ինֆեկցիոն մեծահասակ	3	43	1,213	1,015	10	1,210	0	16	7,667	178	6.4
ԱՐ	Ինֆեկցիոն մեծահասակ	3	24	812	651	20	814	0	4	4,788	200	5.8
ԳԵ	Ինֆեկցիոն մեծահասակ	5	25	761	519	13	757	0	8	4,273	171	5.7
ԵՐ	Ինֆեկցիոն մեծահասակ	2	197	4,492	0	0	4,463	3	61	32,353	164	7.3
ԼՈ	Ինֆեկցիոն մեծահասակ	5	35	664	244	27	662	1	6	3,968	113	6.0
ԿՈ	Ինֆեկցիոն մեծահասակ	3	17	522	322	22	598	0	4	4,389	258	7.3
ՇԻ	Ինֆեկցիոն մեծահասակ	2	20	375	81	0	377	0	2	2,928	146	7.8
ՍՅ	Ինֆեկցիոն մեծահասակ	4	30	827	264	6	825	0	12	6,014	200	7.4
ՎՁ	Ինֆեկցիոն մեծահասակ	1	10	120	85	2	120	0	0	590	59	4.9
ՏԱ	Ինֆեկցիոն մեծահասակ	4	23	514	430	9	513	0	5	2,547	111	5.5


Գծապատկեր 54. Մարզերի ինֆեկցիոն բաժանմունքներում ընդունված հիվանդների հարաբերությունը մարզերի բնակչությանը



Մարզերում մեծահասակների ինֆեկցիոն բաժանմունքների դիրքավորվածությունը «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» և «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշների տարածությունը (Գծապատկեր55) ցույց է տալիս, որ «Մահճակալների տարեկան միջին զբաղվածություն» ցուցանիշն ամենաբարձրն է՝

Կոտայքում (258) և Արագածոտնում (241), իսկ ամենացածրը՝ Վայոց Ձորում (59), վերջինումն այն 4.4 անգամ ավելի ցածր է, քան Կոտայքում:

Գծապատկեր 55. Մարզերում ինֆեկցիոն՝ մեծահասակների բաժանմունքների դիրքավորվածությունը «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» և «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշների տարածությունում, 2017 թ.



Կրճքային վիրաբուժության՝ մանկական և մեծահասակների

Կրճքային վիրաբուժական մանկական բաժանմունք կա միայն Երևանում՝ «Մուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ում, իսկ մեծահասակների՝ «Աստղիկ» ԲԿ ՍՊԸ-ում, «Մուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ում, «Մեղայն Կլինիկ» ՍՊԸ-ում և «Լ. Ա. Միքայելյան» վիրաբուժության ինստիտուտ ՓԲԸ-ում:

Աղյուսակ 39. Կրծքային վիրաբուժության բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մնում են	Մահճ. օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Կրծք. վիրաբուժ. Մանկական	1	20	443	424	13	505	0	2	4,023	201	8
ԵՐ	Կրծք. վիրաբուժ. Մեծահասակ	4	82	1,732	2	12	1,981	0	36	18,672	228	9.5

Հղիների և ծննդոգնության

Հղիների և ծննդոգնության բաժանմունքներ կան բոլոր մարզերում (Աղյուսակ 40)՝ ընդամենը 60 բաժանմունք: «Բաժանմունքների թիվը» սյան տվյալները ցույց են տալիս, որ մարզերում դրանք ներդաշնակորեն տեղաբաշխված են ըստ մարզի բնակչության քանակի: Դրանց տեղաբաշխման մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ բաժանմունքը կա բոլոր նախկին տարածաշրջաններում և քաղաքներում (տես՝ Հավելված 4. Ծննդոգնության և հղիության պաթոլոգիաների բաժանմունքների տեղաբաշխումն ըստ մարզերի և բնակավայրերի):

Աղյուսակ 40. Հղիների և ծննդոգնության բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մնում են	Մահճ. օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԱԳ	Հղիների և ծննդ.	6	37	775	0	0	781	0	1	2,787	75	3.5
ԱՄ	Հղիների և ծննդ.	2	40	1,488	0	12	1,489	0	6	5,087	127	3.5
ԱՐ	Հղիների և ծննդ.	4	66	2,353	0	0	2,365	0	12	9,006	136	4.0
ԳԵ	Հղիների և ծննդ.	5	45	2,213	0	5	2,220	0	8	7,992	178	3.8
ԵՐ	Հղիների և ծննդ.	12	429	18,516	1	33	21,362	0	155	83,372	194	4.0
ԼՈ	Հղիների և ծննդ.	6	79	3,429	0	4	3,459	1	22	14,033	178	4.2
ԿՈ	Հղիների և ծննդ.	5	58	2,135	0	1	2,137	0	23	8,778	151	4.1
ՇԻ	Հղիների և ծննդ.	6	73	3,181	0	1	3,167	0	29	12,060	165	4.2
ՍՑ	Հղիների և ծննդ.	5	39	1,196	0	0	1,223	0	11	5,571	143	4.5
ՎՁ	Հղիների և ծննդ.	3	15	366	0	0	364	0	4	1,533	102	4.5
ՏՄ	Հղիների և ծննդ.	6	43	1,187	0	1	1,238	0	13	5,394	125	4.2

Սակայն «Ընդունվել են ընդամենը» սյան տվյալների (այսինքն՝ ծննդաբերած կանանց) դիտարկումը հուշում է, որ առկա են մարզերում բաժանմունքների արդյունավետ օգտագործման հետ կապված խնդիրներ: Երևանում հղիների և ծննդոգնության բաժանմունքներ ընդունվածների հարաբերական թիվը (50%, տե՛ս Գծապատկեր 56), 38%-ով գերազանցում է Երևանի բնակչության հարաբերական թվին (36%):


Սա նշնակում է, որ Երևանի «Հղիների և ծննդաբերության» բաժանմունքներ են ընդունվում մեծ քանակով անձինք՝ մերձակա մարզերից: Գծապատկերի տվյալները հաստատում են այս եզրակացությունը: Մասնավորապես Արմավիրում «հղիների և ծննդաբերության»

բաժանմունքներ ընդունվածների հարաբերական քանակը 55%-ով ավելի փոքր է, քան մարզի բնակչության հարաբերական քանակը, Արարտում՝ 27%-ով, Արագածոտնում՝ 51%-ով, Կոտայքում՝ 32%-ով, Վայոց Ձորում՝ 42%-ով և Գեղարքունիքում՝ 22%-ով:


Դիտարկվող ցուցանիշը 100%-ից բարձր է նաև Շիրակում (109%) և Լոռիում (128%): Կարելի է ենթադրել, որ Լոռու մարզ են դիմում նաև Տավուշի մարզից, իսկ Շիրակի մարզ՝ հավանաբար Արագածոտնի մարզի մերձակա բնակավայրերից:

Հղիների և ծննդաբերական բաժանմունքներում «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» շատ փոքր է: Այն ամենացածրն է Արագածոտնում և Արմավիրում՝ 3.5, իսկ ամենաբարձրն է՝ Վայոց ձորում և սյունիքում՝ 4.5:

Գծապատկեր 56. Հղիների և ծննդոգնության բաժանմունքներ ընդունվածների և բնակչության հարաբերական թվերը



Գծապատկեր 57 Մարզերում հղիների և ծննդոգնության բաժանմունքների դիրքավորվածությունը «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» և «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշների տարածությունում, 2017 թ.



Սակայն, «Մահճակալի տարեկան միջին զբաղվածություն» ցուցանիշը փոխվում է շատ մեծ միջակայքում: Այսպես, ինչպես և սպասելի էր Երևանում այն ամենամեծն է՝ 194, իսկ Արագածոտնում՝ ամենափոքրն է՝ 75: Ցուցանիշը բարձր է նաև Շիրակում և Լոռիում, այսինքն այնտեղ, որտեղ ընդունված հղիների և բնակչության քանակի տոկոսային քանակների հարաբերությունը մեծ է 100%-ից:

Հղիության պաթոլոգիաների

Հղիության պաթոլոգիաների բաժանմունքներ կան բոլոր մարզերում: Բաժանմունքների ընդհանուր քանակը 48 է: Դրանց մարզային բաշխումը մոտ է Ծննդոգնության և հղիների բաժանմունքների բաշխմանը (տես՝ Հավելված 4. Ծննդոգնության և հղիության պաթոլոգիաների բաժանմունքների տեղաբաշխումն ըստ մարզերի և բնակավայրերի):

Աղյուսակ 41. Հղիության պաթոլոգիաների բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017


Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս գրվել են	Մահացել են	Մեռած են	Մահճ.՝ օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնայու օրերի միջին քանակը
ԱԳ	Հղիության պաթոլոգ.	4	7	195	0	0	194	0	0	700	100	3.4
ԱՄ	Հղիության պաթոլոգ.	2	15	681	0	10	681	0	0	2,834	189	4.1
ԱՐ	Հղիության պաթոլոգ.	4	19	901	0	0	890	0	1	4,359	229	5
ԳԵ	Հղիության պաթոլոգ.	5	20	488	0	0	491	0	1	2,062	103	4.5
ԵՐ	Հղիության պաթոլոգ.	10	203	13,773	1	46	11,046	0	86	64,227	316	5.9
ԼՈ	Հղիության պաթոլոգ.	4	8	339	0	3	321	0	1	1,372	172	4.4
ՎՈ	Հղիության պաթոլոգ.	3	10	393	0	0	391	0	2	1,559	156	4
ՇԻ	Հղիության պաթոլոգ.	6	23	1,026	0	0	1,026	0	5	5,281	230	5.6
ՍՑ	Հղիության պաթոլոգ.	5	16	814	0	0	774	0	5	3,877	242	4.9
ՎՋ	Հղիության պաթոլոգ.	1	3	59	0	0	59	0	0	319	106	5.4
ՏՍ	Հղիության պաթոլոգ.	4	16	264	0	0	217	0	1	1,229	77	5.6

Մարզերում այս բաժանմունքներ ընդունվածների հարաբերական թվի հարաբերությունը մարզերի բնակչության հարաբերական թվին (Գծապատկեր 58) ցույց է տալիս, որ Երևանի բաժանմունքներն ընդունում են նույնիսկ ավելի շատ հիվանդներ, քան Հղիների և ծննդոգնության բաժանմունքների դեպքում: Երևանում այդ հարաբերությունը 200% է: Եթե Երևանի բնակչությունը կազմում է Հայաստանի բնակչության 36.3%-ը, ապա Երևանում հղիության պաթոլոգիաների բաժանմունքներն ընդունում են այդ կատեգորիայի հիվանդների 72.7%-ին: Բոլոր մարզերում այդ ցուցանիշը 100%-ից ցածր է:


Այնուամենայնիվ, մարզերի շրջանում ցուցանիշը համեմատաբար ավելի բարձր է. Սյունիքում՝ 91%: Կարելի էր ենթադրել, որ դա բացատրվում է Սյունիքի՝ Երևանից մեծ հեռավորության վրա գտնվելու հանգամանքով: Չբացառելով այդ գործոնի նշանակությունը, նշենք, որ Տավուշում և Լոռիում, որոնք նույնպես Երևանից հեռու են, այդ ցուցանիշները համապատասխանաբար հավասար են 34% և 25%: Այսինքն, պետք է

ենթադրել, որ հղիության պաթոլոգիաների բաժանմունքների նկատմամբ մարզերում առկա է բնակչության վստահության պակաս: Հասկանալու համար, թե արդյոք վստահության պակասն ունի օբյեկտիվ (բժիշկների որակավորում, բաժանմունքների տեխնիկական հագեցվածություն և այլն), թե սուբյեկտիվ բնույթ (մարդիկ պարզապես չեն վստահում անհիմն պատճառաբանություններով), մասնագիտական գնահատման կարիք է առաջանում:

Գծապատկեր 58 Բաժանմունք ընդունվածների հարաբերական թվի հարաբերությունը մարզերի բնակչության հարաբերական թվին



Գծապատկեր 59 Մարզերում հղիության պաթոլոգիաների բաժանմունքների դիրքավորվածությունը «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» և «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշների տարածությունում, 2017թ.



Սակայն, օբյեկտիվ պատճառների առկայության մասին անուղղակի վկայություն կարելի է համարել Շիրակում ցուցանիշի բավական բարձր արժեքը՝ 91%, այսինքն «բավական մոտ նորմային»:

Հոգեբուժական՝ մանկական և մեծահասակների


Հայաստանում առկա է միայն մեկ Մանկական հոգեբուժական բաժանմունք («Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի ԱԿ» ՓԲԸ, Արարտի մարզ, գյուղ Արմաշ): Այստեղ 2017-ին ընդունվել է 3 հիվանդ, մահճակալների միջին տարեկան քանակը՝ 8:

Մեծահասակների հոգեբուժական բաժանմունքներ են առկա 7 մարզերում՝ Արարատ, Գեղարքունիք, Երևան (4 բաժանմունք), Լոռի, Կոտայք (2 բաժանմունք), Շիրակ և Սյունիք: Երևանի հոգեբուժական բաժանմունքները 2017 թ. ընդունել են բոլոր հիվանդների 80%-ին:

Աղյուսակ 42. Հոգեբուժական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդ. վել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մնում են	Մահճ.՝ օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԱՐ	Հոգեբուժակ. Մանկական	1	8	3	2	1	3	0	0	127	16	42.3
ԱՐ	Հոգեբուժակ. Մեծահասակ	1	100	54	0	0	54	4	91	32,951	330	568.1
ԳԵ	Հոգեբուժակ. Մեծահասակ	1	420	174	0	0	162	7	422	153,192	365	906.5
ԵՐ	Հոգեբուժակ. Մեծահասակ	4	595	7,214	10	98	7,231	16	404	188,336	317	29.4
ԼՈ	Հոգեբուժակ. Մեծահասակ	1	35	223	0	0	217	0	22	8,343	238	38.4
ԿՈ	Հոգեբուժակ. Մեծահասակ	2	80	698	0	0	713	2	23	18,844	236	35.7
ՇԻ	Հոգեբուժակ. Մեծահասակ	1	55	281	0	0	287	1	50	19,379	352	67.3
ՍՅ	Հոգեբուժակ. Մեծահասակ	1	70	324	1	2	315	4	63	25,261	361	79.2


Գծապատկեր 60. Հոգեբուժական՝ մեծահասակների բաժանմունք ընդունված հիվանդների մարզային բաշխումը



Գծապատկեր 61-ում տրված է 2017 թ. մարզերում մեծահասակների հոգեբուժական բաժանմունքների դիրքավորվածությունը «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» և «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշների տարածությունում: Նույն

գծապատկերում է նաև Արմաշի մանկական հոգեբուժական բաժանմունքը (գծապատկերում ներքևից ամենաձախ կողմի կետը):

Գծապատկեր 61 Մարզերում մեծահասակների հոգեբուժական բաժանմունքների դիրքավորվածությունը «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» և «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշների տարածությունում, 2017 թ.



«Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» ցուցանիշի շատ բարձր արժեքներով աչքի են ընկնում Գեղարքունիքի բաժանմունքը («Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ), որտեղ ցուցանիշի արժեքն է 906 օր և Արարատի բաժանմունքը՝ («Ակադեմ. Ա. Հայրիյանի անվան Արմաշի ԱԿ» ՓԲԸ) 568 օր, ինչը պայմանավորված է այդ բաժանմունքներ ընդունվող հիվանդների առանձնահատկություններով: Այստեղ շատ մեծ են նաև մահճակալների տարեկան զբաղվածության ցուցանիշները, համապատասխանաբար՝ 365 և 330 օր:

Կոտայքի, Լոռու, Երևանի, Շիրակի և Սյունիքի բաժանմունքներում մահճակալի միջին տարեկան զբաղվածությունը նույնպես բավական բարձր է, դրանք գտնվում են [236; 361] միջակայքում: Սակայն, հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը նշանակալիորեն զիջում է Գեղարքունիքի և Արարատի բաժանմունքներին: Դրանք գտնվում են [29; 79] միջակայքում:

Ճառագայթային ռենտգենոլոգիական

Ճառագայթային ռենտգենոլոգիական բաժանմունք առկա են երուկսը՝ Երևանում: Դրանք գտնվում են Վ.Ա. Ֆանարջյանի անվան ՈւԻԳԿ ՓԲԸ-ում և Ճառագայթային բժշկության և այրվածքաբանության հանրապետական գիտական կենտրոն ՓԲԸ-ում:

Աղյուսակ 43. Ճառագայթային ռենտգենոլոգիական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճա-կալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են՝ 0-14	Ընունվել են՝ 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մեռում են	Մահճ.* օր	Մահճ. տար. միջին զբաղ., օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Ճառագայթ. Ռենտգեն	2	110	1,606	5	5	1,610	1	57	47,698	434	33.3

Մանկաբուժական


Մանկաբուժական բաժանմունքներն առկա են բոլոր մարզերում: Աղյուսակ 44-ում տրված են այդ բաժանմունքների մարզային ցուցանիշները:

Հիվանդների տոկոսային քանակի և մարզի բնակչության տոկոսային քանակի հարաբերությունները տրված են Գծապատկեր 62-ում:

Աղյուսակ 44 Մանկաբուժական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճա կալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են՝ 0-14	Ընունվել են՝ 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մեռում են	Մահճ.* օր	Մահճ. տար. միջին զբաղ., օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԱԳ	Մանկաբուժական	4	26	1,343	1,219	3	1,340	0	6	8,301	319	6.2
ԱՄ	Մանկաբուժական	3	53	3,014	2,990	7	2,984	0	55	19,122	361	6.4
ԱՐ	Մանկաբուժական	4	45	3,425	3,406	19	3,393	0	67	20,596	458	6.1
ԳԵ	Մանկաբուժական	5	39	2,431	2,408	23	2,440	2	14	12,164	312	5.2
ԵՐ	Մանկաբուժական	6	265	13,742	13,486	256	16,944	0	319	121,346	458	7.2
ԼՈ	Մանկաբուժական	5	51	2,064	2,028	27	2,040	0	34	12,067	237	5.9
ԿՈ	Մանկաբուժական	3	14	1,358	1,342	11	1,281	0	12	7,355	525	5.9
ՇԻ	Մանկաբուժական	4	58	2,081	2,052	29	2,076	0	49	14,718	254	6.6
ՍՑ	Մանկաբուժական	5	42	1,988	1,938	43	2,024	0	52	12,781	304	6.3
ՎՁ	Մանկաբուժական	3	22	640	484	2	640	10	3	3,617	164	5.5
ՏՄ	Մանկաբուժական	6	39	1,700	1,669	20	1,693	0	19	7,642	196	5.0


Գծապատկեր 62 Հիվանդների հարաբերական թվի և մարզի բնակչության հարաբերական թվի հարաբերությունները



Տվյալները ցույց են տալիս, որ այս բաժանմունքներում սուր արտահայտված չէ հիվանդներին Երևան տեղափոխելու սովորությունը: Այդպիսի սովորության մասին կարելի է ենթադրել միայն Կոտայքի մարզի դեպքում, որի դիտարկվող հարաբերությունը 47% է: Փոքր և Երևանից հեռու գտնվող մարզերի դեպքում հարաբերության 100%-ից մեծ լինելը կարող է պայմանավորված լինել երեխաների հիվանդացության ավելի բարձր մակարդակով:

Գծապատկեր 63-ում տրված է , 2017 թ. մարզերում մանկաբուժական բաժանմունքների դիրքավորվածությունը՝ «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» և «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշների տարածությունում: Գծապատկերից երևում է, որ Կոտայքի, Երևանի և Արարատի մանկաբուժական բաժանմունքներում մահճակալի տարեկան միջին զբաղվածության ցուցանիշը նշանակալիորեն գերազանցում է 365-ը և համապատասխանաբար հավասար է 525, 458 և նորից 458: Այդ ցուցանիշն ամենափոքրն է Վայոց Ձորում, Տավուշում՝ 196 և Լոռիում՝ 237:

Գծապատկեր 63 Մարզերում մանկաբուժական բաժանմունքների դիրքավորվածությունը «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» և «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշների տարածությունում, 2017 թ.



Մաշկավեներական, միկրովիրաբուժական, ներզատաբանական՝ մեծահասակների

Մաշկավեներական մեկ, միկրովիրաբուժական և ներզատաբանական երեքական բաժանմունքներ կան միայն Երևանում:

Աղյուսակ 45. Մաշկավեներական, միկրովիրաբուժական, մեծահասակների ներզատաբանական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան . թիվը	Մահճա- կալների միջին տարե- կան թիվը	Ընդուն- վել ընդ .	Ընդուն- վել են 0- 14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահա- ցել են	Մեռ . մ են	Մահճ.՝ օր	Մահճ. տար. միջին զբաղ ., օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Մաշկավեներակ. Մեծահասակ	1	100	2,960	326	317	2,953	0	37	26,354	264	8.9
ԵՐ	միկրովիրաբուժական	3	48	803	20	12	800	0	14	7,213	150	9.7
ԵՐ	Ներզատաբան. Մեծահասակ	3	77	4,688	321	417	4,684	0	44	30,754	399	6.7

Նյարդաբանական՝ մանկական և մեծահասակների

Հայաստանում միայն Երևանում կա երեք մանկական նյարդաբանական բաժանմունք:

Մեծահասակների նյարդաբանական բաժանմունքների ընդհանուր թիվը 15-ն է: Այդպիսի բաժանմունքը բացակայում է Արագածոտնի, Վայոց Ձորի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում:

Երևանն ընդունում է մեծահասակների նյարդաբանական բաժանմունքների հիվանդների 91.4%-ը, իսկ մահճակալների ընդհանուր թվի 85.1%-ը:

Գծապատկեր 64-ում տրված է 2017 թ մարզերում մեծահասակների նյարդաբանական բաժանմունքների դիրքավորվածությունը՝ «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» և «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշների տարածությունում., :

Մահճակալների տարեկան միջին զբաղվածության ցուցանիշն ամենամեծն է Երևանում (316) և Արմավիրում (315):


Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակն ամենամեծն է Շիրակում (10.0) և Երևանում (7.7):

Այդ ցուցանիշներն ամենափոքրն են Կոտայքում, համապատասխանաբար՝ 5 և 5.1:


Աղյուսակ 46. Նյարդաբանական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են՝ 0- և 14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մնում են	Մահճ.՝ օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Նյարդաբանակ. Մանկական	3	52	1,293	1,128	141	1,453	0	7	12,108	233	9.6
ԱՄ	Նյարդաբանակ. Մեծահասակ	1	13	637	0	0	661	2	4	4,096	315	6.2
ԱՐ	Նյարդաբանակ. Մեծահասակ	1	4	117	0	4	181	0	0	964	241	5.3
ԵՐ	Նյարդաբանակ. Մեծահասակ	8	326	13,815	5	576	14,306	230	136	103,112	316	7.7
ԼՈ	Նյարդաբանակ. Մեծահասակ	1	5	142	0	0	135	16	2	949	190	6.3
ԿՈ	Նյարդաբանակ. Մեծահասակ	2	18	114	0	1	114	0	0	908	50	5.1
ՇԻ	Նյարդաբանակ. Մեծահասակ	1	15	226	0	0	221	0	6	2,210	147	10
ՏԱ	Նյարդաբանակ. Մեծահասակ	1	2	62	0	0	58	4	1	397	199	6.4

Գծապատկեր 64 Նյարդաբանական մեծահասակների բաժանմունք ընդունված հիվանդների մարզային բաշխումը



Գծապատկեր 65 Մարզերում Նյարդաբանական՝ մեծահասակների բաժանմունքների դիրքավորվածությունը «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» և «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշների տարածությունում, 2017 թ.



Նյարդավիրաբուժական՝ մանկական և մեծահասակների

Հայաստանում կա միայն մեկ մանկական նյարդավիրաբուժական բաժանմունք՝ Երևանում («Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ում): Իսկ մեծահասակների նյարդավիրաբուժական՝ երեք, նույնպես միայն Երևանում:

Մանկական բաժանմունքում ավելի մեծ է մահճակալի տարեկան զբաղվածության ցուցանիշը, իսկ մեծահասակների բաժանմունքում՝ հիվանդանոցում մնալու օրերի միջին թիվը:

Աղյուսակ 47. Նյարդավիրաբուժական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են ընդ. 14	Ընդունվել են 0- և 15-17	Դուրս են գրվել	Մահա- ցել են	Մուտք են	Մահճ.՝ օր	Մահճ. տար. միջին զբաղ., օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը	
ԵՐ	Նյարդավիրաբ. Մանկական	1	20	539	510	29	701	0	9	5,834	292	8.3
ԵՐ	Նյարդավիրաբ. Մեծահասակ	7	164	2,112	4	10	2,692	14	54	32,898	201	12.9

Ոսկրածուծի փոխադասում

Հայաստանում կա Ոսկրածուծի փոխադասման միայն մեկ բաժանմունք՝ Երևանում («Պրոֆ. Լ. Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ում):

Աղյուսակ 48. Ոսկրածուծի փոխադասման բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017.

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են՝ 0-14	Ընունվել են՝ 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մեռն են օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Մահճ. տար. միջին քանակը	
ԵՐ	Ոսկրածուծի փոխադասում	1	7	8	0	0	8	0	0	114	16	14.3

Ուռուղիական՝ մանկական և մեծահասակների

Մանկական ուռուղիական բաժանմունք առկա է միայն մեկ հաստ՝ Երևանում («Արաբկիր երեխ. և դեռահաս. Առողջ. Ինստիտուտ» ՍՊԸ-ում):

Ուռուղիական մեծահասակների բաժանմունքների ընդհանուր քանակը 13-ն է, որից 10-ը գտնվում են Երևանում: Ուռուղիական մեծահասակների մեկական բաժանմունք կա Արագածոտնում, Լոռիում և Շիրակում:

Աղյուսակ 49. Ուռուղիական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են՝ 0-14	Ընունվել են՝ 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մեռն են օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Մահճ. տար. միջին քանակը	
ԵՐ	Ուռուղիական մանկական	1	20	989	898	57	992	0	6	8,383	419	8.5
ԱԳ	Ուռուղիական մեծահասակ	1	5	79	8	0	79	0	0	221	44	2.8
ԵՐ	Ուռուղիական մեծահասակ	10	207	8,978	18	714	9,028	7	67	59,910	289	6.9
ԼՈ	Ուռուղիական մեծահասակ	1	3	38	4	0	39	0	0	224	75	5.7
ՇԻ	Ուռուղիական մեծահասակ	1	30	6	0	0	6	0	0	53	2	8.8

Մեծահասակների ուռուղիական բաժանմունքների մահճակալների 84.5%-ը գտնվում է Երևանում, իսկ բաժանմունք ընդունված հիվանդների՝ 98.7%-ը: Ցուցանիշների նման բաշխումը և այն, որ այլ մարզերում, մասնավորապես Շիրակում, մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը ցածր է՝ 2 օր, հուշում է, որ *հավանաբար առկա է այդ բաժանմունքների հագեցվածության և/կամ բժիշկների վերապատրաստման խնդիր:*

Նաև կարիք կա քննարկելու այլ մարզերում, մասնավորապես Սյունիքում մեծահասակների ուռուղիական բաժանմունքի տեղակայման հարցը:

Ուռուցքաբանական՝ մանկական և մեծահասակների

Ուռուցքաբանական մանկական բաժանմունք առկա է միայն Երևանում (Վ.Ա. Ֆանարջյանի անվան ՌԻԳԿ ՓԲԸ-ում): Իսկ մեծահասակների ուռուցքաբանական բաժանմունք առկա է Երևանում 6 և Շիրակում՝ 1 հատ : Այստեղ նույնպես ծանրաբեռնված են աշխատում Երևանի բաժանմունքները, իսկ Շիրակի բաժանմունքում («Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ) ցածր են և՛ մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը, և՛ հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը:

Աղյուսակ 50. Ուռուցքաբանական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են՝ 0-14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մնում են	Մահճ.՝ օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Ուռուցքաբան. Մանկական	1	30	173	95	68	170	1	0	2,883	96	16.9
ԵՐ	Ուռուցքաբան. Մեծահասակ	6	457	8,968	54	13	8,888	38	108	133,063	291	18.1
ՇԻ	Ուռուցքաբան. Մեծահասակ	1	30	323	0	0	324	0	0	2,863	95	8.8

Պլաստիկ վիրաբուժության

Պլաստիկ վիրաբուժության բաժանմունքներ կան Երևանում՝ 6 և Կոտայքում՝ 1 հատ: Երևանում ընդունված հիվանդները կազմում են այդ բաժանմունքների հիվանդների 61%-ը, իսկ Կոտայքում՝ 39%-ը: Սակայն, Երևանում Մահճակալների տարեկան միջին զբաղվածությունը (81) և հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը (4.2) ավելի բարձր են, քան Կոտայքում, ինչը հավանաբար բացատրվում է նրանով, որ Երևանում իրականացվում են ավելի բարդ միջամտություններ, քան Կոտայքում:

Աղյուսակ 51. Պլաստիկ վիրաբուժության բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են՝ 0-14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մնում են	Մահճ.՝ օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	պլաստիկ վիրաբուժ.	6	32	840	64	2	841	0	2	2,580	81	4.2
ԿՈ	պլաստիկ վիրաբուժ.	1	10	540	0	0	540	0	0	540	54	1.0

Պրոկտոլոգիական, ռեմատոլոգիական՝ մեծահասակների, Սուր թունավորման

Պրոկտոլոգիական 5 բաժանմունք, Ռեմատոլոգիական 2 բաժանմունք և Սուր թունավորման մեկ բաժանմունք կա միայն Երևանում: Մարզերում այդպիսի բաժանմունքներ չկան:

Աղյուսակ 52. Պրոկտոլոգիական, ռեմատոլոգիական՝ մեծահասակների, սուր թունավորման բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճա-կալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են 0-14	Ընուն-վել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մեռում են	Մահճ.* օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Պրոկտոլոգիական	5	81	2,072	1	20	2,069	4	11	15,442	191	7.8
ԵՐ	Ռեմատոլոգիական մեծահասակ	2	60	885	0	50	881	1	6	7,711	129	8.8
ԵՐ	Սուր թունավորման	1	25	944	4	18	919	14	2	1,426	57	1.5

Ստոմատոլոգիական՝ մանկական և մեծահասակների

Մանկական ստոմատոլոգիական 2 բաժանմունք և մեծահասակների 7 բաժանմունք կա միայն Երևանում:

Աղյուսակ 53. Ստոմատոլոգիական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճա-կալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են 0-14	Ընուն-վել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մեռում են	Մահճ.* օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Ստոմատոլոգ. Մանկական	2	23	1,859	1,744	34	1,879	0	3	6,790	295	4
ԵՐ	Ստոմատոլոգ. Մեծահասակ	7	85	3,374	353	116	3,392	0	11	17,325	204	5.8

Սրտաբանական


Սրտաբանական բաժանմունքներ կան Երևանում՝ 9, Արմավիրում՝ 2 և մեկական՝ Լոռիում, Շիրակում և Սյունիքում:

Մարզերում սրտաբանական բաժանմունքների մահճակալների քանակի և ընդունված հիվանդների քանակի բաշխումները (Գծապատկեր 66) շատ մոտ են միմյանց:

Աղյուսակ 54. Սրտաբանական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճա-կալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են 0-14	Ընուն-վել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մեռում են	Մահճ.* օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԱՄ	Սրտաբանական	2	28	1,206	0	0	1,215	25	2	7,038	251	5.8
ԵՐ	Սրտաբանական	9	447	19,943	7	1,001	19,949	391	171	136,286	305	7.0
ԼՈ	Սրտաբանական	1	7	539	0	0	516	11	4	3,484	498	6.6
ՇԻ	Սրտաբանական	1	50	2,589	0	0	2,545	49	9	16,570	331	6.4
ՍՑ	Սրտաբանական	1	3	34	0	0	32	2	0	96	32	2.8


Գծապատկեր 66 Սրտաբանական բաժանմունք ընդունված հիվանդների մարզային բաշխումը



Ինչ վերաբերվում է Մարզերում մեծահասակների սրտաբանական բաժանմունքների դիրքավորվածությանը՝ «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» և «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշների բաշխմանը (Գծապատկեր 67), Լոռու մարզում սրտաբանական բաժանմունքներում «Մահճակալի տարեկան միջին զբաղվածություն» ցուցանիշը 2017 թ. կազմել է 498, այսինքն մեծ է եղել 365-ից:

Սյունիքում և՛ մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը, և՛ հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը ամենափոքրն են, համապատասխանաբար կազմելով 32 և 2.8:

Գծապատկեր 67 Մարզերում մեծահասակների սրտաբանական բաժանմունքների դիրքավորվածությունը «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» և «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշների տարածությունում, 2017 թ.



Սրտային վիրաբուժության

Երևանում կան 5 սրտային վիրաբուժական բաժանմունքներ , իսկ Սյունիքում 1 հատ: Ուշադրության է արժանի այն փաստը, որ Սյունիքում ընդունված հիվանդների քանակը կազմում է Երևանում ընդունված հիվանդների քանակի 10.0%-ը, չնայած Սյունիքում մահճակալների տարեկան միջին քանակը կազմում է Երևանի ցուցանիշի 3.7%-ը: Բացի դրանից, Սյունիքում հիվանդանոցում մնալու օրերի քանակը ցուցանիշը՝ 1.9, նշանակալիորեն ավելի փոքր է, քան՝ Երևանում՝ 9.7:

Հարկ է ուշադրություն դարձնել նաև, որ Երևանում սրտային վիրաբուժական բաժանմունքներից դուրս գրվածների քանակը (4287), 369-ով գերազանցում է ընդունվածների քանակը (3918):

Աղյուսակ 55. Սրտային վիրաբուժության բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան . թիվը	Մահճակալներ ի միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մնում են	Մահճ.՝ օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Սրտային վիրաբուժ.	5	164	3,918	215	14	4,287	62	43	28,239	172	9.7
ՍՅ	Սրտային վիրաբուժ.	1	6	395	0	0	390	5	0	756	126	1.9

Վերականգնողական՝ մանկական և մեծահասակների

մանկական վերականգնողական մեկ բաժանմունք կա Երևանում («Հանրապետական մանկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ): Իսկ մեծահասակների վերականգնողական բաժանմունքներ՝ Երևանում՝ 3, Կոտայքում և Շիրակում՝ մեկական հատ:

Երևանում է գտնվում մեծահասակների վերականգնողական բաժանմունքների մահճակալների ընդհանուր թվի 81%-ը, սակայն, ընդունվում է հիվանդների 98%-ը: Երևանում՝ Կոտայքի և Շիրակի համեմատ շատ բարձր է մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը՝ 210, այն դեպքում, երբ Շիրակում այն հավասար է 25-ի, իսկ Կոտայքում՝ ընդամենը 1-ի: Երևանում, Շիրակի և Կոտայքի բաժանմունքների համեմատ շատ բարձր է նաև հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը՝ 16.2, այն դեպքում, երբ Շիրակում ցուցանիշը հավասար է 8.2-ի, իսկ Կոտայքում՝ 3.8-ի:

Աղյուսակ 56. Վերականգնողական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան - թիվը	Մահճ ա- կայներ ի միջին տարե- կան թիվը	Ընդուն վել են՝ ընդ.	Ընդուն վել են 0-14	Ընուն- վել են 15-17	Դուրս են գրվել	Մահա- ցել են	Մնում են	Մահճ. * օր	Մահճ. տար. միջին գրադ. օր	Հիվ. մնայու օրերի միջին քանակ ը
ԵՐ	Վերականգնող. Մանկական	1	45	217	213	4	217	0	0	4,934	110	22.7
ԵՐ	Վերականգնող. Մեծահասակ	3	280	3,879	18	8	3,895	4	72	58,751	210	16.2
ԿՈ	Վերականգնող. Մեծահասակ	1	50	15	0	0	15	0	0	57	1	3.8
ՇԻ	Վերականգնող. Մեծահասակ	1	15	46	17	0	46	0	0	376	25	8.2

Վերակենդանացման՝ մանկական և մեծահասակների

Մանկական վերակենդանացման բաժանմունքեր կան Երևանում՝ 5 և Շիրակում մեկ հատ: Երևանն ընդունում է այդ բաժնում հիվանդների 95%-ը, չնայած այստեղ է տեղակայված մահճակալների 88%-ը:

Երևանում՝ Շիրակի համեմատ շատ ավելի բարձր է և՛ մահճակալի տարեկան միջին գրադ-վածությունը՝ 309-ը 120-ի դիմաց, և՛ հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը՝ 15.2-ը 7.1-ի դիմաց:

Մեծահասակների վերակենդանացման բաժանմունքեր կան բոլոր մարզերում, բացի՝ Վայոց Ձորից և Տավուշից:

Աղյուսակ 57. Վերակենդանացման բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բա ժա ն թի վը	Մահճ ակայ ների միջին տարե- կան թիվը	Ընդուն վել են՝ ընդ.	Ընդուն վել են 0-14	Ըն ուն վել են 15- 17	Դուրս են գրվել	Մահա ցել են	Մն ում են	Մահճ. * օր	Մահճ. տար. միջին գրադ. օր	Հիվ. մնայու օրերի միջին քանակը
ԵՐ	վերակենդանացման մանկական	5	74	3,833	3,756	60	1,959	185	100	31,442	309	15.2
ՇԻ	վերակենդանացման մանկական	1	10	193	189	4	159	9	3	1,197	120	7.1
ԱԳ	վերակենդանացման Մեծահասակ	2	5	590	6	3	510	46	1	836	54	1.9
ԱՄ	վերակենդանացման Մեծահասակ	3	0	802	30	7	593	121	2	1,509	-	-
ԱՐ	վերակենդանացման Մեծահասակ	1	0	633	2	6	0	45	0	886	-	-
ԳԵ	վերակենդանացման Մեծահասակ	3	10	752	0	0	645	39	4	1,236	102	1.8
ԵՐ	վերակենդանացման Մեծահասակ	16	140	21,165	800	135	12,715	2,582	129	59,696	227	13.1
ԼՈ	վերակենդանացման Մեծահասակ	2	4	46	0	2	25	12	0	63	16	1.7
ԿՈ	վերակենդանացման Մեծահասակ	3	10	698	21	0	404	151	11	2,233	90	18.3
ՇԻ	վերակենդանացման Մեծահասակ	1	0	363	0	0	119	243	5	1,744	-	-
ՍԾ	վերակենդանացման Մեծահասակ	2	0	426	12	0	184	55	1	1,120	-	-

Վիժումների կատարում

Վիժումների կատարման բաժանմունքներ կան Հայաստանի բոլոր մարզերում, բացի Վայոց Ձորից: Ընդ որում, Արմավիրում, Երևանում, Լոռիում, Կոտայքում 1-ական բաժանմունք,

Արագածոտնում, Արարատում, Գեղարքունիքում, Սյունիքում՝ 2-ական, Շիրակում և Տավուշում՝ 4-ական:


Աղյուսակից երևում է, որ Երևանի բաժանմունքում մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը 530 է, այսինքն մեծ է 365-ից:

Աղյուսակ 58. Վիժումների կատարման բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մնում են	Մահճ. օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԱԳ	Վիժումների կատար.	2	2	127	0	0	127	0	0	127	64	1
ԱՄ	Վիժումների կատար.	1	5	293	0	0	293	0	0	309	62	1.1
ԱՐ	Վիժումների կատար.	2	3	142	0	0	142	0	0	146	49	1
ԳԵ	Վիժումների կատար.	2	2	91	0	0	91	0	0	91	46	1
ԵՐ	Վիժումների կատար.	1	1	530	0	0	530	0	0	530	530	1
ԼՈ	Վիժումների կատար.	1	1	107	0	0	107	0	0	107	107	1
ԿՈ	Վիժումների կատար.	1	1	36	0	0	36	0	0	36	36	1
ՇԻ	Վիժումների կատար.	4	6	126	0	0	126	0	0	136	23	1.1
ՍՑ	Վիժումների կատար.	2	4	462	0	0	462	0	0	477	119	1
ՏԱ	Վիժումների կատար.	4	5	739	0	0	739	0	0	850	170	2

Վիժումների կատարման բաժանմունքների գործունեության տվյալները հուշում են, որ այստեղ կատարվում է վիժումների փոքր մասը: Գծապատկեր 68-ում պատկերված է 2017 թ. մարզերում վիժումների կատարման բաժանմունքներ ընդունվածների քանակը, վիժումների ընդհանուր քանակը և առաջինի տոկոսային հարաբերությունը երկրորդից:

Գծապատկեր 68 Վիժումների կատարման բաժանմունքներ ընդունվածների քանակը, վիժումների ընդհանուր քանակը և առաջինի տոկոսային հարաբերությունը երկրորդից



Տվյալներից երևում է, որ Երևանում վիժումների կատարման բաժանմունքում է կատարվում վիժումների 12%-ը, Կոտայքում՝ 8%-ը, Գեղարքունիքում՝ 18%-ը և Արարատում՝ 18%-ը:

Համեմատաբար բարձր է վիժումների բաժանմունքներում վիժումների կատարման տոկոսը՝ 103%, Արագածոտնում՝ 69% և Սյունիքում՝ 64%: Այնուամենայնիվ հարկ է ստուգել, թե *ինչու է Տավուշում վիժումների բաժանմունքում կատարված վիժումների քանակը 23-ով ավելի մեծ, քան՝ մարզում վիժումների ընդհանուր քանակը:*

Վիրաբուժական՝ մանկական

Մանկական վիրաբուժական բաժանմունքներ կան Երևանում՝ 4, և Լոռիում՝ 1 հատ:

Այս բաժանմունքների ցուցանիշների հարաբերակցությունները բավական մոտ են միմյանց: Այնուամենայնիվ, Երևանի բաժանմունքներում հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակն ավելի բարձր է՝ 6.8, քան Լոռիում՝ 4.4:

Աղյուսակ 59. Վիրաբուժական մանկական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժանմունքի թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մնում են	Մահճ.՝ օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Վիրաբուժական մանկական	4	55	2,172	1,970	159	2,239	0	20	15,745	286	6.8
ԼՈ	Վիրաբուժական մանկական	1	10	666	654	12	661	0	4	2,920	292	4.4

Վիրաբուժական՝ մեծահասակների


Մեծահասակների վիրաբուժական բաժանմունքներ կան Հայաստանի բոլոր մարզերում:

Աղյուսակ 60. Վիրաբուժական մեծահասակների բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017:

Մարզ	Բաժանմունք	Բաժանմունքի թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մնում են	Մահճ.՝ օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԱԳ	Վիրաբուժական մեծահասակ	4	50	685	80	27	688	2	0	3,588	72	5.1
ԱՄ	Վիրաբուժական մեծահասակ	3	65	1,085	39	48	1,079	6	9	7,020	108	6.5
ԱՐ	Վիրաբուժական մեծահասակ	4	56	1,418	41	40	1,418	3	18	10,853	194	7.5
ԳԵ	Վիրաբուժական մեծահասակ	5	112	2,378	837	113	2,357	1	7	11,691	104	4.9
ԵՐ	Վիրաբուժական մեծահասակ	24	805	24,180	490	430	25,042	120	218	154,974	193	7.5
ԼՈ	Վիրաբուժական մեծահասակ	5	98	2,366	85	79	2,310	62	32	17,829	182	7.5
ԿՈ	Վիրաբուժական մեծահասակ	6	74	1,730	125	92	1,743	3	4	10,187	138	5.6
ՇԻ	Վիրաբուժական մեծահասակ	6	155	3,862	852	167	3,880	10	21	25,069	162	6.9
ՍԾ	Վիրաբուժական մեծահասակ	5	65	1,184	73	71	1,215	3	10	7,369	113	6.3
ՎՁ	Վիրաբուժական մեծահասակ	2	25	425	73	29	422	2	6	2,501	100	5.8
ՏՄ	Վիրաբուժական մեծահասակ	4	44	957	101	68	949	9	4	4,428	101	4.7

Գծապատկեր 69-ում տրված են մարզերում բնակչության, մեծահասակների վիրաբուժական բաժանմունքներում մահճակալների թվի և ընդունված հիվանդների թվի տոկոսային հարաբերությունները հանրապետականի նկատմամբ:

Գծապատկեր 69. Մեծահասակների վիրաբուժական բաժանմունք ընդունված հիվանդների մարզային բաշխումը




Գծապատկերի տվյալները ցույց են տալիս, որ Երևանի մեծահասակների վիրաբուժական բաժանմունքներն ունեն և՛ հարաբերականորեն ավելի մեծ քանակով մահճակալների քանակ, և՛ բաժանմունքներ ընդունված հիվանդների հարաբերականորեն ավելի մեծ թիվ:

Այդ երևույթը շատ ավելի փոքր չափով դիտարկվում է նաև Շիրակում: Մնացած բոլոր մարզերում այդ հարաբերակցությունն ավելի փոքր է, այսինքն մահճակալների հարաբերական քանակը մեծահասակների վիրաբուժական բաժանմունքներում ավելի փոքր է, քան մարզերի բնակչության հարաբերական քանակը (բացի Վայոց Ձորից), իսկ ընդունված հիվանդների հարաբերական քանակն ավելի փոքր է, քան մահճակալների հարաբերական քանակը (բացի Արարատից):

Մահճակալների տարեկան միջին զբաղվածության և հիվանդանոցում մնալու օրերի քանակի ցուցանիշները համեմատաբար ավելի բարձր են Երևանում և Լոռիում, ինչպես նաև Շիրակում, իսկ համեմատաբար ցածր՝ Արագածոտնում, Տավուշում, Գեարքունիքում և Վայոց Ձորում:

Գծապատկեր 70 Մարզերում մեծահասակների վիրաբուժական բաժանմունքների դիրքավորվածությունը «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» և «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշների տարածությունում, 2017 թ.



Վնասվածքաբանական մանկական և մեծահասակների

Մանկական վնասվածքաբանական 3 բաժանմունք կա Եևանում, մնացած մարզերում այդպիսիք չկան:


մեծահասակների վնասվածքաբանական բաժանմունքեր կան միայն վեց մարզերում, իսկ հինգում՝ Արագածոտն, Արարատ, Կոտայք, Գեղարքունիք և Վայոց Ձոր՝ չկան:

Նդրուսակ 61. Վնասվածքաբանական բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժանմունքի թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են ընդ.	Ընդունվել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մեռած են	Մահճ. * օր	Մահճ. տար. միջին զբաղվածություն	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Վնասվածքաբ. Մանկական	3	67	1,628	1,411	63	1,656	0	16	13,010	194	9.2
ԱՍ	Վնասվածքաբ. Մեծահասակ	1	10	157	12	7	161	0	2	1,588	159	9.9
ԵՐ	Վնասվածքաբ. Մեծահասակ	11	219	7,523	495	1,101	7,993	5	48	48,396	221	9.1
ԼՈ	Վնասվածքաբ. Մեծահասակ	1	6	152	29	4	151	0	4	1,366	228	9.0
ՇԻ	Վնասվածքաբ. Մեծահասակ	2	80	1,144	93	59	1,161	1	4	7,082	89	7.0
ՍՅ	Վնասվածքաբ. Մեծահասակ	1	10	280	62	8	282	1	4	3,552	355	12.6
ՍԱ	Վնասվածքաբ. Մեծահասակ	1	4	180	40	2	180	3	0	551	138	3.0

Երևանի Վնասվածքաբանական մեծահասակների բաժանմունքներն ընդունում են հիվանդների մոտ 80%-ը: Ամենայն հավանականությամբ նրանց կազմում են Արագածոտնի, Արարատի, Կոտայքի և չի բացառվում, որ նաև Գեղարքունիքի մարզերի հիվանդները:

Գծապատկեր 71. Վնասվածքաբանական մեծահասակների բաժանմունքներում մահճակալների և ընդունված հիվանդների մարզային բաշխումը



Սյունիքում մեծահասակների վնասվածքաբանական բաժանմունքում մահճակալների տարեկան միջին զբաղվածությունը՝ 355 և հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը՝ 12.6 ամենամեծն են: *Սյստեղ անհրաժեշտություն է նկատվում ավելացնելու մահճակալների թվաքանակը:*

Տուբերկույոզ՝ մանկական և մեծահասակների

Հայաստանում կա Տուբերկույոզային՝ մանկական մեկ բաժանմունք Կոտայքում («Հանրապետական հակատուբերկույոզային Դիսպանսեր» ՓԲԸ):


Տուբերկույոզային՝ մեծահասակների բաժանմունք կան Երևանում, Լոռիում, Կոտայքում, Շիրակում՝ մեկական և Սյունիքում՝ երկու («Գորիսի ԲԿ» ՓԲԸ և «Կապանի ԲԿ» ՓԲԸ):

Աղյուսակ 62. Տուբերկույոզային բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս գրվել են	Մահացել են	Մնում են	Մահճ. * օր	Մահճ. տար. միջին օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԿՈ	Տուբերկույ. Մանկ.	1	30	291	126	133	293	0	6	3,906	130	13.3
ԵՐ	Տուբերկույ. Մեծահասակ	1	48	160	0	1	163	0	16	6,187	129	38.0
ԼՈ	Տուբերկույ. Մեծահասակ	1	15	73	0	0	69	3	6	2,378	159	33.0
ԿՈ	Տուբերկույ. Մեծահասակ	1	180	1,370	1	8	1,350	22	54	32,608	181	23.8
ՇԻ	Տուբերկույ. Մեծահասակ	1	35	161	0	0	170	0	8	4,074	116	24.0
ՍՅ	Տուբերկույ. Մեծահասակ	2	50	88	0	0	96	0	5	2,414	48	35.4

Տուբերկուլոզով հիվանդների 64%-ը ընդունվել է Կոտայքում (ք. Աբովյան) գտնվող «Հանրապետական հակատուբերկուլոզային Դիսպանսեր» ՓԲԸ-ն: Այստեղ մահճակալների տարեկան զբաղվածության ցուցանիշը՝ 181 ամենաբարձրն է, սակայն հիվանդանոցում մնալու միջին տևողության ցուցանիշն ամենացածրն է՝ 23.8:

Գծապատկեր 72. Տուբերկուլոզային՝ մեծահասակների բաժանմունքներում մահճակալների և ընդունված հիվանդների մարզային բաշխումը



Ցերակային ստացիոնար

Ցերեկային դիսպանսեր բաժանմունքներ կան բոլոր մարզերում, բացի Արագածոտնից:


Ինչպես արդեն նշվել է այս բաժանմունքների ցուցանիշների կարևոր առանանձնահատկությունն այն է, որ մարզերի մեծ մասում մահճակալի տարեկան զբաղվածության ցուցանիշը մեծապես գերազանցում է 365-ը:

Նշված տարօրինակություններն ակնհայտ են Գծապատկեր 73-ից: Մահճակալի տարեկան միջին զբաղվածություն ցուցանիշը գերազանցում է 365-ը՝ Վայոց Ձորում՝ 456, Շիրակում՝ 491, Լոռում՝ 851, Երևանում՝ 887, Տավուշում՝ 948, Կոտայքում՝ 1129: Եթե գոյություն ունի մեկ ընդհանուր պատճառ, որը հանգեցնում է այդ արդյունքներին, ապա հարց է առաջանում, թե ինչու՞ այդ պատճառը չի ազդել մնացած մարզերի ցուցանիշների վրա: Աղյուսակում՝ Տավուշում, «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» ցուցանիշը բացակայում է, քանի որ դրա հաշվարկի համար [հայտարարում] անհրաժեշտ գումարը՝ «Դուրս են գրվել» + «Մահացել են» հավասար է 0-ի»:

Աղյուսակ 63. Ցերեկային ստացիոնար բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017:

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են՝ ընդ.	Ընդունվել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս գրվել	Մահացել են	Մնում են	Մահճ.՝ օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԱՍ	ցերեկային ստացիոնար	2	14	149	0	0	149	0	18	3,851	275	205.6
ԱԲ	ցերեկային ստացիոնար	1	14	380	260	6	365	0	17	2,345	168	6.4
ԳԵ	ցերեկային ստացիոնար	2	25	111	0	0	108	2	32	5,371	215	104.7
ԵՐ	ցերեկային ստացիոնար	13	222	11,249	1,612	596	11,177	45	637	196,922	887	189.6
ԼՈ	ցերեկային ստացիոնար	1	14	424	0	0	422	7	56	11,915	851	27.8
ԿՈ	ցերեկային ստացիոնար	1	2	317	21	0	317	0	0	2,258	1,129	7.1
ՇԻ	ցերեկային ստացիոնար	5	62	1,013	321	24	969	1	156	30,415	491	220.4
ՍՑ	ցերեկային ստացիոնար	2	48	1,061	528	0	1046	13	33	12,007	250	11.6
ՎՁ	ցերեկային ստացիոնար	1	3	8	0	0	0	4	12	1,367	456	341.8
ՏԱ	ցերեկային ստացիոնար	1	3	4	0	0	0	0	19	2,845	948	-

Գծապատկեր 73 Մարզերում Ցերեկային ստացիոնար բաժանմունքների դիրքավորվածությունը «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» և «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշների տարածությունում, 2017 թ.



Փսիխոսոմատիկ

Փսիխոսոմատիկ բաժանմունք կա մեկ հատ և միայն Երևանում՝ «Արմենիա» հանրապետական ԲԿ ՓԲԸ-ում:

Աղյուսակ 64. Փսիխոսոմատիկ բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են ընդ.	Ընդունվել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մեռած են	Մահճ. * օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Փսիխոսոմատիկ	1	15	304	0	0	321	3	15	3,265	218	10.1

Քիթ-կոկորդ-ականջ՝ մանկական և մեծահասակների


Մանկական քիթ-կոկորդ-ականջ բաժանմունքներ կան միայն երկուսը՝ Երևանում («Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ում և «Արաբկիր երեխաների և դեռահասների Առողջության Ինստիտուտ» ՍՊԸ-ում):

Քիթ-կոկորդ-ականջ մեծահասակների բաժանմունքներ կան յոթ մարզերում, սակայն բացակայում են Գեղարքունիքում, Լոռիում, Վայոց Ձորում և Սյունիքում:

Աղյուսակ 65. Քիթ-կոկորդ-ականջ բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մարզ	Բաժանմունք	Բաժան. թիվը	Մահճակալների միջին տարեկան թիվը	Ընդունվել են ընդ.	Ընդունվել են 0-14	Ընունվել են 15-17	Դուրս են գրվել	Մահացել են	Մեռած են	Մահճ. * օր	Մահճ. տար. միջին զբաղ. օր	Հիվ. մնալու օրերի միջին քանակը
ԵՐ	Քիթ-կոկորդ-ականջ մանկական	2	45	2,315	2,190	42	2,323	0	1	16,440	365	7.0
ԱԳ	Քիթ-կոկորդ-ականջ մեծահասակ	2	4	21	12	0	21	0	0	45	11	2.3
ԱՍ	Քիթ-կոկորդ-ականջ մեծահասակ	1	5	190	94	12	189	0	0	465	93	2.5
ԱՐ	Քիթ-կոկորդ-ականջ մեծահասակ	1	2	33	8	2	33	0	0	33	17	1.0
ԵՐ	Քիթ-կոկորդ-ականջ մեծահասակ	11	211	6,381	474	520	6,422	0	32	38,487	182	7.5
ԿՈ	Քիթ-կոկորդ-ականջ մեծահասակ	1	3	33	3	3	33	0	0	134	45	4.1
ՇԻ	Քիթ-կոկորդ-ականջ մեծահասակ	2	14	162	4	13	162	0	0	479	34	4.0
ՏԱ	Քիթ-կոկորդ-ականջ մեծահասակ	1	2	14	1	1	14	0	0	33	17	2.4


Գծապատկեր 74. Քիթ-կոկորդ-ականջ մեծահասակների բաժանմունքներում մահճակալների և ընդունված հիվանդների մարզային բաշխումը



Մանկական և մեծահասակների բաժանմունքների տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ Երևանում մանկական բաժանմունքներն աշխատում են նշանակալիորեն ավելի

բարձր ծանրաբեռնվածությամբ, քան մեծահասակների բաժանմունքները, իսկ վերջինների ծանրաբեռնվածությունը գերազանցում է մարզային բաժանմունքներինը: Այս դրույթն ակնառու դիտվում է Գծապատկեր 75-ում:

Գծապատկեր 75. Մարզերում Քիթ-կոկորդ-ականջ՝ մանկական և մեծահասակների բաժանմունքների դիրքավորվածությունը «Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը» և «Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը» ցուցանիշների տարածությունում, 2017 թ.



Օրթոպեդիկ՝ մանկական և մեծահասակների

Մանկական օրթոպեդիկ բաժանմունքներ 2017 թ. կային Արարատում («Մասիս» օրթոպեդիկ հիվանդանոց ՓԲԸ), որը նույնտարվա վերջում փակվել է և Երևանում («Արաբկիր երեխաների և դեռահասների Առողջության Ինստիտուտ» ՍՊԸ):

Միայն Երևանում կա մեծահասակների օրթոպեդիկ երեք բաժանմունք՝ : Ընդ որում Օրթոպեդիկ՝ մեծահասակների բաժանմունքներում մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը ցուցանիշը 370 է՝ գերազանցում է 365-ը:

Աղյուսակ 66. Օրթոպեդիկ բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մա րզ	Բաժանմունք	Բաժան թիվը	Մահճա կալներ ի միջին տարե- կան թիվը	Ընդուն- վել են՝ ընդ.	Ընդուն- վել են 0-14	Ընուն- վել են 15-17	Դուրս գրվել են	Մահա- ցել են	Մեռ ւմ են	Մահճ.* օր	Մահճ. տար. միջին գրադ., օր	Հիվ. մնայու օրերի միջին քանակ ը
ԱՐ	Օրթոպեդիկ մանկական	1	25	207	182	3	207	0	0	2,090	84	10.1
ԵՐ	Օրթոպեդիկ մանկական	1	5	253	217	35	253	0	0	714	143	2.8
ԵՐ	Օրթոպեդիկ մեծահասակ	3	100	4,489	10	752	4,603	7	29	37,013	370	8.3

Ֆիզիոթերապևտիկ

Ֆիզիոթերապևտիկ բաժանմունք կա միայն մեկը՝ Կոտայքում՝ «Արզնու» երկաթգծի հիվանդանոցայի վերականգնողական կենտրոն ՓԲԸ-ում:

Աղյուսակ 67. Ֆիզիոթերապևտիկ բաժանմունքների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2017

Մա րզ	Բաժանմունք	Բա ժա ն թի վը	Մահճա- կալների միջին տարեկան թիվը	Ընդուն- վել են՝ ընդ.	Ընդուն- վել են 0-14	Ընուն- վել են 15-17	Դուրս գրվել են	Մահա- ցել են	Մեռում են	Մահճ* օր	Մահճ. տար. միջին գրադ., օր	Հիվ. մնայու օրերի միջին քանակ ը
ԿՈ	Ֆիզիոթերապևտիկ	1	20	10	0	0	10	0	0	51	3	5.1

12 . Հիվանդների քանակը մարզային բաժանմունքներում

Հայաստանի առողջապահական համակարգի արդյունավետության խնդիրների շարքում է այն, որ մարզերի բնակչության նշանակալի մասը գերադասում է հիվանդանոցային բուժօգնությունը ստանալ Երևանում, նույնիսկ այն դեպքերում, երբ անհրաժեշտ հիվանդանոցային բաժանմունքներն առկա են իրենց մարզերում: Այդ խնդրի լուծման համար Հայաստանի յուրաքանչյուր մարզում ընտրվել է, վերանորոգվել և համալրվել սարքավորումներով մեկական բազմապրոֆիլ հիվանդանոց (տես՝ Հավելված 3. Մարզային և երևանի արդիականացված բժշկական կենտրոնները):

Հարց է առաջանում, արդյո՞ք ներկայում Հայաստանի առողջապահական համակարգի հիվանդանոցային հատվածում մնացել է այդ խնդիրը և, եթե այո, ապա ո՞ր մարզում և որքա՞ն է այդ խնդրի լրջությունը:

Նշված հարցերի պատասխանները ստանալու համար ենթադրենք, որ, **մնացած հավասար պայմաններում**, մարզերում հիվանդանոց ընդունվածների քանակի հարաբերությունը մարզերի բնակչության քանակին պետք է [մոտավորապես] նույնը լինի: Այլ կերպ՝ հիվանդների տոկոսային բաշխումը մարզային բաժանմունքներում և Հայաստանի բնակչության մարզային բաշխումը պետք լինեն [մոտավորապես] նույնը:

Ակնհայտ է, որ իրականությունը օբյեկտիվ պատճառներով կարող է շեղված լինել այդ ենթադրությունից: Օրինակ, որովհետև մարզերում կարող են բացակայել համապատասխան հիվանդանոցային բաժանմունքները, կարող են էապես տարբերվել տվյալ բաժանմունքում բուժվող հիվանդությունների հիվանդացության խորացվածությունը, կարող է տարբերվել բնակչության սեռատարիքային կառուցվածքը, բնակավայրը գտնվում է մի մարզում, իսկ անհրաժեշտ հիվանդանոցային բաժանմունքը՝ հարևան մարզում, կամ այլ պատճառներով: Հարկ է նշել նաև, որ Երևանի դե յուրե բնակչությունը, որը հրապարակում է ՀՀ ԱՎԾ-ն՝ ընթացիկ հաշվառմամբ, իրականում ավելի մեծ է ներքին միգրացիայի հետևանքով: Հաճախ մարզերի բնակիչները մեկնում են Երևան՝ մշտական բնակության, սակայն չեն փոխում իրենց հաշվառման վայրը: Բնականաբար, այդ մարդիկ հիվանդանոցային բուժօգնությունը ստանում են Երևանում, որի հետևանքով Երևանում հիվանդանոց դիմող անձանց քանակը ստացվում է ավելի բարձր:

Բացառելու համար մեր կարծիքով շեղում առաջացնող ամենակարևոր պատճառը՝ այն, որ «**մարզում բացակայում է համապատասխան հիվանդանոցային բաժանմունքը**» գնահատումը կատարվել է այն հիվանդանոցային բաժանմունքների համար, որոնք առկա են բոլոր 11 մարզերում: Դրանք, ինչպես արդեն գիտենք, յոթն են՝ վիրաբուժական, հղիների և ծննդօգնության, զինվորական մեծահասակների, թերապևտիկ, հղիության՝ պաթոլոգիաների, մանկաբուժական և ինֆեկցիոն՝ մեծահասակների:

Գնահատման արդյունքները ներկայացված են Գծապատկեր 76 և Գծապատկեր 77-ում: Գծապատկերներում տարբեր գույների շրջանակ-սիմվոլներով (●) պատկերված են 2017 թ տվյալ մարզում դիտարկվող բաժանմունքներ ընդունված հիվանդների հարաբերական քանակը տոկոսներով, 2017 թ. տվյալ տիպի բաժանմունքներ ընդունված հիվանդների հանրապետական քանակից:

Բոլոր սյուներում շեղանկյուն կարմիր գույնի սիմվոլով (◆) պատկերված է տվյալ մարզի բնակչության տոկոսը՝ Հայաստանի ամբողջ բնակչությունից:


Եթե դիտարկվող մարզին համապատասխան սյունում, տվյալ բաժանմունքը ներկայացնող ● սիմվոլն ավելի բարձր է գտնվում մարզի բնակչության քանակի մակարդակից, այսինքն՝ ◆ սիմվոլից, ապա այդ բաժանմունք ընդունվածների քանակն ավելի բարձր է մեր սահմանած «իդեալական» նորմայից: Իսկ, եթե սյունում (մարզում) շրջանակը՝ ●-ն, ավելի ցածր է ◆-ից, ապա բաժանմունք ընդունված հիվանդների քանակն ավելի ցածր է «իդեալական» նորմայից:

Գծապատկեր 76-ում տրված են գնահատականները, ներառյալ Երևանը: Քանի որ Երևանի դիտարկման հարմար մասշտաբի դեպքում մնացած մարզերի վիզուալ դիտարկումը դժվարանում է, այդ պատճառով Գծապատկեր 77-ում տրված է իրավիճակը առանց Երևանի: Նշենք, որ այդ գծապատկերում, ուղղահայաց առանցքի մասշտաբի պատճառով, դուրս է մնացել նաև Լոռու մարզի թերապևտիկ բաժանմունքների ցուցանիշը, որը հավասար է 18.7%-ի:


Գծապատկերներում տրված է ◆ սիմվոլները միացնող գիծը, քանի որ այդ սիմվոլը երբեմն վերածածկվում է ● սիմվոլներով:

Չծանրաբեռնելու համար գծապատկերները թվային տվյալներով, դրանք տրված են առանձին՝ Աղյուսակ 68-ում: Որպեսզի հնարավոր լինի համեմատել բոլոր մարզերի բոլոր յոթ դիտարկված բաժանմունքների տվյալները, Աղյուսակ 69-ում տրված են Աղյուսակ 68-ի նորմավորված տվյալները: Նորմավորումը կատարվել է յուրաքանչյուր մարզում տվյալ բաժանմունքի ցուցանիշը բաժանելով այդ մարզի բնակչության քանակի վրա: Աղյուսակ 69-ի վանդակները գունավորված են: Այն վանդակները, որոնցում տվյալը մեծ է 1-ից, այսինքն՝ բաժանմունքի գործունեության արդյունավետությունը «նորմայից» բարձր է, գունավորված են կարմիրի երանգներով: Որքան տվյալն ավելի մեծ է 1-ից, այնքան մուգ կարմիր է վանդակը: Այն վանդակները, որոնցում տվյալը փոքր է 1-ից, այսինքն՝ բաժանմունքի գործունեության արդյունավետությունը «նորմայից» ցածր է, գունավորված են կապույտի երանգներով:

Գծապատկեր 76. Բոլոր մարզերում առկա բաժանմունքներում ընդունված հիվանդների բաշխումը Հայաստանի մարզերում, 2017



Պճապատկեր 77. Բոլոր մարզերում առկա բաժանմունքներում ընդունված հիվանդների բաշխումը Հայաստանի մարզերում, 2017 (առանց Երևանի)



Աղյուսակ 68.Բոլոր մարզերում առկա բաժանմունքներում ընդունված հիվանդների բաշխումը Հայաստանի մարզերում, 2017

	ԱԳ	ԱՄ	ԱՐ	ԳԵ	ԵՐ	ԼՈ	ԿՈ	ՇԻ	ՍՑ	ՎՁ	ՏԱ
Վիրաբուժական	1.7%	2.7%	3.5%	5.9%	60.0%	5.9%	4.3%	9.6%	2.9%	1.1%	2.4%
Հիվանդի և ծննդ.	2.1%	4.0%	6.4%	6.0%	50.3%	9.3%	5.8%	8.6%	3.2%	1.0%	3.2%
Գինեկոլոգ. մեծ.	0.6%	2.3%	2.4%	3.5%	73.2%	2.9%	6.8%	4.3%	2.8%	0.3%	0.8%
Թերապևտիկ	2.9%	4.8%	8.4%	5.7%	29.2%	18.7%	10.1%	7.6%	6.2%	0.2%	6.2%
Հիվանդության պաթոլ.	1.0%	3.6%	4.8%	2.6%	72.7%	1.8%	2.1%	5.4%	4.3%	0.3%	1.4%
Մանկաբուժական	4.0%	8.9%	10.1%	7.2%	40.7%	6.1%	4.0%	6.2%	5.9%	1.9%	5.0%
Ինֆեկցիոն մեծ.	2.7%	11.5%	7.7%	7.2%	42.4%	6.3%	4.9%	3.5%	7.8%	1.1%	4.9%
Բնակչություն	4.3%	8.9%	8.7%	7.7%	36.0%	7.4%	8.5%	8.0%	4.7%	1.7%	4.2%

Աղյուսակ 69.Բոլոր մարզերում առկա բաժանմունքներում ընդունված հիվանդների բաշխումը Հայաստանի մարզերում (նորմավորված արժեքներ), 2017

Բաժանմունք	ԱԳ	ԱՄ	ԱՐ	ԳԵ	ԵՐ	ԼՈ	ԿՈ	ՇԻ	ՍՑ	ՎՁ	ՏԱ
Վիրաբուժական	0.40	0.30	0.40	0.77	1.67	0.79	0.51	1.20	0.63	0.62	0.57
Հիվանդի և ծննդ.	0.49	0.45	0.73	0.78	1.40	1.26	0.68	1.08	0.69	0.58	0.77
Գինեկոլոգիական մեծ.	0.14	0.26	0.28	0.45	2.03	0.39	0.80	0.54	0.59	0.19	0.19
Թերապևտիկ	0.67	0.54	0.96	0.75	0.81	2.52	1.19	0.96	1.33	0.14	1.47
Հիվանդության պաթոլոգ.	0.24	0.40	0.55	0.33	2.02	0.24	0.24	0.68	0.91	0.18	0.33
Մանկաբուժական	0.92	1.00	1.17	0.93	1.13	0.83	0.47	0.77	1.25	1.11	1.20
Ինֆեկցիոն մեծ.	0.63	1.29	0.88	0.93	1.18	0.85	0.58	0.44	1.66	0.67	1.16
Բնակչություն	1.00	1.00	1.00	1.00	1.00	1.00	1.00	1.00	1.00	1.00	1.00

Արդյունքների նախնական վիզուալ գնահատումը հարմար է Գծապատկերների միջոցով, սակայն վերլուծության համար առավել հարմար է օգտվել Աղյուսակ 69-ից, և քանի որ աղյուսակի տվյալները նորմավորված են, հետևաբար դրանք թույլ են տալիս պատկերացում կազմել.

- յուրաքանչյուր մարզում դիտարկվող յոթ տիպի բաժանմունքների գործունեության համեմատական արդյունավետության մասին,
- դիտարկվող յոթ տիպի բաժանմունքներից յուրաքանչյուրի համեմատական արդյունավետության մասին տարբեր մարզերում:

Վերլուծության մոտեցումը հետևյալն է. եթե տվյալ մարզում տվյալ բաժանմունք ընդունված հիվանդների հարաբերական քանակը խիստ նվազ է մարզի բնակչության հարաբերական քանակից (համապատասխան վանդակը մուգ կապույտ է), ապա տվյալ մարզի տվյալ բաժանմունքներում առկա է խնդիր:

Աղյուսակը չի հուշում խնդրիբովանդակությունը: Այն կարող է լինել նշված մարզի բնակչության հիվանդանոցի անհարմար դիրքավորվածությունը, տվյալ բաժանմունքի բժիշկների նկատմամբ բնակչության հիմնավորված կամ անհիմն անվստահությունը, բաժանմունքի հնարավորությունների օբյեկտիվ թերությունները կամ այլ պատճառներ: Վեր հանելու համար պատճառների բովանդակությունն անհրաժեշտ է մասնագիտացված գնահատում: Խիստ ցածր ցուցանիշների դիտարկումը նվազեցնում է հավանականությունը, որ իրականում պրոբլեմը բացակայում է և տեղի ունեն - 133 - էջում շեղատառ նշված դեպքերը:

Դիտենք բաժանմունքների գործունեության արդյունավետությունը՝ հիվանդների համապատասխան քանակ ընդունելու տեսակետից:

Երևանում դիտարկվող յոթ բաժանմունքներից վեցն ունեն «նորմայից» բարձր ցուցանիշներ: Դա հատկապես վերաբերվում է մեծահասակների գինեկոլոգիական (որոնց 73.2%-ը ընդունվում է երևանյան բաժանմունքներ) և հղիության պաթոլոգիաների (երևանյան բաժանմունքներ է ընդունվում հիվանդների 72.7%-ը) բաժանմունքներին:

Երևանում մեծ է նաև վիրաբուժական (ընդունում են բոլոր վիրաբուժական դեպքերի 60.0%-ը) և հղիների ու ծննդօգնության (ընդունում են բոլոր այդ հիվանդների 50.3%-ը) բաժանմունքների բեռնվածքը:

Երևանում «նորմայից» ցածր է միայն թերապևտիկ բաժանմունքների բեռնվածքը: Այստեղ ընդունվում են ամբողջ Հայաստանում 2017 թ.-ին թերապևտիկ բաժանմունք ընդունվածների 29.2%, այն դեպքում, երբ Երևանի բնակչությունը կազմում է Հայաստանի բնակչության 36.0%-ը: Չի բացառվում, որ դրա պատճառը մասնագիտացված բաժանմունքների առատությունն է, ինչի հետևանքով հիվանդների մի մասը, ովքեր կարող էին բուժվել թերապևտիկ բաժանմունքներում, ուղղորդվում են մասնագիտական բաժանմունքներ:

Վերը նշվածից հետևում է, որ Հայաստանում դեռևս մեծ չափով առկա է այն երևույթը, երբ Երևանյան հիվանդանոցներն դեպի իրենց են ձգում մարզերի հիվանդներին, նույնիսկ այն բաժանմունքների տեսակետից, որոնք մարզերում առկա են և արդեն ունեն համապատասխան ժամանակակից բաժանմունքներ:

Աղյուսակ 69-ից երևում է, որ առավել խնդրահարույցն է՝ **հղիության պաթոլոգիաների** բաժանմունքը: Առավել ցածր են ցուցանիշները Արագածոտն, Արմավիր, Արարատ, Վայոց Ձոր և Տավուշի մարզերում: Ընդ որում, եթե առաջին երեքի դեպքում կարելի է ենթադրել, որ անհրաժեշտության դեպքում բնակչությունը հեշտությամբ դիմում է Երևան՝ մայրաքաղաքին մոտ գտնվելու պատճառով, ապա Վայոց Ձորի և հատկապես Տավուշի մարզերի դեպքում, հավելյալ դիտարկումն անհրաժեշտություն է:

Ուշադրության արժանի երկրորդն է մեծահասակների **գինեկոլոգիական** բաժանմունքների գործունեությունը, որոնց ցուցանիշները շատ ցածր են նույն՝ Արագածոտն, Արմավիր, Արարատ, Վայոց Ձոր և Տավուշի մարզերում և, բացի դրանից՝ Լոռու և Կոտայքի մարզերում:

Վիրաբուժական բաժանմունքի ցուցանիշները շատ ցածր են Երևանին մոտ գտնվող Արագածոտն, Արմավիր և Արարատի մարզերում: Հավանաբար, այստեղ իրավիճակը պայմանավորող ամենակարևոր գործոնը Երևանին մոտ գտնվելն է, քանի որ մարդիկ գերադասում են Երևանի հիվանդանոցները՝ մարզային բժշկական կենտրոններից:

Հարաբերականորեն բարվոք կարելի է համարել իրավիճակը **մանկաբուժական** և **ինֆեկցիոն** մեծահասակների բաժանմունքներում, որտեղ ցուցանիշների շատ փոքր արժեքներ քիչ են: Մասնավորապես հարկ է ուշադրություն դարձնել մանկաբուժական բաժանմունքներին **Կոտայքում**, իսկ ինֆեկցիոն բաժանմունքներին՝ **Շիրակում**:

Մարզերում բաժանմունքների գործունեությունը դիտարկելիս աչքի են ընկնում երկու խումբ՝ Արագածոտն, Արարատ և Արմավիր մարզերը, որոնցում առկա են երեքից՝ հինգ շատ ցածր ցուցանիշներով բաժանմունքներ: Այստեղ, մեծ հավանականությամբ խնդիրը մարդկանց վստահության հարցն է: Երկրորդ խումբն է՝ Տավուշը և Վայոց Ձորը, որտեղ շատ ցածր ցուցանիշների պատճառները պետք է հավելյալ վեր հանել:

13 . Բաժանմունքներում մահճակալների միջին քանակի դինամիկան 2010-2017

Այս բաժնում դիտարկված են հիվանդանոցային բաժանմունքներում մահճակալների միջին քանակի ցուցանիշներն ըստ բաժանմունքների՝ Հայաստանի Հանրապետությունում, մարզերում և տարածաշրջաններում:

Մահճակալների տարեկան միջին քանակը մարզերում

Հիվանդանոցային մահճակալների քանակը Հայաստանում 2010-2016 թթ. ունեցել է մոնոտոն աճի միտում՝ 12,395-ից մինչև 12,951, կամ՝ 4.5%-ով (Աղյուսակ 70): Սակայն 2017 թ. այն նվազել է մինչև 12,858: Հայաստանում մահճակալների քանակի աճը պայմանավորվել է հիմնականում Երևանում դրանց թվի աճով՝ 2010 թ. 7,485-ից, որը կազմում էր Հայաստանում բոլոր հիվանդանոցային մահճակալների թվի 60.39%-ը, մինչև 8,190 մահճակալ՝ 2017 թ., որը կազմում է բոլոր մահճակալների 63.7%-ը (Աղյուսակ 71):

Դիտարկվող տարիների ընթացքում մահճակալների քանակի աճ է տեղի ունեցել Սյունիքում՝ 423-ից մինչև 476 կամ 1.5%-ով, Արմավիրում մահճակալների աճ է տեղի ունեցել 2014-ին՝ 339-ից հասնելով 381, սակայն հաջորդ՝ 2015-ից այն կրճատվել է մինչև 369 և մնացել նույն քանակով՝ մինչ 2017-ը:

Մահճակալների քանակի մոնոտոն նվազում է տեղի ունեցել 2010-2017 թթ.՝ Լոռիում: Մահճակալների քանակը նվազել է 593-ից մինչև 502 կամ՝ 15.3%-ով: 2014-ին կրճատվել է մահճակալների քանակը Արարատում, իսկ Տավուշի մարզում մահճակալների կրճատման միտումը սկսվել է 2012-ից, երբ այն հավասար էր 296-ի, մինչև 2017, երբ այն դարձավ՝ 252: Կրճատումը կազմեց՝ մոտ 15%:

Աղյուսակ 70. Մահճակալների միջին քանակը մարզերում, 2010-2017

Մարզ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Դիագրամ
ԱԳ	208	198	203	210	210	210	200	189	
ԱՄ	335	338	339	339	381	369	369	369	
ԱՐ	577	569	577	577	552	552	520	462	
ԳԵ	815	815	779	775	775	775	775	775	
ԵՐ	7,485	7,641	7,766	7,771	8,022	8,000	8,196	8,190	
ԼՈ	593	580	533	528	500	500	500	502	
ԿՈ	675	675	630	660	660	690	668	668	
ՇԻ	909	867	926	947	910	935	901	887	
ՍՅ	423	423	443	463	472	463	481	476	
ՎՁ	95	95	95	95	82	80	88	88	
ՏԱ	280	275	296	276	276	261	253	252	
ԸՆդամենը	12,395	12,476	12,587	12,641	12,840	12,835	12,951	12,858	

Աղյուսակ 71. Մահճակալների քանակը մարզերում, % ընդամենից:

Մարզ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Դիագրամ
ԱԳ	1.68%	1.59%	1.61%	1.66%	1.64%	1.64%	1.54%	1.47%	
ԱՍ	2.70%	2.71%	2.69%	2.68%	2.97%	2.87%	2.85%	2.87%	
ԱՐ	4.66%	4.56%	4.58%	4.56%	4.30%	4.30%	4.02%	3.59%	
ԳԵ	6.58%	6.53%	6.19%	6.13%	6.04%	6.04%	5.98%	6.03%	
ԵՐ	60.39%	61.25%	61.70%	61.47%	62.48%	62.33%	63.28%	63.70%	
ԼՈ	4.78%	4.65%	4.23%	4.18%	3.89%	3.90%	3.86%	3.90%	
ԿՈ	5.45%	5.41%	5.01%	5.22%	5.14%	5.38%	5.16%	5.20%	
ՇԻ	7.33%	6.95%	7.36%	7.49%	7.09%	7.28%	6.96%	6.90%	
ՍՅ	3.41%	3.39%	3.52%	3.66%	3.68%	3.61%	3.71%	3.70%	
ՎԶ	0.77%	0.76%	0.75%	0.75%	0.64%	0.62%	0.68%	0.68%	
ՏԱ	2.26%	2.20%	2.35%	2.18%	2.15%	2.03%	1.95%	1.96%	
Ընդամենը	100.00%	100.00%	100.00%	100.00%	100.00%	100.00%	100.00%	100.00%	

Հիվանդանոցային բաժանմունքների մահճակալների ընդհանուր քանակի դինամիկան Հայաստանում

Հիվանդանոցային բաժանմունքների մահճակալների ընդհանուր քանակի դինամիկան ՀՀ-ում տրված է Աղյուսակ 72-ում: Աղյուսակում բաժանմունքները դասավորված են ըստ 2017 թ. դրանց ընդհանուր քանակի նվազման:

Մեծահասակների.

1. վիրաբուժական
2. հոգեբուժական

Այս բաժանմունքները մահճակալների երկու ամենամեծ քանակ ունեցողներն են՝ 2017 թ. համապատասխանաբար 1,549 և 1,355 մահճակալ, կամ հիվանդանոցային մահճակալների ընդհանուր քանակի համապատասխանաբար 12.0% և 10.5%, իսկ միասին բոլոր հիվանդանոցային մահճակալների 22.6%-ն են կազմել:

Մահճակալային ֆոնդի նշանակալի մասնաբաժինն են կազմում նաև հետևյալ բաժանմունքների մահճակալները.

3. Հղիների և ծննդաբերության,
4. Թերապևտիկ,
5. Մանկաբուժական,
6. Սրտաբանական,
7. Գիեկոլոգիական՝ մեծահասակների

Նշված 7 բաժանմունքներում է Հայաստանի հիվանդանոցային մահճակալային ֆոնդի մոտ կեսը՝ 49.1%-ը:

Եվս վեց բաժանմունքների՝ Ուռուցքաբան. Մեծահասակ, Ինֆեկցիոն մեծահասակ, Ցերեկային ստացիոնար, Նյարդաբանակ. Մեծահասակ, Վերականգնող. Մեծահասակ և Հղիության պաթոլոգիաների բաժանմունքների մահճակալների քանակի հետ միասին, առաջին 13 առավել մեծ քանակով մահճակալներ ունեցող բաժանմունքներում է Հայաստանի հիվանդանոցային մահճակալների 2/3-ը՝ 67.7%-ը:

Հայաստանում մահճակալային ֆոնդի 80%-ը գտնվում է 20 տիպի բաժանմունքներում, որոնց թվաքանակի դինամիկան տրված է Աղյուսակ 73-ում: Բաժանմունքները դասավորված են ըստ 2017 թ. դրանցում մահճակալների քանակի նվազման:

Աղյուսակ 73-ում տրված են հաջորդ 23 տիպի բաժանմունքները՝ ըստ մահճակալների քանակի նվազման, որոնցում գտնվում է Հայաստանի մահճակալային ֆոնդի 15%-ը, իսկ Աղյուսակ 74-ում՝ ըստ մահճակալների քանակի նվազման վերջին 28 տիպի բաժանմունքները:

Ինչպես երևում է աղյուսակից, վերջին 2-3 տարիների ընթացքում կրճատվել է առավել մեծ քանակով մահճակալային ֆոնդ ունեցող բաժանմունքներում մահճակալների քանակը: Մասնավորապես՝ մեծահասակների վիրաբուժական բաժանմունքներում՝ 2015 թ. 1573-ից մինչև 1549 մահճակալ՝ 2017 թ., մեծահասակների հոգեբուժական՝ բաժանմունքներում մահճակալների թվի կրճատումը սկսվել է 2014-ից: Եթե 2013 թ. այդ բաժանմունքներում կար 1405 մահճակալ, ապա 2017 թ.՝ 1355: Կրճատումը կազմել է 50 մահճակալ:

Աղյուսակ 72. Մահճակալների քանակն ըստ բաժանմունքների, ՀՀ, 2010-2017: Տրված է 2017 թ.-ին մահճակալային ամբողջ ֆոնդի 80%-ը կազմող բաժանմունքները:

N	Բաժանմունք	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Գիազրում	% ընդամենից, 2017	% գումարային, 2017
1	Վիրաբուժակ. Մեծահասակ	1,516	1,554	1,514	1,453	1,557	1,573	1,549	1,549		12.0%	12.0%
2	Հոգեբուժակ. Մեծահասակ	1,375	1,375	1,394	1,405	1,380	1,380	1,355	1,355		10.5%	22.6%
3	Հղիների եւ ծնող.	962	996	1,010	1,016	1,028	1,028	926	924		7.2%	29.8%
4	Թերապևտիկ	863	861	834	825	829	822	786	800		6.2%	36.0%
5	Մանկաբուժական	518	527	553	560	641	671	649	654		5.1%	41.1%
6	Սրտաբանական	476	482	491	499	536	552	577	535		4.2%	45.2%
7	Գինեկոլոգիակ. Մեծահասակ	468	478	468	474	500	443	494	495		3.8%	49.1%
8	Ուռուցքաբան. Մեծահասակ	471	471	466	476	479	479	491	487		3.8%	52.9%
9	Ինֆեկցիոն մեծահասակ	461	434	432	437	415	411	434	433		3.4%	56.2%
10	ցերեկային ստացիոնար	269	333	391	416	349	401	402	407		3.2%	59.4%
11	Նյարդաբանակ. Մեծահասակ	350	364	363	362	377	400	392	383		3.0%	62.4%
12	Վերականգնող. Մեծահասակ	319	300	300	310	345	345	345	345		2.7%	65.1%
13	Հղիության պաթոլոգ.	221	220	260	255	260	227	344	340		2.6%	67.7%
14	Վնասվածքաբ. Մեծահասակ	297	295	311	334	312	332	337	329		2.6%	70.3%
15	Տուբերկուլ. Մեծահասակ	418	418	418	418	373	333	328	328		2.6%	72.8%
16	Ուռուցքաբանական մեծահասակ	205	205	215	227	232	242	263	245		1.9%	74.7%
17	Քիթ-կոկորդ-ականջ մեծահասակ	242	244	226	234	236	240	234	241		1.9%	76.6%
18	Ակնաբուժական մեծահասակ	256	254	244	208	217	218	215	226		1.8%	78.4%
19	Ինֆեկցիոն մանկական	195	197	200	200	200	195	195	195		1.5%	79.9%

Կտրուկ կրճատվել է Հիվանդների և ծննդաբանության բաժանմունքների մահճակալների քանակը՝ 2015 թ. 1028-ից մինչև 924՝ 2017 թ., կամ 104 մահճակալով՝ 10%-ով: Դրա փոխարեն կտրուկ աճել է Հիվանդության պաթոլոգիաների բաժանմունքների մահճակալների քանակը՝ 2011-ին 220-ից մինչև 340՝ 2017 թ. դառնալով, կամ 120-ով՝ 50%-ով:

2010-2017 թթ. մոնոտոն կրճատվել է թերապևտիկ մահճակալների քանակը՝ 863-ից դառանալով 800, կամ 63 մահճակալով՝ 7%-ով:

Մանկաբուժական մահճակալների թվաքանակը, որն աճում էր 2010-2015 թթ.՝ հասնելով 671-ի, 2017 թ. կրճատվել է մինչև 654:

2010-2016 թթ. սրտաբանական բաժանմունքների մահճակալների քանակն աճել է 476-ից մինչև 577, կամ 101-ով՝ 21%-ով:

2010-2016 թթ. աճել է մեծահասակների ուռուցքաբանական բաժանմունքների մահճակալների քանակը՝ 471-ից դառնալով 491, կամ 20-ով՝ 4%-ով:

Աղյուսակ 73. Մահճակալների քանակն ըստ բաժանմունքների, ՀՀ, 2010-2017: Տրված է 2017 թ.-ին մահճակալային ամբողջ ֆունդի մոտ 15%-ը կազմող բաժանմունքները:

N	Բաժանմունք	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Դիագրամ	% ընդամենից, 2017	% գումարային, 2017
20	Սրտային վիրաբուժ.	141	141	133	138	144	148	182	170		1.3%	1.3%
21	վերակենդանացման Մեծահասակ	88	107	119	138	178	157	161	169		1.3%	2.6%
22	Նյարդավիրաբ. Մեծահասակ	141	121	137	148	159	169	169	164		1.3%	3.9%
23	Ճառագայթ. Ռենտգեն	100	100	100	100	100	100	110	110		0.9%	4.8%
24	Մաշկավեներակ. Մեծահասակ	100	100	100	100	100	100	100	100		0.8%	5.5%
25	Օրթոպեդիկ մեծահասակ	95	95	95	95	97	101	105	100		0.8%	6.3%
26	Աղետամոքսային մեծահասակ	70	70	70	70	70	70	63	85		0.7%	7.0%
27	Ստոմատոլոգ. Մեծահասակ	64	67	67	59	73	68	93	85		0.7%	7.6%
28	վերակենդանացման մանկական	59	59	64	64	60	76	81	84		0.7%	8.3%
29	Կրծք. Վիրաբուժ. Մեծահասակ	75	75	75	75	78	78	68	82		0.6%	8.9%
30	Պրոկտոլոգիական	76	76	76	75	69	68	70	81		0.6%	9.6%
31	Թմբաբանական	80	80	80	80	80	80	80	80		0.6%	10.2%
32	Ներզատաբան. Մեծահասակ	130	130	130	110	146	119	97	77		0.6%	10.8%
33	Վնասվածքաբ. Մանկական	83	84	65	65	63	63	66	67		0.5%	11.3%
34	Վիրաբուժակ. Մանկական	105	111	108	112	105	95	95	65		0.5%	11.8%
35	Անոթային վիրաբ.	47	49	48	58	58	69	59	61		0.5%	12.3%
36	Երիկամաբան. Մեծահասակ	85	85	85	85	85	90	72	60		0.5%	12.8%
37	Ռեմատոլոգիական մեծահասակ	60	60	60	59	59	59	60	60		0.5%	13.2%
38	Նյարդաբանակ. Մանկական	42	52	52	52	52	52	52	52		0.4%	13.6%
39	Առիթմոլոգիական							27	51		0.4%	14.0%
40	Այրվածքային	60	60	60	60	60	60	50	50		0.4%	14.4%
41	միկրովիրաբուժական	50	48	36	55	51	51	41	48		0.4%	14.8%
42	Վերականգնող. Մանկական	70	45	45	45	45	45	45	45		0.3%	15.1%

Աղյուսակ 74. Մահճակալների քանակն ըստ բաժանմունքների, ՀՀ, 2010-2017: Տրված է 2017 թ.-ին մահճակալային ամբողջ ֆունդի 5%-ը կազմող բաժանմունքները:

N	Բաժանմունք	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Դիագրամ	% ընդամենից, 2017	% գումարային, 2017
43	Քիթ-կոկորդ-ականջ մանկական	20	20	20	30	45	45	45	45		0.3%	15.5%
44	ալլաստիկ վիրաբուժ.	6	6	53	43	20	31	43	42		0.3%	15.8%
45	Ակնաբուժական մանկական	53	53	53	38	38	38	38	38		0.3%	16.1%
46	Երիկամաբան. Մանկական	30	30	30	30	30	30	30	30		0.2%	16.3%
47	Թոքաբանական մեծահասակ	30	30	30	30	30	30	30	30		0.2%	16.6%
48	Ուռուցքաբան. Մանկական	30	30	30	30	30	30	30	30		0.2%	16.8%
49	Վիժումների կատար.	46	35	33	31	28	24	30	30		0.2%	17.0%
50	Տուբերկուլ. Մանկ.	35	35	30	30	30	30	30	30		0.2%	17.3%
51	Օրթոպեդիկ մանկական	55	55	55	55	55	55	55	30		0.2%	17.5%
52	Արյունաբան. Մեծահասակ	60	53	50	50	50	50	50	28		0.2%	17.7%
53	Անհետաձգելի մանկական բուժօգնություն							25	25		0.2%	17.9%
54	Արյունաբան. Մանկական	30	26	25	25	25	25	25	25		0.2%	18.1%
55	սուր թունավորման	25	25	25	25	25	25	25	25		0.2%	18.3%
56	Ստոմատոլոգ. Մանկական	16	12	13	20	20	20	22	23		0.2%	18.5%
57	Աղետամոքսային մանկական	20	20	20	20	20	20	20	20		0.2%	18.6%
58	Գինեկոլոգիակ. Մանկական	25	20	20	25	25	5	20	20		0.2%	18.8%
59	Թոքաբանական մանկական	19	19	19	19	20	20	20	20		0.2%	19.0%
60	Կրծք. Վիրաբուժ. Մանկական	20	20	20	20	20	20	20	20		0.2%	19.1%
61	Նյարդավիրաբ. Մանկական	20	20	20	20	20	20	20	20		0.2%	19.3%
62	Ուռուցքի մանկական	20	20	20	20	20	20	20	20		0.2%	19.4%
63	ֆիզիոթերապևտիկ	50	50	50	50	20	20	20	20		0.2%	19.6%
64	Ալերգոլոգիական մեծահասակ	19	19	18	20	20	20	20	17		0.1%	19.7%
65	Փսիխոսոմատիկ	15	15	15	15	15	15	15	15		0.1%	19.8%
66	Ալերգոլոգիական մանկական	10	10	10	10	13	13	13	13		0.1%	19.9%
67	Ընդհանուր	5	5	5	5	5	5	10	10		0.1%	20.0%
68	Հոգեբուժակ. Մանկական	8		8	8	8	8	8	8		0.1%	20.1%
69	Ոսկրածուծի փոխպատվաստում								7		0.1%	20.1%
70	Թարախ. Վիրաբ. Մեծահասակ	20	20	20	20	10	6	5			0.0%	20.1%
71	ռեպրոդուկտոլոգիա	5	5								0.0%	20.1%

Մահճակալի տարեկան միջին զբաղվածության դինամիկան Հայաստանում (շտեմարան՝ 2-1000 ՄՖ)

Գծապատկեր 78-ում ներկայացված է հիվանդանոցային բաժանմունքներում մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը՝ օրերով 2017 թ.:

Գծապատկերից երևում է, որ մանկական երիկամաբանական բաժանմունքից մինչև Մանկական բաժանմունքներում մահճակալի տարեկան միջին զբաղվածության ցուցանիշը մեծ է 365-ից, ինչի վերաբերյալ մեկնաբանությունները տրված են Մեթոդաբանություն բաժնում: Չի բացառվում, որ այդ մեկնաբանությունների կոնտեքստում պետք է դիտարկել նաև մանկական քիթ-կոկորդ-ականջ բաժանմունքի ցուցանիշը՝ 365 օր:

Հիվանդանոցային մահճակալների տարեկան միջին ցուցանիշը շատ բարձր է մեծահասակների հոգեբուժական (329), մեծահասակների արյունաբանական (319) բաժանմունքներում: Նման բարձր ցուցանիշները նշանակում են, որ գոյություն ունի հավանականություն, որ հնարավոր են դեպքեր, երբ հիվանդի առկայության դեպքում հիվանդանոցներում կարող են չլինել ազատ մահճակալներ և հիվանդը կարող է չստանալ անհրաժեշտ բուժօգնությունը: Այս հարցը անհրաժեշտ է հավելյալ ուսումնասիրել:


Մահճակալների տարեկան միջին զբաղվածության օրերի քանակի 100 օրից ցածր արժեքներ ունեն հետևյալ բաժանմունքները.

- Ուռուցքաբանական՝ մանկական՝ 96,
- Վիժումների կատարման՝ 94,
- Օրթոպեդիկ՝ մանկական՝ 93,
- Պլաստիկ վիրաբուժության՝ 74,
- Սուր թունավորումների՝ 57,
- Ակնաբուժական՝ մանկական՝ 43,
- Ոսկրածուծի փոխպատվաստման՝ 16,
- Հոգեբուժական՝ մանկական՝ 16,
- Ֆիզիոթերապևտիկ՝ 3:

Ակնհայտ է, որ այս բաժանմունքների մեծ մասի թերբեռնվածությունը էական չէ՝ դրանց սոցիալական կարևոր նշանակության հետևանքով: Բացառություն են կազմում միայն պլաստիկ վիրաբուժության և ֆիզիոթերապևտիկ բաժանմունքների թերբեռնվածությունը: Կարելի է ենթադրել, որ Ֆիզիոթերապևտիկ բաժանմունքի թերբեռնվածությունը պայմանավորված է ոչ թե դրա ցածր անհրաժեշտությամբ, այլ բուժման բարձր գնով: Եթե ենթադրությունը ճիշտ է, ապա արժե դիտարկել այդ բաժանմունքի ծառայությունների ֆինանսական մատչելիության բարձրացման հարցը:

Աղյուսակ 75 և Աղյուսակ 76 -ում տրված է բաժանմունքների մահճակալների տարեկան միջին զբաղվածության օրերի դինամիկան :

Գծապատկեր 78. Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը բաժանմունքներում, 2017



Աղյուսակ 75. Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունն ըստ բաժանմունքների, ՀՀ, 2010-2017

N	Բաժանմունք	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Դիագրամ
1	Ալերգոլոգիական մանկական	333	308	321	339	332	374	437	420	
2	Ալերգոլոգիական մեծահասակ	195	225	217	329	349	300	272	299	
3	Ակնաբուժական մանկական	28	37	106	40	73	41	42	43	
4	Ակնաբուժական մեծահասակ	176	203	175	169	148	162	162	178	
5	Աղեստամոքսային մանկական	176	172	156	186	216	217	240	218	
6	Աղեստամոքսային մեծահասակ	238	279	266	265	269	203	233	237	
7	Այրվածքային	133	136	128	107	127	116	143	153	
8	Անհետաձգելի մանկական բուժօգնություն	-	-	-	-	-	-	739	696	
9	Անոթային վիրաբ.	297	323	334	245	315	280	313	368	
10	Առիթմոլոգիական	-	-	-	-	-	-	588	830	
11	Արյունաբան. Մանկական	207	239	241	219	225	235	259	235	
12	Արյունաբան. Մեծահասակ	194	266	242	263	283	193	211	319	
13	Գինեկոլոգիակ. Մանկական	65	83	88	83	67	-	108	113	
14	Գինեկոլոգիակ. Մեծահասակ	143	138	150	135	132	131	115	114	
15	Երիկամաբան. Մանկական	484	617	749	1,110	1,301	1,460	991	1,091	
16	Երիկամաբան. Մեծահասակ	202	206	229	229	233	219	293	266	
17	Ընդհանուր	46	51	52	55	92	82	42	39	
18	Թարախ. Վիրաբ. Մեծահասակ	170	122	155	122	222	195	227	-	
19	Թերապևտիկ	185	193	230	250	326	297	314	287	
20	Թմբաբանական	236	231	226	222	234	217	256	199	
21	Թոքաբանական մանկական	424	409	420	484	562	479	515	428	
22	Թոքաբանական մեծահասակ	171	192	206	171	197	191	194	159	
23	Ինֆեկցիոն մանկական	182	179	173	167	188	228	185	195	
24	Ինֆեկցիոն մեծահասակ	160	166	166	166	201	194	172	166	
25	Կրծք. Վիրաբուժ. Մանկական	99	109	132	144	154	150	199	201	
26	Կրծք. Վիրաբուժ. Մեծահասակ	168	174	185	227	223	222	261	228	
27	Հոլիների եւ ծննդ.	210	188	187	180	184	184	183	168	
28	Հոլություն պարթոլոգ.	241	291	268	284	298	274	262	258	
29	Հոգեբուժակ. Մանկական	91	-	54	36	37	98	31	16	
30	Հոգեբուժակ. Մեծահասակ	308	295	305	299	321	313	329	329	
31	Ճատագայթ. Ռենտգեն	258	265	280	244	276	289	295	434	
32	Մանկաբուժական	283	324	325	358	368	353	368	367	

Աղյուսակ 76. Մահճակալի տարեկան միջին զբաղվածությունն ըստ բաժանմունքների, ՀՀ, 2010-2017 (շարունակություն)

N	Բաժանմունք	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Դիագրամ
33	Մաշկավեներակ. Մեծահասակ	309	342	349	296	292	333	315	264	
34	միկրովիրաբուժական	119	127	207	132	177	161	157	150	
35	Ներզատաբան. Մեծահասակ	262	283	302	336	300	354	317	399	
36	Նյարդաբանակ. Մանկական	280	201	251	212	225	224	243	233	
37	Նյարդաբանակ. Մեծահասակ	266	256	295	306	338	309	299	294	
38	Նյարդավիրաբ. Մանկական	282	313	260	261	286	291	292	292	
39	Նյարդավիրաբ. Մեծահասակ	209	235	234	217	171	149	189	201	
40	Ոսկրածուծի փոխպատվաստում	-	-	-	-	-	-	-	16	
41	Ուռուղիական մանկական	347	375	264	287	379	409	406	419	
42	Ուռուղիական մեծահասակ	218	228	231	231	243	237	210	247	
43	Ուռուցքաբան. Մանկական	159	215	110	110	102	95	128	96	
44	Ուռուցքաբան. Մեծահասակ	235	229	238	212	211	246	271	279	
45	պլաստիկ վիրաբուժ.	98	100	49	36	74	50	144	74	
46	Պրոկտոլոգիական	144	143	181	192	214	186	191	191	
47	ռեպրոդուկտոլոգիա	-	7	-	-	-	-	-	-	
48	Ռեւմատոլոգիական մեծահասակ	135	120	106	125	140	141	156	129	
49	սուր թունավորման	37	51	57	44	45	56	68	57	
50	Ստոմատոլոգ. Մանկական	194	357	347	395	359	305	337	295	
51	Ստոմատոլոգ. Մեծահասակ	164	165	237	232	205	167	143	204	
52	Սրտաբանական	273	281	356	402	342	316	286	306	
53	Սրտային վիրաբուժ.	250	269	275	260	231	188	147	171	
54	Վերականգնող. Մանկական	310	257	199	203	126	117	112	110	
55	Վերականգնող. Մեծահասակ	245	233	180	189	162	164	169	172	
56	վերականգնողական մանկական	245	279	276	296	330	292	281	287	
57	վերականգնողական Մեծահասակ	295	279	298	281	243	174	215	201	
58	Վիժու մների կատար.	27	30	28	31	33	47	95	94	
59	Վիրաբուժակ. Մանկական	204	201	214	217	224	256	237	287	
60	Վիրաբուժակ. Մեծահասակ	165	164	180	176	171	165	174	165	
61	Վնասվածքաբ. Մանկական	171	226	251	154	267	246	227	194	
62	Վնասվածքաբ. Մեծահասակ	207	218	184	167	189	179	175	190	
63	Տուբերկուլ. Մանկ.	262	212	325	329	218	125	114	130	
64	Տուբերկուլ. Մեծահասակ	280	258	259	237	193	195	180	145	
65	ցերեկային ստացիոնար	369	610	591	546	714	649	678	662	
66	Փսիխոսոմատիկ	211	223	231	207	235	252	234	218	
67	Քիթ-կոկորդ-ականջ մանկական	328	436	459	324	318	313	301	365	
68	Քիթ-կոկորդ-ականջ մեծահասակ	162	173	210	190	192	162	152	165	
69	Օրթոպեդիկ մանկական	141	168	163	172	191	155	129	93	
70	Օրթոպեդիկ մեծահասակ	353	398	452	344	400	356	337	370	
71	Ֆիզիոթերապևտիկ	5	10	10	12	15	14	20	3	
	ԸՆդամներ	223	234	245	244	255	247	250	250	

Կարիք կա մասնագիտական քննարկման առարկա դարձնել այդ փաստը, որ 2017-ին Հայաստանում փակվել է մեծահասակների թարախային վիրաբուժական միակ

բաժանմունքը, որը գտնվում էր «Լեբեն» ՄՊԸ կազմում: Այդ բաժանմունքում մահճակալի տարեկան զբաղվածությունը 2016-ին կազմել է 227 օր, որը քիչ է զիջում 2017 թ. մահճակալի տարեկան միջին զբաղվածությանը:

Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակի դինամիկան Հայաստանում

Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակի ցուցանիշը բաժանմունքներում 2017-ին տրված է Գծապատկեր 79-ում:

Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը ցուցանիշի շատ մեծ արժեքի տեսակետից բաժանմունքներում առանձնում են.

- Հոգեբուժական մեծահասակների՝ 345.7 օր բաժանմունքը,
- Ցերեկային ստացիոնար՝ 156.8 օր բաժանմունքը:

Եթե առաջին դեպքում ցուցանիշի շատ մեծ արժեքի մեկնաբանությունը պարզ է, ապա ցերեկային ստացիոնարի դեպքում, ինչպես արդեն նշվել է նախորդ բաժիններում ևս անհրաժեշտ է հավելյալ ուսումնասիրություն:

Չորս տիպի բաժանմունքներ կազմում են, հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը ցուցանիշի տեսակետից, մեծ ցրվածք ունեցող խումբ: Դրանք են.


- Հոգեբուժական՝ մանկական՝ 42.3
- Ճառագայթային ռենտգենոլոգիայի՝ 33.3
- Տուբերկուլյոզ՝ մեծահասակների՝ 28.1,
- Վերականգնողական՝ մանկական՝ 22,7:

Այդ բաժանմունքներին հետևում են աստիճանաբար և փոքր քայլով նվազող ցուցանիշների մեծ խումբը:

Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակը ցուցանիշի փոփոխությունը տարբեր տիպի բաժանմունքներում 2010-2017 թթ. ընթացքում ներկայացված է Աղյուսակ 77 և Աղյուսակ 78-ում:

Նշենք, որ Աղյուսակ 77-ում ընդամենը ցուցանիշը հաշվարկված է ցերեկային ստացիոնար բաժանմունքի տվյալների հաշվառմամբ: Այդ պատճառով այն նշանակալիորեն տարբերվում է մյուս աղյուսակի վերջին տողում ներկայացված տվյալներից, որոնք հաշվարկված են առանց ցերեկային ստացիոնար բաժանմունքի:

Գծապատկեր 79. Հիվանդանոցում մնալու օերի միջին քանակը, 2017 (ընդամենը ցուցանիշը հաշվարկված է նաև ցերեկային ստացիոնար բաժանմունքի հաշվառմամբ)



Աղյուսակ 77 Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակն ըստ բաժանմունքների. ՀՀ 2010-2017

N	Բաժանմունք	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Դիագրամ
1	Ալերգոլոգիական մանկական	8.7	6.5	6.8	7.2	7.2	6.5	6.7	6.5	
2	Ալերգոլոգիական մեծահասակ	4.4	4.9	4.7	3.9	4.6	3.6	4.0	3.8	
3	Ակնաբուժական մանկական	2.3	2.6	4.2	1.3	2.4	2.0	2.0	2.5	
4	Ակնաբուժական մեծահասակ	4.2	4.2	3.7	2.8	2.3	2.4	2.7	2.7	
5	Աղեստամոքսային մանկական	10.5	9.1	7.8	7.9	8.6	8.4	7.8	7.6	
6	Աղեստամոքսային մեծահասակ	7.1	7.0	6.3	7.5	6.5	7.0	7.2	7.7	
7	Այրվածքային	19.0	16.6	14.1	15.1	15.4	16.2	16.3	17.0	
8	Անհետսած գելի մանկական բուժօգնություն	-	-	-	-	-	-	7.6	7.2	
9	Անոթային վիրաբ.	8.0	8.2	6.5	8.5	8.9	8.4	8.4	8.9	
10	Առիթմոլոգիական	-	-	-	-	-	-	11.5	12.1	
11	Արյունաբան. Մանկական	14.8	15.2	14.8	14.3	10.5	15.3	16.2	15.8	
12	Արյունաբան. Մեծահասակ	9.2	10.5	8.9	9.4	8.2	10.9	10.8	12.2	
13	Գինեկոլոգիական Մանկական	10.9	11.8	13.1	12.8	12.1	-	9.2	9.4	
14	Գինեկոլոգիական Մեծահասակ	5.0	5.1	5.1	5.0	4.8	4.5	4.4	4.3	
15	Երիկամաբան. Մանկական	15.6	17.7	18.6	24.3	23.8	25.6	17.9	16.7	
16	Երիկամաբան. Մեծահասակ	11.0	10.9	11.1	11.6	11.1	11.1	10.9	11.1	
17	Ընդհանուր	3.7	4.0	3.5	3.3	4.9	4.9	5.9	7.4	
18	Թարախ. Վիրաբ. Մեծահասակ	28.3	21.4	27.9	23.6	22.9	18.8	21.5	-	
19	Թերապևտիկ	7.8	7.6	7.6	7.4	7.5	7.2	7.1	7.2	
20	Թմբաբանական	14.7	16.2	14.8	14.9	13.7	12.9	15.8	12.0	
21	Թոքաբանական մանկական	8.6	7.2	6.7	6.7	6.8	6.1	5.8	6.1	
22	Թոքաբանական մեծահասակ	7.6	8.4	8.4	8.3	8.3	8.2	7.7	7.9	
23	Ինֆեկցիոն մանկական	8.2	7.4	6.7	6.8	6.4	6.6	6.3	6.1	
24	Ինֆեկցիոն մեծահասակ	8.7	8.4	7.4	7.5	7.3	6.9	6.9	6.8	
25	Կրծք. Վիրաբուժ. Մանկական	6.4	6.4	7.0	8.5	7.7	7.8	8.0	8.0	
26	Կրծք. Վիրաբուժ. Մեծահասակ	14.0	16.3	10.7	12.0	11.0	7.6	9.6	9.5	
27	Հղիների ե. ծննդ.	4.2	3.9	4.1	4.1	4.0	4.1	4.0	4.0	
28	Հղիության պատրուկ.	7.0	7.7	6.5	5.6	5.7	5.7	5.6	5.5	
29	Հոգեբուժակ. Մանկական	-	-	144.7	71.8	58.4	112.4	41.5	42.3	
30	Հոգեբուժակ. Մեծահասակ	229.8	292.5	203.2	294.2	335.2	347.9	321.6	345.7	
31	Ճառագայթ. Ռենտգեն	27.4	30.0	28.8	35.4	32.7	33.6	35.5	33.3	
32	Մանկաբուժական	7.0	6.9	6.7	6.8	6.7	6.6	6.3	6.5	

Աղյուսակ 78. Հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակն ըստ բաժանմունքների. ՀՀ 2010-2017

N	Բաժանմունք	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Դիագրամ
33	Մաշկավեներակ. Մեծահասակ	7.2	6.5	5.7	7.9	8.8	9.8	9.5	8.9	
34	միկրովիրաբուժական	7.7	10.1	13.0	9.4	7.7	8.4	8.4	9.7	
35	Ներզատաբան. Մեծահասակ	7.0	7.1	7.0	6.9	7.0	7.9	6.7	6.7	
36	Նյարդաբանակ. Մանկական	8.5	7.4	8.9	9.7	9.2	10.2	10.2	9.6	
37	Նյարդաբանակ. Մեծահասակ	9.1	8.4	8.3	8.6	8.3	8.0	7.8	7.5	
38	Նյարդավիրաբ. Մանկական	9.8	8.3	7.9	8.3	8.3	8.2	8.2	8.3	
39	Նյարդավիրաբ. Մեծահասակ	14.2	15.3	14.4	15.7	13.8	12.9	12.5	12.9	
40	Ոսկրածուծի փոխպատվաստում	-	-	-	-	-	-	-	14.3	
41	Ուռուցիկական մանկական	8.8	8.3	7.1	7.7	8.0	8.4	8.5	8.5	
42	Ուռուցիկական մեծահասակ	6.3	6.4	6.3	7.2	6.3	7.1	6.9	7.0	
43	Ուռուցքաբան. Մանկական	19.4	16.1	20.1	17.6	21.6	17.1	18.5	16.9	
44	Ուռուցքաբան. Մեծահասակ	17.2	18.9	19.5	20.8	21.0	17.0	17.9	17.6	
45	պլաստիկ վիրաբուժ.	4.1	4.5	2.3	3.3	5.9	4.0	4.9	3.4	
46	Պրոկտոլոգիական	8.4	8.1	9.1	9.6	9.1	8.4	8.3	7.8	
47	ռեպրոդուկտոլոգիա	-	8.5	-	-	-	-	-	-	
48	Ռեմատոլոգիական մեծահասակ	8.2	8.3	7.7	7.3	7.9	8.2	8.6	8.8	
49	տուր թունավորման	1.5	1.8	1.6	1.5	1.3	1.5	1.7	1.5	
50	Ստոմատոլոգ. Մանկական	3.9	5.2	5.7	5.0	4.5	4.6	4.2	4.0	
51	Ստոմատոլոգ. Մեծահասակ	7.4	7.2	6.8	8.2	7.7	7.2	6.1	5.8	
52	Սրտաբանական	6.8	6.4	6.5	6.8	6.2	6.3	6.0	6.8	
53	Սրտային վիրաբուժ.	11.3	11.0	9.9	10.2	8.7	7.4	8.8	9.4	
54	Վերականգնող. Մանկական	24.4	23.8	23.5	23.1	21.8	20.3	22.4	22.7	
55	Վերականգնող. Մեծահասակ	19.2	17.9	19.5	19.3	18.4	18.1	16.6	14.1	
56	վերակենդանացման մանկական	25.0	17.7	17.2	14.3	13.4	12.3	13.1	14.3	
57	վերակենդանացման Մեծահասակ	4.9	4.9	5.6	6.0	4.8	4.3	24.1	12.1	
58	Վիժու մների կատար.	1.2	1.2	1.4	1.2	1.1	1.1	1.2	1.2	
59	Վիրաբուժակ. Մանկական	6.7	6.0	6.3	6.4	5.7	6.1	6.1	6.4	
60	Վիրաբուժակ. Մեծահասակ	7.5	7.1	7.1	7.0	6.8	6.8	7.4	6.9	
61	Վնասվածքաբ. Մանկական	11.7	10.6	10.1	6.7	11.4	12.0	11.5	9.2	
62	Վնասվածքաբ. Մեծահասակ	9.1	9.4	9.1	9.6	8.9	9.1	8.9	8.6	
63	Տուբերկուլ. Մանկ.	14.6	12.1	12.7	11.0	8.3	8.9	10.4	13.3	
64	Տուբերկուլ. Մեծահասակ	33.6	32.9	31.4	29.2	24.4	26.9	31.9	28.1	
65	ցերեկային ստացիոնար	63.7	160.8	157.8	154.7	153.3	143.7	133.3	156.8	
66	Փսիխոսոմատիկ	11.7	10.6	10.4	10.1	8.7	9.4	8.9	10.1	
67	Քիթ-կոկորդ-ականջ մանկական	4.3	5.1	5.1	5.1	5.6	5.9	6.1	7.0	
68	Քիթ-կոկորդ-ականջ մեծահասակ	5.8	5.4	6.0	6.7	6.4	6.7	6.9	7.0	
69	Օրթոպեդիկ մանկական	13.2	14.3	14.3	15.2	13.9	12.3	10.9	8.9	
70	Օրթոպեդիկ մեծահասակ	5.5	5.2	5.1	5.2	6.6	8.1	7.5	8.3	
71	ֆիզիոթերապևտիկ	7.5	13.2	10.7	10.9	10.3	10.8	6.7	5.1	
	Ընդամենը	12.9	15.1	22.0	16.1	16.1	18.1	21.3	15.9	

Գծապատկեր 80-ում տրված է Հայաստանում հիվանդանոցային բաժանմունքներում մահճակալի տարեկան զբաղվածության և հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակի միասնական պատկերը 2017 թ. :

Նորմայից շատ մեծ վիճակագրական շեղումով առանձնանում են բաժանմունքների հետևյալ խմբերը.

Առաջին խումբը

1. մանկական երիկամաքանական (մահճակալների տարեկան զբաղվածությունը 1091 օր⁹),
2. առիթմոլոգիական բաժանմունքը (մահճակալների տարեկան զբաղվածությունը 830 օր),
3. անհետաձգելի մանկական բուժօգնություն (696 օր)
4. ցերեկային ստացիոնարը (662 օր): Ընդ որում ցերեկային ստացիոնարում նորմայից շատ բարձր է նաև հիվանդանոցում մնալու միջին տևողությունը (156.8 օր):


Երկրորդ խումբը

Հիվանդանոցում մնալու միջին տևողության ցուցանիշով ընդհանուր նորմայից շատ բարձր է.

5. մեծահասակների հոգեբուժական հիվանդանոցային բաժանմունքները (345.7 օր):
6. մանկական հոգեբուժական բաժանմունքներ (42.3 օր),
7. ճառագայթային ռենտգենոլոգիական բաժանմունքներ (33.3 օր):

Հարկ է նշել, որ գծապատկերը ցույց է տալիս, որ հիվանդանոցում մնալու **միջին տևողությունը** նշված բաժանմունքների մեծ ցուցանիշների պատճառով նույնպես շեղված է դեպի վեր (47.7 օր):

Գծապատկեր 80. Նորմայից բարձր մահճակալի տարեկան զբաղվածությամբ և /կամ հիվանդանոցում մնալու օրերի միջին քանակով բաժանմունքները, 2017



Դիտարկված ցուցանիշների տեսակետից նորմայից վիճակագրական մեծ շեղումներ ունեցող բաժանմունքները գծապատկերից դուրս բերելու դեպքում (երբ մահճակալների

⁹Ինչը նշանակում է, որ այստեղ հիվանդները մնում են մոտ երեք տարի և հրանց հիվանդանոցում մնալու տևողությունը տարեց տարի գումարվում է:

տարեկան զբաղվածությունը սահմանափակվում է 450-ով, իսկ հիվանդանոցում մնալու տևողությունը՝ 30 օրով), բաժանմունքների քարտեզագրումը ստանում է Գծապատկեր 81-ի տեսքը: Գծապատկերում խոշորացված մասշտաբով ներկայացված են նախորդ գծապատկերի էլիպսում ընդգրկված բաժանմունքները:

Գծապատկերի ներքևում տրված է գծապատկերի կետերին համապատասխանող բաժանմունքների անունները:

Գծապատկեր 81. Բաժանմունքների բաշխումն ըստ մահճակալի տարեկան զբաղվածության և հիվանդանոցում մնալու օրերի միջին ցուցանիշի, 2017



- | | | |
|-------------------------------|------------------------------|---------------------------|
| 1 Ալերգոլոգիական մանկական | 24 Ինֆեկցիոն մեծահասակ | 47 Ռեւմատ. մեծահասակ |
| 2 Ալերգոլոգիական մեծահասակ | 25 Կրծք. Վիրաբուժ. Մանկական | 48 սուր թունավորման |
| 3 Ակնաբուժական մանկական | 26 Կրծք. Վիրաբուժ. Մեծահասակ | 49 Ստոմատոլոգ. Մանկական |
| 4 Ակնաբուժական մեծահասակ | 27 Հղիների և ծննդ. | 50 Ստոմատոլոգ. Մեծահասակ |
| 5 Աղետատմոքսային մանկական | 28 Հղիության պայթույղ. | 51 Սրտաբանական |
| 6 Աղետատմոքսային մեծահասակ | 29 Հոգեբուժակ. Մանկական | 52 Սրտային վիրաբուժ. |
| 7 Այրվածքային | 30 Հոգեբուժակ. Մեծահասակ | 53 Վերականգնող. Մանկական |
| 8 Անհետ. Մանկ. բուժօգնություն | 31 Ճառագայթ. Ռենտգեն | 54 Վերականգնող. Մեծահասակ |
| 9 Անոթային վիրաբ. | 32 Մանկաբուժական | 55 Վերակենդ. մանկական |
| 10 Առիթմոլոգիական | 33 Մաշկավեներակ. Մեծահասակ | 56 Վերակենդ. Մեծահասակ |
| 11 Արյունաբան. Մանկական | 34 միկրովիրաբուժական | 57 Վիժումների կատար. |
| 12 Արյունաբան. Մեծահասակ | 35 Ներգատաբան. Մեծահասակ | 58 Վիրաբուժակ. Մանկական |
| 13 Գինեկոլոգիակ. Մանկական | 36 Նյարդաբանակ. Մանկական | 59 Վիրաբուժակ. Մեծահասակ |
| 14 Գինեկոլոգիակ. Մեծահասակ | 37 Նյարդաբանակ. Մեծահասակ | 60 Վնասվածքաբ. Մանկական |
| 15 Երիկամաբան. Մանկական | 38 Նյարդավիրաբ. Մանկական | 61 Վնասվածքաբ. Մեծահասակ |
| 16 Երիկամաբան. Մեծահասակ | 39 Նյարդավիրաբ. Մեծահասակ | 62 Տուբերկուլ. Մանկ. |
| 17 Ընդամենը | 40 Ոսկրաձուծի փոխպատ. | 63 Տուբերկուլ. Մեծահասակ |
| 18 Ընդհանուր | 41 Ուռուցիկական մանկական | 64 ցերեկային ստացիոնար |
| 19 Թերապևտիկ | 42 Ուռուցիկական մեծահասակ | 65 Փսիխոսոմատիկ |
| 20 Թմրաբանական | 43 Ուռուցքաբան. Մանկական | 66 Քիթ-կոկորդ-ականջ մանկ. |
| 21 Թոքաբանական մանկական | 44 Ուռուցքաբան. Մեծահասակ | 67 Քիթ-կոկորդ-ականջ մեծ. |
| 22 Թոքաբանական մեծահասակ | 45 պլաստիկ վիրաբուժ. | 68 Օրթոպեդիկ մանկական |
| 23 Ինֆեկցիոն մանկական | 46 Պրոկտոլոգիական | 69 Օրթոպեդիկ մեծահասակ |
| | | 70 ֆիզիոթերապևտիկ |

14 . Հիվանդանոցային մահեր

Այս գլխում ներկայացված են Հայաստանում և մարզերում հիվանդանոցային մահերը 2010-2017թթ.: Գլխում ներառված են.


- Հիվանդանոցային մահերի բացարձակ քանակը,
- Հիվանդանոցային մահերի բաշխումն ըստ տարիքային խմբերի՝ 0-14, 15-17 և 18 և ավելի բարձր,
- Հիվանդանոցային և բոլոր մահերի հարաբերակցությունը,
- Հիվանդանոցային մահերի բացարձակ քանակն ըստ ՀՄԴ-10 խմբագրության՝ բացարձակ արժեքներով,
- Հիվանդանոցային մահերի բացարձակ քանակն ըստ ՀՄԴ-10 խմբագրության՝ որպես տոկոս բոլոր հիվանդանոցային մահերից,
- Հիվանդանոցային մահաբերությունը մարզերում ըստ ՀՄԴ-10-ի,
- Հիվանդանոցային մահաբերությունը Հայաստանում ըստ ՀՄԴ-10-ի,
- Առավել մեծաքանակ և առավել բարձր մահաբերության հիվանդությունների համեմատական նկարագիրը մարզերում:

Հիվանդանոցային մահերի քանակը, 2010-2017

2010-2016 թթ. հիվանդանոցային մահերի քանակը չափահաս բնակչության (18 և ավելի տարեկան) շրջանում աճել է 3903-ից մինչև 5130, սակայն 2017-ին նվազել է՝ հասնելով մոտավորապես 2015 թ. մակարդակին (Գծապատկեր 82): Մյուս կողմից 2010-2017 թթ. մոնոտոն նվազել է 0-14 տարեկան երեխաների հիվանդանոցային մահերի թիվը մոտ 41%-ով՝ 559-ից մինչև 332: Այդ երկու միտումներն արտապատկերվել են նաև Գծապատկեր 82-Բ-ում՝ 18 և ավելի տարիքի բնակչության հիվանդանոցային մահերի հարաբերական քանակը մոնոտոն աճել է, իսկ 0-14 տարեկաններինը՝ նվազել:

15-17 տարեկանների մահերի բացարձակ քանակը շատ փոքր է (Աղյուսակ 80) և դիտարկվող տարիներին գտնվել է 7-15 մարդ միջակայքում:

Գծապատկեր 82. Հիվանդանոցային մահերի բացարձակ քանակը, 2010-2017 և Բ. Հիվանդանոցային մահերի բաշխումը տարիքային խմբերում



Աղյուսակ 80. Հիվանդանոցային մահերը 2010-2017,


Տարի	18<	0-14	15-17	Ընդ	18<	0-14	15-17	Ընդ
2010	3,903	559	15	4,477	87.2%	12.5%	0.3%	100.0%
2011	4,146	535	10	4,691	88.4%	11.4%	0.2%	100.0%
2012	4,504	460	7	4,971	90.6%	9.3%	0.1%	100.0%
2013	4,565	442	7	5,014	91.0%	8.8%	0.1%	100.0%
2014	4,802	431	11	5,244	91.6%	8.2%	0.2%	100.0%
2015	4,975	400	7	5,382	92.4%	7.4%	0.1%	100.0%
2016	5,130	369	10	5,509	93.1%	6.7%	0.2%	100.0%
2017	4,920	332	7	5,259	93.6%	6.3%	0.1%	100.0%

Հայաստանում մոտավորապես յուրաքանչյուր հինգերորդ մահը տեղի է ունենում հիվանդանոցում: Հիվանդանոցային մահերը Հայաստանում կազմում են 19.4%: Կարևոր է նշել, որ 2015-2017 թթ. ընթացքում հիվանդանոցային մահերի տոկոսը՝ Հայաստանում գրացված բոլոր մահերի թվից, գործնականում չի փոխվել և 2017-ին կազմել է 19.4% (Գծապատկեր 83):

Հիվանդանոցային և բոլոր մահերի հարաբերակցությունը հանրապետական միջինից բարձր է միայն Երևանում (Գծապատկեր 83 և Աղյուսակ 81): 2017-ին այն Երևանում կազմել է 44%: Մնացած բոլոր մարզերում այդ հարաբերակցությունը փոքր է (Շիրակ, Լոռի, Կոտայք) կամ շատ փոքր (Արագածոտն, Արարատ, Գեղարքունիք, Վայոց Ձոր, Տավուշ) հանրապետական միջինից: Բաշխումը հուշում է, որ հիվանդանոցային մահերի հարաբերական քանակն ավելի բարձր է այն մարզերում, որտեղ կան (Հայաստանի մասշտաբով) մեծ քաղաքներ. Շիրակ՝ Գյումրի քաղաք, Լոռի՝ Վանաձոր քաղաք, Կոտայք՝ Աբովյան, Հրազդան և Էլի վեց քաղաք, և համեմատաբար ավելի փոքր է այն մարզերում, որտեղ քաղաքները փոքր են:

Հիվանդանոցային մահերի հարաբերական քանակը 2015-2017 թթ. մարզերում մնացել է գրեթե նույն մակարդակի վրա: Բացառություն է կազմում Արմավիրը, որում առկա է նվազման միտում՝ 2015-ին այստեղ հիվանդանոցային մահերի հարաբերական քանակը կազմել էր 9%, 2016-ին՝ 8%, իսկ 2017-ին՝ 7%:

Գծապատկեր 83. Հիվանդանոցային մահերը՝ տոկոս բոլոր մահերից



Աղյուսակ 81. Հիվանդանոցային մահերը և ընդհանուր մահերը

Բոլոր մահերը	Հիվանդանոցային մահերը			Հիվանդանոցային տոկոս բոլոր մահերից					
	2015	2016	2017	2015	2016	2017	2015	2016	2017
Մարդ	2015	2016	2017	2015	2016	2017	2015	2016	2017
ԱԳ	1,186	1,162	1,196	44	37	54	3.7%	3.2%	4.5%
ԱՐ	2,238	2,413	2,242	133	111	83	5.9%	4.6%	3.7%
ԱՄ	2,309	2,337	2,354	202	187	160	8.7%	8.0%	6.8%
ԳԵ	1,839	1,926	1,784	80	87	61	4.4%	4.5%	3.4%
ԵՐ	9,264	9,274	8,882	3,944	4,059	3,904	42.6%	43.8%	44.0%
ԼՈ	2,832	2,875	2,709	282	269	275	10.0%	9.4%	10.2%
ԿՈ	2,350	2,341	2,336	179	180	201	7.6%	7.7%	8.6%
ՇԻ	2,613	2,615	2,512	361	399	361	13.8%	15.3%	14.4%
ՍՅ	1,284	1,367	1,285	90	126	98	7.0%	9.2%	7.6%
ՎՁ	543	513	531	11	10	13	2.0%	1.9%	2.4%
ՏՍ	1,420	1,403	1,326	56	44	49	3.9%	3.1%	3.7%
ՀՀ	27,878	28,226	27,157	5,382	5,509	5,259	19.3%	19.5%	19.4%

Աղյուսակ 82-ում տրված է մարզերում հիվանդանոցային մահերի բացարձակ քանակը 18 և ավելի տարիքային խմբում : Տվյալները ցույց են տալիս, որ այդ տարիքային խմբում 2010-2015թթ. կամ 2016 թթ. ընթացքում նկատվել է աճ՝ Արմավիրում, Գեղարքունիքում, Երևանում, Շիրակում, Սյունիքում, Վայոց Ձորում: Սակայն 2017 թ. բոլոր այդ մարզերում տեղի է ունեցել հիվանդանոցային մահերի բացարձակ քանակի նվազում:

Ինչ վերաբերվում է 0-14 տարեկանների հիվանդանոցային մահերի բացարձակ քանակին, ապա բոլոր մարզերում 2010-2017 թթ. ընթացքում գրանցվել է ցուցանիշի նվազման միտում (Աղյուսակ 82):

Աղյուսակ 81. Հիվանդանոցային մահերի բացարձակ քանակը մարզերում, 18 և ավելի տարեկան բնակչություն, 2010-2017

Մարզ	Տարիք	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Դիագրամ
ԱԳ	18≤	47	55	38	43	40	44	37	54	
ԱՐ	18≤	134	146	136	142	174	131	106	83	
ԱՄ	18≤	147	157	171	183	192	200	184	158	
ԳԵ	18≤	51	66	68	63	62	72	84	58	
ԵՐ	18≤	2657	2887	3223	3247	3394	3604	3743	3602	
ԼՈ	18≤	251	246	251	258	300	269	259	269	
ԿՈ	18≤	205	175	206	182	173	178	176	201	
ՇԻ	18≤	278	270	258	311	325	327	371	342	
ՍՅ	18≤	85	87	108	88	98	85	119	95	
ՎՁ	18≤	5	8	8	8	8	11	10	11	
ՏԱ	18≤	43	49	37	40	36	54	41	47	

Աղյուսակ 82. Հիվանդանոցային մահերի բացարձակ քանակը մարզերում, 0-14 տարեկան բնակչություն, 2010-2017

Մարզ	Տարիք	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Դիագրամ
ԱԳ	0-14	2	3	2	2	1	0	0	0	
ԱՐ	0-14	10	7	4	9	4	2	3	0	
ԱՄ	0-14	10	11	6	1	3	2	3	2	
ԳԵ	0-14	21	18	5	12	3	8	3	3	
ԵՐ	0-14	385	375	354	332	353	334	310	295	
ԼՈ	0-14	30	20	16	11	10	13	9	6	
ԿՈ	0-14	12	8	9	6	6	1	4	0	
ՇԻ	0-14	64	74	50	50	38	34	28	19	
ՍՅ	0-14	14	14	9	11	9	4	7	3	
ՎՁ	0-14	5	2	0	3	2	0	0	2	
ՏԱ	0-14	6	3	5	5	2	2	2	2	

Հիվանդանոցային մահերի բացարձակ քանակը և դրանց բաշխումները տարիքային խմբերում 2010-2017 թ. տրված են Հավելված 5. Հիվանդանոցային մահերի բացարձակ քանակը և բաշխումը ըստ տարիքային խմբերի մարզերում, 2010-2017-ում:

Հիվանդանոցային մահերն ըստ հիվանդությունների, 2010-2017

Ըստ հիվանդությունների հիվանդանոցային մահերի բացարձակ քանակները բոլոր տարի-քային խմբերում տրված են Հավելված 6. Հիվանդանոցային մահերը և մահաբերությունն ըստ հիվանդությունների: Աղյուսակում ներկայացված են այն հիվանդությունները, որոնցից մահերի քանակը 2017 թ. գերազանցել է 100-ը:

Մահերի առավել մեծ թվաքանակով պատճառ դարձած հիվանդությունների մի մասի տվյալները ներկայացված են նաև Գծապատկեր 84, Գծապատկեր 85, Գծապատկեր 86, Գծապատկեր 87 և Գծապատկեր 88-ում:

Արյան շրջանառության հիվանդություններից I00-I99 մահերի բացարձակ քանակը 2010-2016 թթ. աճել է 2337-ից մինչև 2972 կամ՝ 27%-ով: Սակայն 2017 թ. նվազել է մինչև 2904:


Ընդ որում **Ուղեղի անոթային հիվանդություններից I60-I69** մահերը մոնոտոն աճել են 2010 թ.՝ 1104-ից մինչև 2017 թ.՝ 1278 կամ՝ 15.7%-ով:

Սրտամկանի սուր ինֆարկտից I21-I23 մահերի քանակը 2011-2016 թթ. ունեցել է աճի միտում, սակայն 2017 թ. դրանց քանակը նվազել է:


Ուղեղի ինֆարկտից I63 մահերի քանակը սկսել է կտրուկ աճել 2016 և 2017 թթ.: Եթե 2015 թ. այդ մահերի քանակը 448 էր, ապա 2017 թ.՝ 617: Աճը կազմել է 37.7%:

2015-2017 թթ. աճել է նաև **Ներուղեղային և ոչ վնասվածքային ներզանգային այլ արնազեղումների I61-I62** մահերի քանակը, սակայն նվազել է **Ինսուլտ՝ չճշտված որպես արյունազեղում կամ ինֆարկտ I64** մահերի քանակը նվազել է՝ 2015 թ. 298-ից, մինչև 2017 թ.՝ 138 կամ՝ 64%-ով:

Գծապատկեր 84 Արյան շրջանառության որոշ հիվանդություններից (I00-I99, I60-I69) հիվանդանոցային մահերի բացարձակ քանակը, 2010-2017




Գծապատկեր 85 Արյան շրջանառության որոշ հիվանդություններից (I21-23, I63, I61-62, I64) հիվանդանոցային մահերի բացարձակ քանակը, 2010-2017



Նորագոյացություններից (C00-D48) մահերի քանակը, չնայած 2014-2015 թթ. նվազմանը, այնուամենայնիվ 2017-ին՝ 2010-ի համեմատ աճել է 289-ից մինչև 474 կամ՝ 64%-ով: Իսկ Չարորակ նորագոյացություններով (ներառյալ՝ ավշային և արյունաստեղծ հյուսվածքների) C00-C97 մահերի քանակը, նույն ժամանակահատվածում աճել է 263-ից մինչև 442 կամ՝ 68%-ով:


Գծապատկեր 86. Նորագոյացություններից (C00-D48, C00-C97) հիվանդանոցային մահերի բացարձակ քանակը, 2010-2017



Ներգատական համակարգի E00-E90 հիվանդություններից, ինչպես նաև Ինսուլին անկախ շաքարային դիաբետից E11 մահերի քանակը 2012-2016 թթ. նվազման միտումներից հետո, 2017-ին կտրուկ աճել է: Եթե 2016-ին E00-E90 հիվանդություններից մահերը կազմել են 101, ապա 2017-ին՝ 140, աճը՝ 39%:

2012-2017 թթ. ժամանակահատվածում մոնոտոն նվազման միտում է ունեցել **Պերինատալ շրջանում առաջացող առանձին վիճակներից P00-P99** մահերի քանակը՝ 2012-ին 295-ից, մինչև 2017-ին՝ 201, նվազումը կազմել է 32%:

Գծապատկեր 87 Ներգատական (E00-E90, E11), Պերինատալ (P00-P96) հիվանդանոցային մահերի բացարձակ քանակը, 2010-2017




Դինամիկ փոփոխություններ է կրել մահերի քանակը **Շնչառական օրգանների հիվանդություններից J00-J99**, այն կտրուկ աճել է 2011-ին՝ 2010-ի համեմատ 75%-ով, ունեցել է դանդաղ աճի միտում՝ 2012-2014-ին, հետո՝ 2015-ին նորից ունեցել է կտրուկ աճ՝ 2014-ի համեմատ 37%-ով: 2016-ին և 2017-ին այդ մահերի քանակը կտրուկ նվազել է և 2017-ին դարձել է 244, որը ցածր է 2015-ի արժեքից՝ 58%-ով:

Մահերի քանակը՝ **Մարսողական հիվանդություններից**, ինչպես նաև **Վնասվածքներից, թունավորումներից և արտաքին պատճառների ներգործության որոշ հետևանքներից S00-T98**, ընդհանուր առմամբ ունեցել են աճի միտումներ:

Իսկ **Վարակիչ և մակարուծական որոշ հիվանդություններից** մահերի քանակն ունեցել է ընդհանուր առմամբ նվազման միտում:

Գծապատկեր 88. Մարտոդական (K00-K93), Շնչառական օրգանների (J00-J99), Վնասվածքների, թունավորումների (S00-T99), Վարակիչ և մակաբուծական (A00-B99) հիվանդանոցային մահերի բացարձակ քանակը, 2010-2017



Աղյուսակ 83. 18 և ավելի տարիքի անձանց շրանում անձանց հիվանդանոցային մահերի տոկոսը բոլոր մահերից

ՀՄԴ-10 Հիվանդություն	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
A00 -T98 Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%
I00 - I99 Արյան շրջանառության համակարգի հիվանդություններ	59.8%	57.2%	57.2%	57.4%	59.1%	57.5%	57.8%	58.9%
I60 - I69 ուղեղի անոթային հիվանդություններ	28.3%	27.5%	25.9%	24.6%	26.0%	24.5%	25.0%	25.9%
I21 - I23 սրտամկանի սուր ինֆարկտ	22.1%	17.9%	18.6%	19.8%	19.8%	19.1%	19.4%	19.4%
I63 ուղեղի ինֆարկտ	11.2%	10.8%	10.3%	9.9%	10.1%	9.0%	10.4%	12.5%
C00 - D48 Նորագոյացություններ	7.0%	6.1%	6.8%	7.3%	6.3%	6.1%	7.4%	9.5%
K00 - K93 Մարտոդական օրգանների հիվանդություններ	8.9%	8.8%	9.1%	9.3%	9.4%	7.6%	9.1%	9.0%
C00 - C97 դրանցից՝ չարորակ նորագոյացություններ (ներառյալ ավշային և արյունաստեղծ հյուսվածքների)	6.5%	5.5%	6.1%	6.5%	5.7%	5.7%	6.5%	8.9%
I61 - I62 ներուղեղային և ոչ վնասվածքային ներգանգային այլ արյունազեղումներ	11.1%	10.9%	10.1%	8.7%	8.3%	6.7%	7.8%	8.1%
S00 - T98 Վնասվածքներ, թունավորումներ և արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետևանքներ	6.3%	5.5%	5.5%	5.7%	5.0%	5.8%	5.6%	6.0%
J00 - J99 Շնչառական օրգանների հիվանդություններ	4.7%	8.7%	8.8%	8.2%	8.2%	11.4%	8.3%	4.5%
E00-E90 Ներզատական համակարգի հիվանդություններ, սնուցման և նյութափոխանակության խանգարումներ	3.9%	3.8%	3.0%	2.7%	2.6%	2.5%	2.0%	2.8%
R00 - R99 Կլինիկական և լաբորատոր հետազոտությունների ընթացքում բացահայտված և այլ խորագրերում չդասակարգված ախտանիշներ, հատկանիշներ և նորմալից շեղումներ	2.1%	3.3%	3.6%	2.8%	3.1%	3.3%	3.4%	2.8%

I64 ինսուլտ, չճշտված որպես արյունազեղում կամ ինֆարկտ	2.5%	3.0%	2.8%	3.6%	4.7%	6.0%	4.5%	2.8%
K70 - K76 լյարդի հիվանդություններ.	2.6%	2.5%	2.5%	2.8%	3.1%	2.3%	2.9%	2.6%
A00 -B99 այդ թվում՝ Վարակիչ և մակարածական որոշ հիվանդություններ	2.9%	2.5%	2.2%	2.0%	1.9%	1.5%	1.7%	2.5%
S02,12,22,32, 42,52,62,72, 82,92,T02,08, 10,12,14.2 դրանցից՝ կոտրվածքներ	1.0%	0.9%	1.0%	1.0%	1.0%	1.0%	0.8%	2.3%
E11 շաքարային դիաբետ ինսուլինաանկախ	2.8%	1.7%	2.0%	1.8%	1.6%	1.5%	1.3%	2.1%
K50 – K52, K55 – K59 ոչ ինֆեկցիոն էնտերիտ և կոլիտ, աղիների այլ հիվանդություններ	1.1%	0.9%	1.2%	1.2%	1.4%	1.1%	1.2%	1.9%
I25 սրտի քրոնիկ իշեմիկ հիվանդություն	2.1%	2.2%	2.3%	2.5%	2.2%	2.5%	2.0%	1.7%
N00 - N99 Միզասեռական համակարգի հիվանդություններ	1.7%	1.7%	1.3%	1.7%	1.7%	2.2%	1.9%	1.6%
K25 - K26 դրանցից՝ ստամոքսի և տասներկամատնյա աղու խոց	1.6%	1.6%	1.6%	1.6%	1.6%	1.4%	1.7%	1.5%
J12 - J18 թոքաբորբեր	2.2%	1.0%	0.8%	1.1%	1.3%	1.1%	1.6%	1.4%
I60 այդ թվում՝ ենթարախնտիղալ արյունազեղում	1.7%	1.3%	1.5%	1.2%	1.1%	1.3%	1.3%	1.3%
J44, J47 թոքերի քրոնիկական խցանող այլ հիվանդություններ, բրոնխոէկտատիկ հիվանդություն	0.4%	0.7%	0.8%	0.7%	0.5%	0.9%	0.9%	1.0%
A15 - A16, A19–մաս շնչառական օրգանների տուբերկուլյոզ	2.0%	1.5%	1.6%	1.2%	1.1%	1.0%	0.7%	1.0%
N00 – N19, N25 – N28 դրանցից՝ երիկամների գլոմերուլյար և տուբուլոինտերստիցիալ հիվանդություններ, երիկամային անբավարարություն, երիկամի և միզածորանի այլ հիվանդություններ	1.4%	1.2%	1.1%	1.5%	1.5%	1.9%	1.6%	0.9%
F00 - F99 Հոգեկան խանգարումներ, վարքի խանգարումներ	1.0%	0.9%	1.0%	0.6%	0.9%	0.7%	0.9%	0.9%
S06 գլխուղեղի վնասվածք	1.7%	1.0%	1.2%	1.1%	0.9%	1.2%	1.5%	0.8%
G00 - G99 Նյարդային համակարգի հիվանդություններ	0.6%	0.7%	0.6%	0.8%	1.0%	0.5%	0.7%	0.8%
I65 - I66, I67.0,1, 3-9 ուղեղային և նախաուղեղային զարկերակների խցանում և նեղացում (ուղեղի ինֆակտ չառաջացնող), ուղեղի անոթային այլ հիվանդություններ	1.0%	0.9%	0.7%	0.9%	1.0%	1.2%	0.6%	0.7%
K80 - K83 լեղապարկի և լեղուղիների հիվանդություններ	0.7%	0.8%	0.9%	0.7%	0.7%	0.7%	0.5%	0.6%
T36 – T65 թունավորումներ դեղամիջոցներով, դեղորայքով, կենսաբանական նյութերով և գերազանցապես ոչ բժշկական նշանակության նյութերով	1.3%	1.0%	0.9%	0.9%	0.7%	0.9%	0.7%	0.5%

Հիվանդանոցային մահաբերությունը Հայաստանում և մարզերում

Հիվանդանոցային մահաբերությունը Հայաստանում մարզերում ներկայացված է Աղյուսակ 84-ում :

Ընդհանուր առամբ հիվանդանոցային մահացությունը Հայաստանում 2010-2016թթ. ունեցել է աճի միտում: 2015 թ.՝ 1.54%-ից հասել է 1.70%-ի 2016թ. (Աղյուսակ 84): Սակայն 2017թ. այն նվազել է մինչև 1.64%:

2017 թ. Հայաստանի մարզերում, ներառյալ Երևանը, հիվանդանոցային մահաբերությունն ամենաբարձրն էր Շիրակում՝ 2.20%, որին հետևում էին Լոռին, Արմավիրը և Կոտայքը: Այս մարզերում 2017 թ. հիվանդանոցային մահաբերությունը ավելի բարձր էր, քան համահայաստանյան ցուցանիշը:

Հիվանդանոցային մահաբերության ամենացածր ցուցանիշը 2017 թ. գրանցվել է Գեղարքունիքում՝ 0.79%: Այդ մարզին, ըստ ցուցանիշի աճի հետևում են՝ Տավուշը, Արարատը, Վայոց Ձորը, Սյունիքը, Արագածոտնը և Երևանը: Ընդ որում՝ Երևանի հիվանդանոցային մահաբերությունը՝ 1.63%, շատ քիչ է զիջում համահայաստանյան ցուցանիշին:

Ակնհայտ է, որ հիվանդանոցային մահաբերությունը համեմատաբար ավելի ցածր է այն մարզերում, որտեղ հիվանդանոցային ենթակառուցվածքներն ավելի թույլ են զարգացած (մարդիկ ավելի քիչ են դիմում հիվանդանոց, հատկապես՝ մահամերձ և ծանր հիվանդների դեպքում) և համեմատաբար ավելի բարձր են այն մարզերում, որտեղ այդ ենթակառուցվածքներն ավելի լավ զարգացած են (ունեն մեծ քաղաքներ կամ քաղաքների մեծ քանակ):

Աղյուսակ 84. Հիվանդանոցային մահաբերությունը մարզերում, 18-ից բարձր անձինք

Մարզ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Դիազրամ (Max-Min)/Max
ՇԻ	1.72%	1.71%	1.57%	1.76%	1.74%	1.92%	2.21%	2.20%	29%
ԼՈ	1.87%	1.87%	1.89%	1.94%	2.06%	1.92%	1.85%	2.00%	10%
ԱՄ	2.09%	2.15%	2.08%	2.19%	2.15%	2.54%	2.15%	1.96%	23%
ԿՈ	1.73%	1.49%	1.80%	1.57%	1.43%	1.55%	1.54%	1.93%	26%
ՀՀ	1.54%	1.56%	1.56%	1.62%	1.57%	1.68%	1.70%	1.64%	9%
ԵՐ	1.55%	1.57%	1.57%	1.65%	1.57%	1.71%	1.73%	1.63%	11%
ԱԳ	1.09%	1.32%	0.88%	1.01%	0.92%	1.16%	0.98%	1.55%	43%
ՍՅ	1.35%	1.34%	1.49%	1.16%	1.23%	1.10%	1.56%	1.25%	29%
ՎՁ	0.36%	0.61%	0.64%	0.68%	0.62%	0.98%	0.89%	1.12%	68%
ԱՐ	1.47%	1.65%	1.50%	1.60%	1.75%	1.35%	1.19%	1.00%	43%
ՏԱ	0.98%	1.21%	0.87%	0.90%	0.70%	1.02%	0.76%	0.91%	42%
ԳԵ	0.65%	0.84%	0.88%	0.83%	0.76%	0.88%	1.05%	0.79%	38%

Բացառություն է Երևանը, որտեղ մահաբերությունն ավելի ցածր է, քան մեծ քաղաքներ ունեցող մարզերում: Հավանաբար դա պայմանավորված է նրանով, որ Երևանում հիվանդանոցային բուժումն ավելի որակյալ է և ծանր հիվանդին փրկելու հավանականությունն ավելի բարձր:

Հիվանդանոցային մահաբերությունը Հայաստանում ըստ հիվանդությունների

Հիվանդանոցային մահաբերությունը Հայաստանում 2010-2017 թթ. ընթացքում ըստ ՀՄԴ-10 խմբագրության ներկայացված են Աղյուսակ 85-ում: Աղյուսակի առաջին սյունում տրված են հիվանդությունների անունները և կոդերն ըստ ՀՄԴ-10-ի: Այդ սյան կայնությունը տրված է մասնակի՝ աղյուսակը դուրսնկալելի դարձնելու համար: Հիվանդությունների անուններն առանց հապավումների՝ ամբողջությամբ տրված են «Հավելված 8. Հիվանդությունների խմբերի անվանումները ՀՄԴ-10»:

Որպեսզի ընթերցողը հեշտությամբ կողմնորոշվի մեծաքանակ տվյալներում, դրանք ներկայացված են երեք աղյուսակներով:

Առաջինը՝ որպեսզի ընթերցողը գտնի իրեն հետաքրքրող հիվանդությունների խմբի տվյալները, կազմավորվել է Աղյուսակ 85-ը: Այստեղ տրված են բոլոր հիվանդությունների խմբերը, որոնցով ԱՏՎԱԿ-ն տվյալներ է հավաքում: Այդ աղյուսակում հիվանդությունները դասավորված են ըստ լատինատառ կոդի այբբենական կարգով: Առաջին տողում տրված է մահաբերությունն ըստ բոլոր հիվանդությունների, որը համընկնում է Աղյուսակ 86-ի «ՀՀ» տողի հետ:

«**2010-2017**» սյուններում տրված են տվյալ հիվանդությունների խմբում մահաբերությունը տոկոսներով:

«**Դիագրամ**» սյունում տրված է 2010-2017 թթ. ընթացքում տվյալ հիվանդությունների խմբից մահաբերության դինամիկայի պատկերը: Նշենք, որ դիագրամներն ըստ հիվանդությունների խմբերի համադրելի չեն: Եթե որևէ տարում տվյալ հիվանդությունից ոչ ոք չի մահացել, ապա դիագրամում համապատասխան սյունը բացակայում է:

«**Մահեր 2017**» սյունում տրված է տվյալ հիվանդությունների խմբի հիվանդություններից հիվանդանոցներում մահացածների բացարձակ թիվը 2017 թ. :

«**Տոկոս՝ A00-T98**» սյունում տրված է տվյալ հիվանդությունների խմբի հիվանդություններից հիվանդանոցում մահացածների տոկոսը՝ հաշվարկված հիվանդանոցային մահերի ընդհանուր թվից: Հարկ է նշել, որ սյան տոկոսների գումարը (առանց առաջին տողի) հավասար չէ 100%-ի, քանի որ կան տողեր, որոնք իրենցից ներկայացնում են այլ՝ ավելի ընդհանուր կոդով տողերի տվյալների մասը: Օրինակ՝ «C00-C97 դրանցից՝ չարորակ նորագոյացություններ (ներառյալ ավշային և արյունաստեղծ հյուսվածքների)» տվյալները ներառված են «C00 - D48 Նորագոյացություններ» տողի տվյալներում:

«**Ռանգ, մահեր 2017**» սյունում գրված է տյալ հիվանդությունների խմբի հերթական համարը, եթե տվյալները դասավորված լինեին ըստ հիվանդություններից 2017 թ.-ին մահերի բացարձակ թվի նվազման: Օրինակ, «C00 - D48 Նորագոյացություններ» տողի այդ սյունում գրված 5-ը նշանակում է, որ այդ հիվանդություններից մահերի բացարձակ քանակը (468), իր չափով 5-րդն է եղել 2017 թ.-ին:


«Ռանգ մահաբերությունից, 2017» սյունում տրված թիվը ցույց է տալիս, թե տվյալ տողի հիվանդությունների խմբից հիվանդանոցային մահաբերությունը որ տեղում է գտնվում աղյուսակում տրված տվյալների շարքում: Օրինակ, «I61 - I62 ներուղեղային և ոչ վնասվածքային ներգանգային այլ արյունազեղումներ» հիվանդությունների խմբի հիվանդություններից հիվանդանոցային մահաբերությունը 2017-ին (35.83%) իր չափով եղել է 2-րդը: Ընդ որում, դա կարևոր է հիվանդանոցային մահաբերության նվազեցման և բուժման որակի բարձրացման տեսակետից, քանի որ այդ հիվանդություններից մահերի բացարձակ քանակը 2017-ին կազմել է 397, կամ բոլոր հիվանդանոցային մահերի 8.1%-ը: Ինչը չի կարելի ասել մահաբերության 100% ունեցող «D65 այդ թվում՝ դեֆիբրինացիայի համախտանիշ» խմբի մասին (այն «D65 - D68 արյան մակարդեղիության խանգարումներ» խմբի մասն է), որից 2017-ին մահացել է ընդամենը 1 մարդ, ինչը բոլոր մահերի 0.02%-ն է, իսկ ըստ մահերի քանակի՝ 57-րդը:

Երկրորդը՝ որպեսզի ընթերցողը հեշտությամբ կողմնորոշի առավել մեծ քանակով մահերի պատճառ դարձած հիվանդությունների խմբերում կազմավորվել է Աղյուսակ 86-ը որում տրված են 2017 թ.ին 100-ից ավելի մեծ քանակով մահերի պատճառ դարձած հիվանդությունների 17 խմբերը:

